ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ
ՈՒՐԱՐՏՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ ԱՐԱՄԱՅԻՍԻ

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ԳՈՐԾԱՌՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

(Հայաստանում և ԱՄՆ-ում բնակվող հայ ընտանիքների օրինակով)

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսություն

Գիտական ղեկավար՝ հ.գ.դ. Ս.Ա. Սեդրակյան

ԵՐԵՎԱՆ - 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3
Գլուխ 1. Ընտանիքը հոգեբանական հետազոտության համատեքստում 12
1.1. Ընտանիքը որպես սոցիալ-հոգեբանական համակարգ.....13
1.2. Ընտանիքի հիմնական բնութագրիչները 31
1.2.1. Ընտանիքի գործառման մակարդակները..... 32
1.2.2. Ընտանիքի կառուցվածքի անհատական և սոցիալական բաղադրիչները.....41
Գլուխ 2. Ընտանիքի գործառման սոցիալ-հոգեբանական օրինաչափությունները..... 63
2.1. Ընտանիքի կյանքի ուղի. ընտանիքի կառուցվածքագործառութային փոխակերպումները 69
2.2. Ընտանիքի մոտիվացիոն և կարգավիճակադերային բաղադրիչների նշանակությունը ամուսնական բախումներում 74
Գլուխ 3. Հայ ընտանիքի վրա հասարակական-միջավայրային և անձնային գործոնների ազդեցության փորձարարական հետազոտություն 82
3.1. ՀՀ՝ Երևանում և ԱՄՆ՝ Գլենդելում բնակվող ազգությամբ հայ ամուսնական զույգերի ամուսնությամբ բավարարվածության աստիճանի համեմատական հետազոտություն..... 87
3.2. Երևանում և Գլենդելում բնակվող հայ ամուսինների՝ մի շարք պահանջմունքների բավարարման համար ընտանիքի նշանակության համեմատական հետազոտություն..... 95
3.3. Երևանում և Գլենդելում բնակվող հայազգի ամուսնական զույգերում դիրքորոշումների համեմատական հետազոտություն 99
3.4. Երևանում և Գլենդելում բնակվող հայազգի ընտանիքներում դերային բաշխվածության հետազոտություն 111
3.5. Երևանում և Գլենդելում բնակվող ամուսինների դերային սպասումների հետազոտություն..... 118
3.6. Հետազոտության արդյունքների ամփոփում 123
Եզրակացություններ.....129
Գործնական առաջարկություններ 130
Օգտագործված գրականություն 131

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը

Խորհրդային տոտալիտար հասարակության սպառումը ԽՍՀՄ կազմի մեջ մտնող ազգություններին (մասնավորապես փոքր ազգություններին և էթնիկական խմբերին) տվեց սեփական մշակույթին և ավանդույթներին վերադառնալու իրական հնարավորություն: Սակայն, մեր օրերում գլոբալիզացիոն (համաշխարհնայնացման) միտումների արագընթաց տարածումն ու մշակութային և աշխարհաքաղաքական անխուսափելի փոփոխությունները դժվարացնում են նոր պայմաններին հարմարվելու և ավանդականը մոդեռնի (արդիականի) հետ զուգակցելու գործընթացը: Այս խնդիրն էլ ավելի զգալի է զարգացող երկներում, որտեղ ներքուստ գերակայող, հաճախ թաքնված, սակայն միևնույն ժամանակ հասարակության հիմնառանցք հանդիսացող ավանդականն ընդդիմանում է «դրսից տրվող» նորամուծությանը: Արդյունքում, բազմաթիվ հասարակական ինստիտուտներ ու կառույցներ հայտնվում և բավականին երկար ժամանակ շարունակում են մնալ այսպես կոչված «անցումային փուլում», իջնում է դրանց գործառնական արդյունավետությունը:

Դրա վառ օրինակ է հայ ընտանիքը որպես հասարակական ինստիտուտ: Ներկայիս Հայաստանի տնտեսական, մշակութային և արժեքային ոլորտներում տեղ գտնող փոխակերպումները նորանոր պայմաններ են առաջադրում ընտանիքների կազմավորման և գոյատևման համար: Շատ դեպքերում ավանդաբար ընդունված մոդելներն ի զորու չեն լինում ապահովելու հայ ընտանիքի արդյունավետ գործառումը փոփոխվող հասարակական միջավայրում, իսկ նոր, առավել արդյունավետ կայացած և հաստատված մոդելներ դեռևս չկան:

Խնդիրն էլ ավելի է խորանում, երբ հայ ընտանիքը կտրվում է գոյատևման ավանդական (տվյալ պարագայում՝ հայկական) միջավայրից և ինչ-ինչ պատճառներով ստիպված է լինում հարմարվել այլ էթնիկական, մշակութային միջավայրի պայմաններին:

Ասվածից պարզ է դառնում, որ ժամանակակից հասարակությունն ընտանիքի ձևավորման և արդյունավետ գործառման օրինաչափությունների վերանայման

պահանջ է դնում: Անընդհատ փոփոխվող արժեհամակարգի պայմաններում ավանդական մեթոդներն ու մոտեցումները շատ դեպքերում ի զորու չեն լուծելու այն խնդիրներն ու դժվարությունները, որոնք ծառացած են ժամանակակից հայ ընտանիքի առջև: Նման պայմաններում հատուկ կարևորությամբ են օժտվում հայ ընտանիքի ձևավորմանն ու արդյունավետ գործառման օրինաչափություններին, հայ ընտանիքի պահպանման սոցիալ-հոգեբանական գործոններին վերաբերող խնդիրները, զգացվում է այնպիսի մոտեցումների մշակման անհրաժեշտություն, որոնք կնպաստեն փոփոխվող արտաքին պայմաններում հայ ընտանիքի լիարժեք, ներդաշնակ և արդյունավետ գործառմանը:

Հետազոտության օբյեկտը

Հետազոտության օբյեկտը ՀՀ Երևանում և ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգի Գլենդել քաղաքում բնակվող հայ ընտանիքներն են:

Հետազոտության առարկան

Հետազոտության առարկան հայ ընտանիքի գործառման վրա ազդող և դրա պահպանմանը նպաստող սոցիալական և հոգեբանական գործոնների փոխադարձ պայմանավորվածությունն է, սոցիալական և անձնային գործոնների փոխգործությունն ու փոխհարաբերությունները:

Աշխատանքի նպատակը

Աշխատանքի նպատակն է բացահայտել հայ ժամանակակից ընտանիքի վրա ազդող սոցիալ-հոգեբանական գործոնների և դրանց փոխգործության առանձնահատկությունները, տարբերակել հայ ընտանիքի արդյունավետ գործառմանն ու պահպանմանը նպաստող գործոնները:

Աշխատանքի խնդիրները

1.Աշխատանքի թեմային վերաբերող գրականություն տեսական վերլուծության միջոցով պարզաբանել՝

-ընտանիքի հոգեբանական հետազոտության հիմնական կողմերն ու առանձնահատկությունները,

- ընտանիքի և դրա գործառման հիմնական առանձնահատկություններն ու մեխանիզմները,

- ընտանիքի վրա ազդող արտաքին և ներքին, հասարակական և անձնային գործոնների փոխազդման և դրսևորման հիմնական օրինաչափությունները,

- հայ ընտանիքի առջև ծառացող խնդիրների շրջանակները և դրանց լուծման հնարավոր հեռանկարները:

2. Տեսական վերլուծության միջոցով ձևակերպել և հիմնավորել վարկած (վարկածներ) և ենթադրություններ, տեսական հիմք ստեղծել հետազոտական ճանապարհով դրանք ստուգելու համար:

3. Առաջադրված վարկածի (վարկածների) և ենթադրությունների ստուգման նպատակով իրականացնել հետազոտություն:

4. Կազմել հետազոտական պլան, ընտրելով համապատասխան մեթոդներ և մեթոդիկաներ, նախանշելով հետազոտության անցկացման հիմնական առանձնահատկությունները (հետազոտության համակազմը, անցկացման վայրը, ժամանակը և այլն) :

5. Հետազոտության միջոցով պարզել՝

-հայ ընտանիքի գործառման վրա ազդող մշակութային, հասարակական և անձնային գործոնների հարաբերակցման որակական և քանակական կողմերը,

-հայ ընտանիքի անդամների դիրքորոշումների, դերային վերագրման և մոտիվացիոն բովանդակությունների սոցիալական միջավայրից կախման բնույթը,

-հայ ընտանիքի վրա ազդող սոցիալ-հոգեբանական գործոնների դերը ընտանիքի պահպանման և ամրապնդման հարցում:

6. Հենվելով հետազոտության արդյունքների վրա անել տեսական և կիրառական առաջարկություններ:

Առաջադրվող վարկած

Արտաքին (հասարակական) գործոնների ազդեցությունը հայ ընտանիքի վրա իրականանում է միջնորդավորված ձևով, ընտանիքի անդամների՝ նրանց պահանջմունքային ոլորտի և կարգավիճակադերային վարքի վրա ազդեցություն գործելու միջոցով: Հետևաբար՝ հայ ընտանիքի պահպանման համար առաջնային է ընտանիքի կառուցվածքային տարրերի և նրա կողմից իրականացվող հասարակական, ընտանեկան և անհատական գործառույթների համապատասխանությունը:

Աշխատանքի մեթոդաբանական և տեսական հիմքերը

Ներկայացվող աշխատանքն, ընդհանուր առմամբ, հենվում է ընտանիքի հետազոտության համակարգային մոտեցման հայեցակարգի վրա, որն առավել ամբողջական տեսքով ներկայացված է Փինսոֆի և Լեբովի [92], Վարգայի և Դրաբկինայի [24], Լիդերսի [51], Չեռնիկովի [75] աշխատություններում: Ընտանիքի անդամների կողմից ընտանեկան դերերի իրականացման օրինաչափությունների դիտարկումը հենվում է դերերի սոցիալ-հոգեբանական տեսության վրա [85,95], որը համապարփակ կերպով ներկայացված է Ս.Սեդրակյանի աշխատությունում [11]:

Աշխատանքի գիտական նորույթը

Հայ ընտանիքի պահպանման, գոյատևման և բարգավաճման խնդիրը լայն արձագանք է ստանում մասնագետների՝ հոգեբանների, փիլիսոփաների, սոցիոլոգների մասնագիտական շրջանակներում: Հայ ընտանիքի հիմնախնդրին նվիրված մի շարք հրապարակումներով հանդես են եկել այնպիսի հետազոտողներ, ինչպիսիք են Ս.Սեդրակյանը [9,10,11,12,13], Ս.Գևորգյանը [3], Ս.Ամիրյանը [2], Հ.Ամիրյանը [1], Ն.Ասատրյանը [1], Ս.Հարությունյանը [6], Ն.Հարությունյանը [5], Ա.Պողոսյանը [1,8], Ն.Հովսեփյանը [7], Ն.Խաչատրյանը [4]:

Նշված հետազոտություններում ու հրապարակումներում դիտարկվում են հայ ընտանիքի պահպանման և արդյունավետ գործառման բազմաթիվ խնդիրներ: Այդուհանդերձ, այդ հետազոտությունները, հիմնականում, անդրադառնում են ընտանիքի, որպես հասարակական կառույցի վրա ազդող կամ արտաքին՝ հասարակական, մշակութային, և կամ ներքին՝ հոգեբանական, գործոններին: Ի տարբերություն դրան, *ներկայացվող ատենախոսության մեջ ուշադրության կենտրոնում է հայտնվում ոչ թե հասարակական կամ անձնային գործոնների ազդեցությունը հայ ընտանիքի վրա, այլ այդ իսկ գործոնների փոխադարձ ազդեցության, փոխպայմանավորվածության խնդիրը, որի լուծումը կոչված է լրացնելու հայ ընտանիքի պահպանմանն ու արդյունավետ գործառմանն ուղղված հետազոտությունների շարքը:*

Ներկայացվող աշխատանքում առաջին անգամ՝

1. համեմատական հետազոտություն է իրականացվում տարբեր հասարակական-մշակութային միջավայրերում գործառող հայ ընտանիքների միջև,
2. հատուկ կերպով հետազոտվում են հայ ընտանիքի պահպանման արտաքին և ներքին, սոցիալական և հոգեբանական գործոնների փոխազդման մեխանիզմները,
3. հետազոտության է ենթարկվում հայ ընտանիքի վրա ազդող արտաքին և ներքին գործոնների փոխկապակցվածությունը,
4. հետազոտությամբ բացահայտվում է կենսամիջավայրի կողմից թելադրվող պայմանների ազդեցությունը ոչ թե անմիջականորեն ընտանիքի վրա, այլ միջնորդավորված՝ ընտանիքի առանձին անդամների վրա ունեցած ազդեցության տեսանկյունից:

Աշխատանքի տեսական նշանակությունը

Աշխատանքում ներկայացված տեսակետը հնարավորություն է տալիս վերանայել ընտանիքի հոգեբանական հետազոտության տեսական կանխադրույթները, վերասահմանել որոշ հասկացություններ: Մասնավորապես առաջարկվում է ընտանիքի գործառույթները դիտարկել երեք՝ հասարակական, ընտանեկան և անձնային մակարդակներում, հասարակական գործոնների ազդեցությունը դիտարկել որպես միջնորդավորված ազդեցություն, ընտանիքի արդյունավետ և ներդաշնակ գործառումը դիտարկել որպես ընտանիքի միջավայր հանդես եկող հասարակության մեջ և ընտանիքի առանձին անդամների մոտ առկա ընտանիքի հետ կապված պահանջմունքների և պատկերացումների համապատասխանության արդյունք: Այս առաջարկությունների ընդունումը կնպաստի հայ ընտանիքի հոգեբանական հետազոտության տեսական զինանոցի հարստացմանը:

Աշխատանքի գործնական նշանակությունը կապված է տեսական վերլուծությամբ և փորձարարական հետազոտությամբ ստացված արդյունքների հիման վրա հայ ընտանիքի արդյունավետ գործառման, ներդաշնակ գոյատևման ու պահպանման հոգեբանական միջոցառումների կազմակերպման և հոգեբանական

ազդեցության մեթոդների մշակման հետ: Աշխատանքի արդյունքների կիրառումը կնպաստի հայ ընտանիքի կենսունակության և գործառման բարձրացմանը:

Պաշտպանության ներկայացվող դրույթներ

Պաշտպանությանը ներկայացվում են հետևյալ դրույթները՝

1. Հասարակական գործոնների ազդեցությամբ ընտանիքի փոփոխությունները կապված են դրա անդամների պահանջմունքային և կարգավիճակադերային ոլորտների փոփոխությունների հետ:

2. Ընտանիքի վրա հասարակական միջավայրի ազդեցությունը կարող է իրականանալ ընտանիքի վիճակագրական տվյալների տատանման միջոցով:

3. Ամուսնությամբ բավարարվածության կարևոր գործոններն են ամուսինների դերային համապատասխանությունն ու ընդհանուր դիրքորոշումների առկայությունը:

4. Կախված հասարակական գործոնների ազդեցությանը ցույց տրվող դիմադրության աստիճանից՝ ընտանիքը կարող է կործանվել կամ շարունակել արդյունավետ գործառումը:

5. Հայ ընտանիքի պահպանման և արդյունավետ գործառման կարևորագույն պայման է ընտանիքի, որպես բաց համակարգի դրսևորման հասարակական, ընտանեկան և անհատական մակարդակների բովանդակային համապատասխանությունը:

Հետազոտության կազմակերպում

Առաջ քաշված վարկածի ստուգման և մեր առջև դրված խնդիրների լուծման նպատակով իրականացվել է հետազոտություն: Հետազոտությունն, իր բնույթով համեմատական է և նպատակ ունի բացահայտելու տարբեր սոցիալ-մշակութային միջավայրերում (տվյալ դեպքում ՀՀ Երևան և ԱՄՆ Գլենդել քաղաքներում) բնակվող ազգությամբ հայ ամուսնական զույգերի դիրքորոշումների, համատեղելիության, մոտիվացվածության և ընդհանրապես, համատեղ կենսագործունեության նկատմամբ վերաբերմունքի տարբերությունները, դրանց կախվածությունը սոցիալ-մշակութային միջավայրից: Հետազոտությունն ուղղված է հայ ընտանիքի գործառման վրա ազդող հասարակական-միջավայրային և անձնային գործոնների փոխադարձ կապի, հայ ընտանիքի պահպանման և գոյատևման ընթացքում դրանց դերի պարզաբանմանը:

Հետազոտության համակազմը

Հետազոտությունն իրականացվել է Միացյալ Նահանգներում և Հայաստանի Հանրապետությունում: Հարցման են ենթարկվել ՀՀ Երևան և ԱՄՆ Գլենդել քաղաքներում բնակվող առնվազն մեկ երեխա ունեցող 100-ական ամուսնական զույգ: Ընդ որում, երկրորդ խմբի ընտրության համար որպես նախապայման ընդունվել է ԱՄՆ-ում առնվազն 15 տարի բնակվելու չափանիշը:

Հետազոտության մեթոդները

Հետազոտությունն իրականացվել է հարցարանային մեթոդով: Կիրառվել են «Ամուսնական զույգի դիրքորոշումների չափման», «Ամուսնությամբ բավարարվածության», «Անձնային պահանջմունքների բավարարման ընթացքում ընտանիքի դերի բացահայտման», «Ընտանիքում դերերի բաշխվածության որոշման» հարցարաններն ու «Զուգընկերների դերային սպասումների որոշման» մեթոդիկաները:

Աշխատանքի կառուցվածքը

Ներկայացվող աշխատանքը կազմված է ներածությունից, տեսական և փորձարարական մասերից, գործնական առաջարկներից, եզրակացություններից և գրականության ցանկից:

Առաջին՝ «Ընտանիքը որպես հոգեբանական հետազոտության առարկա» տեսական մասը վերաբերում է ընտանիքի ընդհանուր հոգեբանական խնդիրներին: Այստեղ ձևակերպվում է «ընտանիք» հասկացության աշխատանքային սահմանումը, ցույց է տրվում, որ ժամանակակից ընտանքին առավելապես հոգեբանական կառույց է, այսինքն՝ բնութագրվում և սոցիալական նմանատիպ խմբերից տարբերվում է մի շարք հոգեբանական գործոններով, մասնավորապես՝ ընտանիքի անդամների կողմից սեփական միության ընկալման և գնահատման չափանիշով:

Աշխատանքի այս հատվածում ցույց է տրվում նաև, որ ընտանիքը բաց համակարգ է և գտնվում է մի կողմից իր կենսամիջավայրում շրջանառվող հասարակական, մյուս կողմից, իր իսկ անդամների անձնային պատկերացումների և պահանջմունքների հատման կետում: Ընտանիքը, որպես ինքնուրույն միավոր, իրականացնում է որոշակի գործառույթներ, որոնք անմիջականորեն կապված են հասարակական, բուն ընտանեկան և անձնային պահանջմունքների հետ և հանդես են

գալիս որպես դրանց բավարարմանն ուղղված դրսևորումներ: Հետևաբար ընտանիքի գործառույթներն իրականանում են հասարակական, ընտանեկան և անձնային մակարդակներում: Գրականության մեջ այդ մակարդակները հիմնականում դիտարկվում են որպես հարաբերականորեն առանձնացված, հետևաբար տարբերակվում են նաև ընտանիքի հասարակական, ընտանեկան և անձնային գործառույթները: Այդուհանդերձ, ներկայացվող աշխատության մեջ փորձ է արվում ցույց տալ, որ ընտանիքի յուրաքանչյուր գործառույթ անհրաժեշտաբար դրսևորվում է բոլոր երեք մակարդակներում, առնչվելով հասարակության կողմից ներկայացվող պայմանների, ընտանիքի առանձին անդամի անձնային, ինչպես նաև հենց ընտանիքի, որպես մեկ ամբողջական համակարգ, պահանջմունքների հետ: Ըստ այդմ, ցույց է տրվում, որ ընտանիքի գործառույթների դրսևորման նշված երեք մակարդակների միջև համապատասխանության աստիճանը որոշում է ընտանիքի գործառման արդյունավետությունը:

Հետևաբար, ընտանիքի ձևավորման և զարգացման գործընթացում առաջ եկող բարդություններն ու դժվարություններն անմիջականորեն կապված են վերը նշված երեք մակարդակների միջև առկա խզումների հետ: Տեսական վերլուծության միջոցով ցույց է տրվում, օրինակ, որ եթե ընտանիքի առջև դրված հասարակական պահանջների իրականացումը խոչընդոտում է ընտանիքի առանձին անդամի ընտանիքի հետ կապված պահանջմունքների բավարարմանը, ապա տվյալ ընտանիքը դադարում է բավարարել կամ հասարակական, կամ անձնային պահանջմունքները: Եվ, քանի-որ հասարակությունն իր էությամբ առավել իներտ և հարաբերականորեն կայուն գոյացություն է, ապա փոխակերպումները հիմնականում տեղ են գտնում անձնային մակարդակում: Ընտանիքն անձի համար կորցնում է իր գրավչությունը, դառնում է ավելորդ ծանրություն:

Այս երևույթն իր պարզաբանումն է ստանում տեսական վերլուծության միջոցով: Երկրորդ տեսական բաժինը վերաբերում է ընտանիքի գործառման օրինաչափությունների բացահայտմանը, ընտանիքը դիտարկվում է իր զարգացման մեջ: Հատուկ ուշադրության է արժանանում ընտանեկան կոնֆլիկտների ու ճգնաժամերի խնդիրը, դիտարկվում են դրանց առաջացման և դրսևորման

հոգեբանական հայեցակարգեր: Տեսական քննարկման այս հատվածում ցույց է տրվում, որ ընտանեկան կոնֆլիկտների և ճգնաժամերի հիմքում, այլ գործոնների շարքում (ընտանիքի անդամների հոգեկան, սոցիալական և սեռական անհամատեղելիություն, հետաքրքրությունների տարբերություն, ընտանեկան ընդհանուր շահերի և նպատակների բացակայություն, ընտանեկան դերերի անհամաչափ և անհամապատասխան բաշխում և այլն) կարող է ընկած լինել հենց հասարակական և անձնային պատկերացումների և պահանջմունքների անհամապատասխանությունը: Իհարկե, այստեղ մեծ է նաև ընտանիքի անդամների փոխհարաբերությունների և յուրաքանչյուր անդամի անձնային որակների նշանակությունը: Այդուհանդերձ, երբ ընտանիքը դիտարկվում է զարգացման մեջ և համեմատվում են դրա զարգացման հերթական փուլերը, պարզ է դառնում, որ այդ իսկ փուլերն իրարից տարբերվում են հենց ընտանիքի առջև դրվող հասարակական պահանջների և ընտանիքի հետ կապված անձնային պահանջմունքների փոխհարաբերության տեսանկյունից: Ընտանիքի զարգացման տարբեր փուլերում տարբեր են նաև այդ փոխհարաբերությունները, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ կոնֆլիկտային և ճգնաժամային փուլերում անձնային և հասարակական պատկերացումների ու պահանջմունքների միջև խզումը պետք է որ հասնի առավելագույն նշանակության:

Երրորդ գլուխն իր բնույթով փորձարարական է և ներառում է հինգ մեթոդիկաների կիրառման արդյունքում ստացված տվյալների ներկայացումը, դրանց մաթեմատիկական և համեմատական վերլուծության արդյունքները: Հետազոտության են ենթարկվում Երևանում և Գլենդելում բնակվող ազգությամբ հայ ամուսնական զույգեր՝ ամուսնությամբ բավարարվածության և դրա հետ որոշ վիճակագրական ցուցանիշների կապի, ամուսինների դիրքորոշումների և դրանց համապատասխանության, ամուսինների՝ ընտանիքի հետ կապված պահանջմունքների, ընտանիքում դերային բաշխվածության, դերային սպասումների տեսանկյունից: Հետազոտության արդյունքները համակարգվում և ամփոփվում են:

Գլուխ 1. ԸՆՏԱՆԻՔԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բավականին դժվար է տալ ընտանիքի համընդգրկուն, ունիվերսալ սահմանում: Մի կողմից դրան խոչընդոտում է այն հանգամանքը, որ ընտանիքը, որպես հասարակական կառույց, հետազոտվում է բազմաթիվ գիտությունների կողմից: Շատ դեպքերում համահունչ չեն դրա սոցիոլոգիական, մշակութաբանական, մարդաբանական, հոգեբանական, մանկավարժական, հոգեբուժական, դեմոգրաֆիական սահմանումները: Օրինակ, եթե մանկավարժության համար երեխաներ չունեցող ընտանիքի հետազոտությունը զուրկ է իմաստից, ապա սոցիոլոգիական հետազոտության մեջ այն ներկայացնում է որոշակի հետաքրքրություն: Ընտանքի անդամների միջև իրավաբանորեն ձևակերպված փոխհարաբերությունները տնտեսագիտական հետազոտության ընթացքում չունեն որոշիչ նշանակություն, այն դեպքում, երբ դրանք գտնվում են իրավունքի տեսանկյունից ընտանիքի հետազոտության կիզակետում: Այնպես որ, ինչպես նշում է Վոլկովը, ընտանիքի հետազոտության ընթացքում յուրաքանչյուր առանձին գիտություն առանձնացնում է ընտանիքի գործառման և զարգացման իր համար առավել կարևոր կողմերը: Տնտեսական գիտությունները հետազոտում են ընտանիքը, որպես արտադրող և սպառող հասարակական միավոր, սոցիոլոգիական հետազոտության համատեքստում ընտանիքը հանդես է գալիս, որպես ամուսնության վրա հիմնված և որոշակի հասարակական գործառույթներ իրականացնող հասարակական ինստիտուտ, ազգագրական հետազոտություններն անդրադառնում են տարբեր էթնիկական բնութագրիչներ ունեցող ընտանիքների կենցաղի առանձնահատկություններին [28, էջ 11]: Հոգեբուժության տեսանկյունից ընտանիքը հանդես է գալիս որպես հոգեկան ախտահարումներով անհատի կենսամիջավայր և հատուկ ուշադրության են արժանանում ընտանիքում նրա կենսագործունեության առանձնահատկություններն ու նրա նկատմամբ ընտանիքի այլ անդամների վերաբերմունքը [82, էջ 91]: Հետևաբար, առանձին գիտակարգերում ընտանիքի, որպես հետազոտության առարկայի սահմանումները որոշակիորեն կարող են տարբերվել:

Մյուս կողմից ընտանիքի ունիվերսալ սահմանումը դժվարանում է՝ կախված ինչպես պատմական համատեքստում, այնպես էլ ներկայումս ընտանիքների բազմաթիվ ձևերի առկայության հետ: Հաճախ դժվար է լինում «ընտանիք» հասկացության ներքո համախմբել ընտանիքի այնպիսի տարատեսակներ, ինչպիսիք են՝ պոլիգամ և մոնոգամ ընտանիքները, բջջային ընտանիքն ու մեծ ընտանիքը, ոչ լրիվ ընտանիքն ու ընդլայնված ընտանիքը, ավտորիտար և էգալիտար ընտանիքները, քաղաքացիական, իսկ վերջին ժամանակներում նաև հոմոսեքսուալ և հետերոսեքսուալ ամուսնությունների վրա հիմնված ընտանիքները:

Նման պայմաններում առաջ է գալիս հետազոտության ուղղվածությունից և նպատակներից կախված, ընտանիքի, որպես հետազոտության առարկայի սահմանման անհրաժեշտություն: Բացառություն չի կազմում նաև ընտանիքի հոգեբանական հետազոտությունը: Այստեղ պետք է շեշտադրվեն ընտանիքի գոյացման և գործառման հոգեբանական կողմերը, բացահայտվեն ընտանիքի անդամների միջև առկա հոգեբանական կապերը, դրանց ամրության վրա ազդող հոգեբանական գործոնները: Այդ նպատակով, քննարկման այս հատվածում մենք կփորձենք ուրվագծել «ընտանիք» հասկացության, որպես հոգեբանական հետազոտության առարկայի շրջանակները՝ վերլուծության ենթարկելով դրա առավել լայն՝ մարդաբանական, սոցիոլոգիական, ազգագրական սահմանումները:

1.1.Ընտանիքը որպես սոցիալ-հոգեբանական համակարգ

Այժմ փորձենք համեմատական վերլուծության ենթարկել «ընտանիք» հասկացության մի քանի սահմանումներ: Առավել ընդհանուր և հետազոտական առանձին ուղղությունների կողմից ընդունելի սահմանման համաձայն ընտանիքը բոլոր հասարակություններին հատուկ, մարդկային գոյության համար անհրաժեշտ և ունիվերսալ հասարակական կառույց (ինստիտուտ) է [81, էջ 4]: Ըստ խորհրդային սոցիոլոգ Խարչևի՝ «Ընտանիքը ամուսինների, ծնողների և որդիների միջև առկա փոխհարաբերությունների պատմականորեն կոնկրետ համակարգ է, փոքր խումբ, որի անդամները կապված են ամուսնական կամ ազգակցական կապերով, կենցաղի ընդհանրությամբ ու փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ և որի հասարակական անհրաժեշտությունը պայմանավորված է ազգաբնակչության

ֆիզիկական և հոգևոր վերարտադրման պահանջմունքով [73, էջ 66]»: Ամերիկացի մարդաբան Ջորջ Պետեր Մարդոկն ընտանիքը սահմանում է որպես՝ «Հասարակական խումբ, որը բնութագրվում է համատեղ բնակությամբ, տնտեսական համագործակցությամբ և վերարտադրությամբ: Այն իր մեջ ներառում է երկու սեռերի առնվազն երկու չափահաս մարդկանց, որոնց միջև առկա են սոցիալապես հաստատված սեռական հարաբերություններ և մեկ կամ մի քանի սեփական կամ որդեգրած երեխաներ»[90, էջ 2]: Հայ հոգեբան Սեդրակ Սեդրակյանը տալիս է ընտանիքի հետևյալ սահմանումը՝ «Ընտանիքը ամուսնության փաստի պաշտոնական գրանցման հիման վրա ստեղծված սոցիալական փոքր խումբ է, հասարակության հիմնական «բջիջը», որը կազմված է ամուսիններից, նրանց երեխաներից, ինչպես նաև այլ ազգականներից: Ընտանիքի ստեղծման հիմնական նպատակը սերնդի վերարտադրությունն է, թեև հասարակության մեջ և իր անդամների հանդեպ այդ սոցիալական խումբն ունի մի շարք այլ գործառույթներ» [11, էջ 86]:

Ինչպես տեսնում ենք, բերված սահմանումները տարբեր հետազոտական բնագավառներից են (սոցիոլոգիա, մարդաբանություն, հոգեբանություն): Այդուհանդերձ, դրանք ի հայտ են բերում որոշակի ընդհանրություններ, մասնավորապես՝ ընտանիքը դիտարկվում է որպես սոցիալական միավոր՝ կառույց կամ խումբ: Ընդ որում, սահմանումների գերակշռող մասն անդրադառնում է ընտանիքի գործառութային և կառուցվածքային բնութագրիչներին, ընտանիքի անդամների միջև կապի բնույթին: Սակայն ոչ բոլոր դեպքերում են դրանք հետաքրքրություն ներկայացնում հոգեբանական հետազոտության համար: Ըստ այդմ, անհրաժեշտ է բացահայտել և առանձնացնել ընտանիքի, որպես հասարակական խմբի հոգեբանական կողմերը, դրա գործառութային և կառուցվածքային այն յուրահատկությունները, որոնք առավել արժեքավոր են հոգեբանության տեսանկյունից, ընտանիքի անդամների միջև առկա այն կապերը, որոնք իրենց էությամբ հոգեբանական են: Դրանով իսկ փորձ կարվի ուրվագծել ընտանիքի հոգեբանական հետազոտության շրջանակները:

Ընտանիքը, որպես սոցիալական խումբ, ի հայտ է բերում որոշակի յուրահատկություններ, որոնք այն առանձնացնում են այլ տիպի սոցիալական խմբերից:

Մեր հետազոտության համար առավել կարևորվում են ընտանիքի այնպիսի բնութագրիչները, որոնք ներկայացնում են ընտանիքի հոգեբանական կողմերը և որոնց շնորհիվ ընտանիքը վերածվում է հոգեբանական հետազոտության առարկայի: Այնպես որ, փորձենք դուրս բերել այդ բնութագիրիչները:

Նախ անդրադառնանք ընտանիքի, որպես սոցիալական խմբի առանձնահատկություններին: Որոշ հետազոտողներ (Ալյոշինա, Գոզման) որպես այդպիսիք առանձնացնում են՝

▪ ընտանիքի նորմատիվությունը – յուրաքանչյուր մշակույթ ունի ընտանիքի և ամուսնական փոխհարաբերությունների մասին հաստատված պատկերացումներ, որոնցով որոշում է ընտանիքի բնույթը,

▪ ընտանիքի կազմի հետերոգենությունը (բազմատարրությունը) – ժամանակակից ընտանիքը կազմված է սեռային, տարիքային կամ այդ չափանիշներից գոնե մեկով տարբերվող անհատներից,

▪ ընտանիքի փակ բնույթը – ընտանիքի անդամ դառնալու հնարավորությունը խիստ սահմանափակ է և կանոնակարգված: Ընտանիքից, որպես սոցիալական խմբից դուրս գալու հնարավորությունը նույնպես խստորեն սահմանափակված է:

▪ ընտանիքի բազմաֆունկցիոնալությունը – ընտանիքին իրականացնում է բազմաթիվ, որոշ դեպքերում, անհամատեղելի գործառույթներ:

▪ ընտանիքի անդամի ամբողջական ընդգրկվածությունը – անհատն ընտանեկան կեպրի մեջ ընդգրկվում է ամբողջապես:

▪ ընտանիքի պատմականությունը – ընտանիքը երկարատև և բավականին կայուն խումբ է [18, էջ 68]:

Ներկայացնելով Ալյոշինայի և Գոզմանի տեսակետը՝ Անդրեևան, այնուամենայնիվ, նշում է, որ բերված առանձնահատկությունները կարող են հանդիպել նաև այլ սոցիալական խմբերում (օրինակ՝ այնպիսի մասնագիտական աշխատանքային կոլեկտիվում, ինչպիսին է բուհ-ական ամբիոնը): Նա առաջարկում է նշված առանձնահատկություններին ավելացնել ազգակցական կապի գործոնը: Ըստ Անդրեևայի, ընտանիքի, որպես սոցիալական փոքր խմբի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ ընտանիքը ներկայանում է որպես ազգակիցների

(կամ դրանց հավասարեցված անձանց, օրինակ՝ ամուսնության կամ խնամակալության ձևավորման միջոցով) խումբ: Ընդ որում, առաջնային են համարվում արյունակցական կապերը:

Սակայն, իր այս տեսակետը ներկայացնելուց անմիջապես հետո Անդրեևան տալիս է ընտանիքի հետևյալ սահմանումը՝ «Ընտանիքը կարելի է սահմանել որպես այնպիսի ազգակիցների (կամ դրանց հավասարեցված անձանց) կոնտակտային խումբ, որոնք կազմում են մեկ ամբողջություն և իրենց ընկալում են որպես այդ իսկ ամբողջությունը» [18, էջ 68]: Այս սահմանմամբ Անդրեևան ընդգծում է ընտանիքի անդամների կողմից իրենց միության սուբյեկտիվ ընկալման, գնահատման դերը, ինչն արդեն զուտ հոգեբանական գործոն է: Առայժմ միայն գրանցենք այս փաստը՝ ընդգծելով, որ *այլ սոցիալական փոքր խմբերից ընտանիքի տարբերության հիմքում կարող են ընկած լինել ընտանիքի անդամների կողմից սեփական միության ընկալման ու գնահատման յուրահատկությունները:*

Ընտանիքի, որպես սոցիալական փոքր խմբի յուրահատկությունների այլ մեկնաբանության ենք հանդիպում Շնեյդերի մոտ: Նա մասնավորապես նշում է հետևյալ յուրահատկությունները՝

- համընտանեկան ոչ թե մեկ, այլ մի քանի նպատակների առկայություն, որոնք կարող են փոփոխվել ընտանիքի զարգացման գործընթացում,
- ընտանիքի անդամների հետաքրքրությունների և դիրքորոշումների մասնակի տարբերությունները,
- ամուսնական զույգի առկայություն, որոնց փոխհարաբերությունները զգալիորեն որոշում են ընտանիքում փոխհարաբերությունների բնույթը,
- ընտանիքում տարբեր սերունդների ներկայացուցիչների ընդգրկվածությունը և այլ խմբերի համեմատությամբ ընտանիքի անդամների միջև մոտ ծանոթության առավել մեծ ժամանակաշրջանը,
- ընտանիքի անդամները կապված չեն համատեղ գործունեությամբ այն իմաստով, ինչ իմաստով կապված են այլ խմբերի անդամները,
- ընտանեկան փոխհարաբերությունների բազմակողմանիությունը, նշանակությունն ու փոխկապվածությունը,

▪ ընտանիքի անդամների խոցելիությունը [77, էջ 26]:

Դժվար չէ նկատել, որ բերված առանձնահատկություններից մի քանիսը կարող են հանդիպել նաև սոցիալական այլ խմբերում: Օրինակ՝ խմբային ոչ թե մեկ, այլ մի քանի, ժամանակի ընթացքում փոփոխվող նպատակների առկայությունը, խմբի անդամների հետաքրքրությունների և դիրքորոշումների մասնակի տարբերությունները, խմբում տարբեր սերունդների անհատների ներգրավվածությունը կարող են հանդիպել նաև, եթե օգտվենք Անդրեևայի օրինակից, բուհ-ական ամբիոններում: Խմբի անդամների համատեղ գործունեության մեջ ներգրավվածությունը կարող է կրել իրադրական բնույթ, անկախ հանգամանքից՝ այդ խումբն ընտանիք է, թե մեկ այլ կառույց: Ինչ վերաբերում է ընտանեկան փոխհարաբերությունների բազմակողմանիությանը, նշանակությանն ու փոխկապվածությանը, ինչպես նաև ընտանիքի անդամների խոցելիությանը, ապա այս բնութագրիչները խիստ անհատական են և հատուկ չեն բոլոր ընտանիքներին, ընտանիքի բոլոր անդամներին: Ավելին, դրանք կարող են հանդիպել նաև սոցիալական այլ փոքր խմբերում:

Ասվածից պարզ է դառնում, որ ընտանիքը, սոցիալական այլ փոքր խմբերից առանձնացնող Շնեյդերի կողմից ներկայացվող առանձնահատկություններից մեկն է, որ հատուկ է միայն ընտանիքին: Դա ամուսնական զույգի առկայությունն է, ինչը, սակայն, դարձյալ պարտադիր չէ բոլոր ընտանիքների համար: Այդուհանդերձ, որոշ դեպքերում այն հանդես է գալիս որպես բավարար պայման և դրա առկայության դեպքում սոցիալական փոքր խումբը կարող է վերածվել ընտանիքի:

Այլ պատկերի ենք հանդիպում Սեդրակ Սեդրակյանի դասակարգման մեջ: Այստեղ նշված առանձնահատկությունների զգալի մասը վերաբերում է ընտանիքի անդամների միջև առկա կապերին: Սեդրակյանը ներկայացնում է ընտանիքը որպես սոցիալական խումբ բնութագրող հետևյալ սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները՝

1. Ընտանիքը մարդկանց փոքր խումբ է, որի անդամներն անմիջական և կրկնվող հարաբերությունների մեջ են միմյանց հետ,

2. Այն հարաբերականորեն կայուն սոցիալական խումբ է, որի անդամների փոխհարաբերությունները ոչ թե անցողիկ են, այլ երկարատև և ամուր,

3. Այնպիսի խումբ է, որի անդամները, որպես կանոն, ապրում են համատեղ նույն հարկի տակ՝ միևնույն տանը կամ բնակարանում <...>: Այն դեպքերը, երբ նույն ընտանիքի անդամները՝ հատկապես ամուսինները, ապրում են առանձին, բնութագրական չեն ընտանիքի համար: Ընտանիքի անդամների առանձին ապրելը կարող է պայմանավորված լինել արտաքին պատճառներով, լինել ստիպողական և այլն:

4. Ընտանիքը այնպիսի խումբ է, որի անդամները միմյանց կապված են ամուսնական (կին և տղամարդ) կամ արյունակցական կապերով (ծնողներ-երեխաներ, երեխա-երեխա՝ եղբայր և քույր): Ընտանիքը կարող է ունենալ նաև որդեգրված անդամներ:

5. Ընտանիքը անհատական կենցաղի կազմակերպման լավագույն ձևն է [11, էջ 17]:

Ներկայացվող առանձնահատկություններից երեքը (1;2;4) վերաբերում են ընտանիքի անդամների փոխհարաբերություններին: Եվ, չնայած ներխմբային հարաբերությունների անմիջականությունը, կրկնողականությունը, երկարատևությունն ու ամրությունը կարող են հանդիպել նաև այլ սոցիալական խմբերում, այդուհանդերձ, Սեդրակյանի դասակարգումից երևում է, որ այլ խմբերից ընտանիքի առանձնացման համար դրանք ունեն էական նշանակություն: Եվ, եթե Ալյոշինայի ու Գոզմանի մոտ ընտանիքն այլ սոցիալական խմբերից առանձնացնող գործոնների շարքում ընդհանրապես բացակայում են ներխմբային միջանձնային փոխհարաբերություններին վերաբերող գործոնները, ապա Սեդրակյանի մոտ դրանք կազմում են մեծամասնություն: Մեր կարծիքով վերջին մոտեցումն առավել հոգեբանական է (Ալյոշինան և Գոզմանը տալիս են ընտանիքի ֆենոմենալիստական, մակերևութային առանձնահատկությունները) և ավելի արդյունավետ կերպով կարող է ծառայել հոգեբանական հետազոտությանը:

Այսպիսով, սոցիալական այլ փոքր խմբերից ընտանիքի առանձնացման հիմնական չափանիշներն առավելապես վերաբերում են ընտանիքի անդամների միջև կապերի բնույթին: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ *ընտանիքն այնպիսի փոքր սոցիալական խումբ է, որի անդամները կապված են ամուսնական կամ ազգակցական*

(կամ դրանց հավասարեցված) անմիջական, կրկնվող, երկարատև կապերով: Եթե այս եզրահանգումը համադրենք վերը արված եզրահանգման հետ, այն է՝ այլ սոցիալական փոքր խմբերից ընտանիքի տարբերության հիմքում կարող են ընկած լինել ընտանիքի անդամների կողմից սեփական միության ընկալման ու գնահատման յուրահատկությունները, ապա կստանանք ընտանիքին այլ սոցիալական խմբերից առանձնացնող հետևյալ դրույթը՝

ընտանիքն այնպիսի սոցիալական խումբ է, որի անդամները գտնվում են ամուսնական, ազգակցական կամ դրանց հավասարեցված անմիջական, կրկնվող, երկարատև կապերի մեջ, ընդունում և գիտակցում են այդ կապերը[1], դրանց միջոցով կազմում են մեկ կառուցվածքագործառութային ամբողջություն և իրենց զգում, ընկալում կամ ընդունում են որպես այդ իսկ ամբողջության մաս:

Հետազոտության առարկայի որոշակիացման փորձերի արդյունքում մենք առանձնացրեցինք ընտանիքն այլ սոցիալական խմբերից, որոշեցինք հետազոտության ընթացքում ընտանիքի, որպես սոցիալ-հոգեբանական կառույցի մեզ առավելապես հետաքրքրող կողմերն ու դրսևորումները: Այդուհանդերձ, հետազոտության առարկայի բնույթն ու շրջանակները որոշվում են նաև մեթոդաբանական այն կանխադրույթներով, որոնք դրվում են հետազոտության հիմքերում: Հետևաբար, հետազոտության առարկայական դաշտի որոշակիացման համար անհրաժեշտ է նախանշել հետազոտության մեթոդաբանական հիմքերը:

Նախ նշենք, որ հատուկ գրականության մեջ առանձնացվում են ընտանիքի հետ հոգեբանական աշխատանքի որոշակի ուղղություններ, որոնք տարբերվում են ինչպես իրենց մեթոդաբանությամբ, այնպես էլ աշխատանքի նպատակային ուղղվածությամբ: Հետևաբար, դրանցում տարբեր է նաև ընտանիքի բնույթի և նշանակության հասկացումը: Նման պայմաններում առաջ է գալիս ընտանիքի հոգեբանական հետազոտության և ընտանիքի հետ տարվող հոգեբանական աշխատանքների առանձին ուղղությունների համակարգման անհրաժեշտություն:

Առավել լայն իմաստով ընտանիքի հետ հոգեբանական աշխատանքներն իրականացվում են «Ընտանիքի հոգեբանության» շրջանակներում: Ըստ սահմանման

[1] Մասնավոր դեպքերում (նորածին և մանկահասակ երեխաներ, գիտակցության կորուստով հիվանդներ և այլն) այդ կապերը կարող է գիտակցել ընտանեկան փոխհարաբերությունների միայն մի կողմը:

«Ընտանիքի հոգեբանությունը» հոգեբանության միջգիտակարգային բնագավառ է, որն իր մեջ ներառում է սոցիոլոգիական, տնտեսագիտական, փիլիսոփայական, պատմագիտական, իրավաբանական, դեմոգրաֆիական, ազգաբանական և այլ գիտական բնագավառների հետազոտություններ: Ընտանեկան հոգեբանության տվյալները կազմում են այն հիմքը, որի վրա կառուցվում և գործնականում կիրառվում են ընտանիքի օգնության սոցիալական, հոգեբանական և հոգեթերապիական տարբեր ծրագրեր: Ընտանիքի և ամուսնության հետազոտություններն առաջին հերթին կոչված են բացահայտելու այն պայմաններն ու գործոնները, որոնք ազդում են ընտանիքի բարեկեցության և դրա անդամների հոգեկան առողջության վրա [44, էջ 11]:

Ինչպես տեսնում ենք, բերված սահմանման մեջ որոշակիորեն ուրվագծվում են ընտանիքի հոգեբանության երկու հիմնական՝ հետազոտական և կիրառական կողմերը: Ընտանիքի հոգեբանության կիրառական կողմը ներկայանում է երկու ձևով՝ որպես ընտանիքի հոգեթերապիա և որպես ընտանիքի հոգեբանական խորհրդատվություն: Ընտանիքի թերապիան՝ «լայն հասկացություն է, որով նշանակվում է տարբեր կենսաբանական, հոգեբանական և սոցիալական (biopsychosocial) դժվարություններ ունեցող ընտանիքների հետ աշխատանքի մեթոդների շարքը» [80, էջ 3]:

Սակայն ոչ բոլոր դեպքերում է ընտանիքը հանդես գալիս որպես հոգեթերապևտիկ միջամտության նպատակակետ: Որոշ դեպքերում ընտանիքը դիտարկվում է որպես ընտանիքի անդամի կենսագործունեության միջավայր և նրա վրա թերապիական ազդեցություն գործելու միջոց: Այս պարագայում՝ «…հիվանդը (այսինքն նա, ում պատճառով ընտանիքը դիմել է խորհրդատվության) դիտարկվում է ոչ թե որպես բժշկական տեսանկյունից հիվանդ, այլ, ավելի շուտ որպես դիսֆունկցիոնալ ընտանեկան համակարգի տարր: Ընտանեկան թերապիան ենթադրում է երեխային կամ մեծահասակ հիվանդին ընտանիքի, որում նա հիվանդացել կամ ձեռք է բերել տարատեսակ շեղումներ, միջոցով թերապևտիկ օգնություն ցույց տալու հնարավորություն: Համապատասխանաբար, աշխատանքի կիզակետում հայտնվում են ո՛չ թե ընտանիքի անդամների ներհոգեկան խնդիրները, այլ ընտանեկան փոխազդեցությունների, ընտանիքի կառուցվածքի և գործընթացների

ձևերը (տիպերը): Այսպիսով, ընտանեկան թերապիայի նպատակը ֆունկցիոնալ ընտանեկան կազմակեպություն ձևավորելու համար պայմանների ստեղծումն է, որը կապահովի ընտանիքի յուրաքանչյուր անդամի ներուժային հնարավորությունների առավելագույն աճ» [75, էջ 5]:

Ինչպես տեսնում ենք, այս դեպքում թերապիական ազդեցության գլխավոր առարկան ընտանիքի առանձին անդամն է, իսկ ընտանիքը հանդես է գալիս որպես այդ իսկ ազդեցության միջոց: Ընդ որում, թերապիական ազդեցությունը կարող է և ուղղված լինել ամբողջական ընտանիքին, սակայն միայն ընտանիքի առանձին անդամի վրա ազդեցություն գործելու նպատակով: Ընտանեկան հոգեթերապիայի նմանատիպ մեկնաբանության ենք հանդիպում Էյդեմիլերի մոտ: Նա մասնավորապես նշում է, որ ընտանեկան հոգեթերապիան հոգեթերապիայի ոլորտ է, որը ներառում է ընտանիքի հետազոտությունը և հիվանդությունների կանխարգելման ու բուժման, ինչպես նաև հետագա հասարակական-աշխատանքային վերականգնման նպատակով ընտանիքի վրա ազդեցությունը: Էյդեմիլերը նշում է, որ ընտանեկան հոգեթերապիայի մեթոդները կիրառելի են այնպիսի շեղումների դեպքում, ինչպիսիք են նևրոզները, սուր հուզական և սուիցիդալ հակազդեցությունները, վարքի իրադրական պայմանավորվածություն ունեցող շեղումները, արբեցողությունը, թմրամոլությունը, փսիխոպաթիաները, փսիխոզները և հոգեմարմնական (փսիխոսոմատիկ) հիվանդությունները [78, էջ 4]:

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Էյդեմիլերը ընտանեկան հոգեթերապիայի ոլորտից դուրս է մղում ընտանիքի վրա հոգեբանական ազդեցության այնպիսի ձևերը, որոնք իրենց առջև չեն դնում բժշկական նպատակներ: Այդպիսի ոչ բժշկական հոգեթերապևտիկ ազդեցության օրինակ է պրոբլեմատիկ ընտանիքների խորհրդատվությունը, երբ ընտանիքը փորձում է դուրս գալ ստեղծված իրավիճակից, սակայն չի կարողանում ինքնուրույնաբար լուծել իր առջև ծառացած խնդիրները: Ընտանեկան խորհրդատվությունն, ըստ Էյդեմիլերի, թերապիա (բուժում) չէ, բառիս ճշգրիտ իմաստով [78, էջ 4-5]:

Իսկապես, ընտանիքի հոգեբանության երկու կիրառական կողմերը՝ ընտանիքի հոգեթերապիան և ընտանիքի հոգեբանական խորհրդատվությունն ակնհայտորեն

տարբեվում են: Այյոշինայի մոտ հանդիպում ենք ընտանիքի հետ հոգեբանական աշխատանքի այդ երկու տարատեսակների պայմանական տարաբաժանմանը: Նա հոգեբանական խորհրդատվությունը սահմանում է որպես մարդկանց հետ տարվող անմիջական աշխատանք, որն ուղղված է միջանձնային հաղորդակցության դժվարությունների հետ կապված տարատեսակ հոգեբանական խնդիրների լուծման ուղղությամբ: Ըստ Այյոշինայի, հոգեբանական խորհրդատվության ընթացքում որպես ազդեցության հիմնական միջոց կիրառվում է զրույցը: «Զրույցի համապատասխան ձև է կիրառվում նաև հոգեշտկողական աշխատանքում և հոգեթերապիայում, - շարունակում է Այյոշինան, - սակայն, եթե խորհրդատվությունը միտված է առաջին հերթին այցելուի միջանձնային փոխհարաբերությունների վերակազմակերպման հարցում նրան օգնություն ցացաբերելուն, ապա հոգեշտկողական և հոգեթերապևտիկ ազդեցությունն ուղղված է հիմնականում, կենսական դժվարությունների և կոնֆլիկտների մեծ մասի հիմքերում ընկած, մարդու խորքային անձնային խնդիրների լուծման ուղղությամբ» [17, էջ 11]:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ ընտանեկան հոգեթերապիայի և ընտանեկան հոգեխորհրդատվության հիմնական տարբերությունը դրանց նպատակային ուղղվածությունն է: Առաջին դեպքում հոգեբանական միջամտության կիզակետում է ընտանիքի առանձին անդամը, իսկ ընտանիքի հետ աշխատանքը ծառայում է որպես նրա վրա ազդեցություն գործելու միջոց: Հոգեխորհրդատվության պարագայում նպատակակետը փոխվում է, այստեղ առավել կարևորվում են ներընտանեկան միջանձնային փոխհարաբերությունները: Եթե այս երկու դեպքերին ավելացնենք նաև հասարակական կամ ազգային համատեքստում ընտանիքի դիտարկման դեպքերը, երբ ընտանիքի արդյունավետ գործառումը ծառայում է հասարակության շահերին կամ ազգի պահպանմանն ու բարգավաճմանը, ապա կստանանք ընտանիքի, որպես հոգեբանական միջամտության առարկայի թիրախային տարբերակման եռամակարդակ մոդել: *Առաջին և երրորդ մակարդակներում ընտանիքը հանդես է գալիս որպես հոգեբանական միջամտության վերջնական նպատակին (առաջին մակարդակում՝ անձի հոգեկան առողջությանն ու բարեկեցությանը, երրորդ*

մակարդակում՝ հասարակական գործընթացների կարգավորմանը) հասնելու միջոց, իսկ երկրորդ մակարդակում՝ որպես նպատակ:

Կարելի է ենթադրել, որ նշված մակարդակները սերտորեն փոխկապակցված և փոխլրացնող են: Սակայն, ըստ ամենայնի, պրակտիկ աշխատանքի ընթացքում առաջ է գալիս այդ մակարդակներից որևէ մեկի ընտրության անհրաժեշտություն: Արդյունքում, կախված հոգեբանի կամ հոգեթերապևտի նպատակից, նրա կանխադրույթներն ու մեթոդները կարող են տարբերվել մյուսների մեթոդներից և կանխադրույթներից: Որպես հետևանք, ընտանեկան հոգեթերապիայի, հոգեխորհրդատվության, ինչու չէ նաև ընտանիքի հոգեբանության բնագավառում առաջ է գալիս մեթոդաբանական խառնաշփոթ, զգացվում է հետազոտության կամ հոգեբանական միջամտության հիմքերում ընկած կանխադրույթների դասակարգման անհրաժեշտություն:

Ընտանեկան թերապիայի դպրոցների դասակարգման վաղ փորձերից մեկը ձեռնարկվել է ԱՄՆ-ում, հոգեբուժության առաջընթացի խմբի ընտանիքի կոմիտեի կողմից, 1965-1966թթ-ին: Այստեղ, ընտանեկան թերապիայի ամբողջ ոլորտը տարաբաժանվում է երեք խմբի, որոնցից երկուսը բևեռայնորեն հակադրված են, իսկ երրորդը գրավում է միջանկյալ դիրք: Առաջին խմբին պատկանող թերապևտները հենվում են հոգեվերլուծական տեսության վրա և ունեն անհատական կողմնորոշում: Դրան հակադրվող խմբում, որպես թերապևտիկ աշխատանքի տեսական հիմք հանդես է գալիս համակարգերի տեսությունը: Այստեղ գերակշռում է միջանձնային կողմնորոշումը: Միջանկյալ խմբին պատկանող թերապևտների մոտ համադրվում են նշված երկու մոտեցումների կանխադրույթները [75, էջ 9-10]:



Առաջին (A) տեսակետը կիսող թերապևտները հոգեդինամիկ կողմնորոշում ունեցող թերապևտներ են, որոնց համար ընտանեկան թերապիան նրանց թերապևտիկ զինանոցի հերթական մեթոդն է: Եվ, չնայած որ նրանք երբեմն

կազմակերպում են ընտանեկան հանդիպումներ, այդուհանդերձ այս ուղղության ներկայացուցիչները կենտրոնացած են անհատական հիվանդի վրա: Ընտանքին, այս տեսանկյունից, դիտարկվում է որպես ստրեսածին գործոն, որը պետք է հաղթահարվի հիվանդի կողմից: Այս դեպքում ընդգծվում են պատմական ինֆորմացիան (անցյալում տեղ գտած դեպքերի և իրադարձությունների մասին), ախտորոշումը, աֆեկտի արտահայտումն ու ինսայթը [75, էջ 10]:

Երկրորդ (Z) խմբին պատկանող թերապևտներն ունեն բացառապես համակարգային ընտանեկան կողմնորոշում: Այստեղ ընտանեկան թերապիան դիտարկվում է ոչ թե որպես մեթոդ, այլ որպես հոգեկան առողջության հիմնախնդրի արմատապես նոր մոտեցում: Թերապևտիկ աշխատանքը դիտարկվում է որպես ազդեցություն ընտանիքի, որպես ամբողջի, վրա: Ստրեսային իրավիճակում անհատի՝ որպես հիվանդի հանդեպ վերաբերմունքը փոխարինվում է նրան՝ որպես ընտանեկան համակարգի դիսֆունկցիան արտացոլող «ախտանիշը կրողի» դիտարկմամբ: Z կողմնորոշման թերապևտները ուշադրություն չեն դարձնում անցյալին, կենտրոնանում են ներկա, ընթացիկ փոխազդեցությունների վրա: Այս մոտեցման սահմաններում հաշվի չի առնվում անհատական նոզոլոգիայի վրա հիմնվող ախտորոշումը, աֆեկտի արտահայտումը անհրաժեշտ չի համարվում [75, էջ 10]:

Այս դեպքում մենք դարձյալ կանգնում ենք նույն խնդրի առջև: Փաստորեն ընտանեկան թերապիայի առանձնացվող մոտեցումները տարբերվում են հիմնականում այն հանգամանքով, թե ընտանիքի գործառման ո՞ր՝ անհատակա՞ն, ընտանեկա՞ն, թե՞ սոցիալական, մակարդակին է ուղղված թերապևտիկ աշխատանքը: Եվ, չնայած որ անհատական կողմնորոշում ունեցող թերապիան կարող է ընթանալ նաև ամբողջական ընտանիքի մակարդակում, այդուհանդերձ, դրա թիրախն, ակնհայտորեն, տեղակայված է անհատական մակարդակում: Միջանձնային կողմնորոշման պարագայում որպես թերապևտիկ ազդեցության թիրախ է դիտարկվում ամբողջական ընտանիքը, ընտանիքում միջանձնային փոխհարաբերությունները: Իսկ որքանո՞վ են մեկաուսացված նշված մակարդակները:

Ներկայացված խնդիրը չափազանց կարևոր է ընտանիքի հոգեբանական հետազոտության համար: Բանն այն է, որ, կախված հետազոտության նպատակային

ուղղվածությունից, անհատական, խմբային կամ հասարակական միտվածությունից, հետազոտողի ուշադրությունից դուրս են մնում ընտանիքի գործառման մյուս մակարդակները, կորսվում է ընտանիքի, որպես սոցիալ-հոգեբանական խմբի ամբողջականությունը: Դա նշանակում է, որ ընտանիքի գործառման առանձին մակարդակների կարևորման պայմաններում իրականացված հետազոտությունները կարող են ոչ միայն չհամապատասխանել, այլև հակասել միմյանց:

Այս առումով բավականին հետաքրքրական է Ուիլյամ Փինսոֆի և Ջեյ Լեբովի կարծիքը: «Ընտանեկան հոգեբանության գիտական հարացույց» աշխատության մեջ նրանք նշում են, որ չնայած «ընտանեկան հոգեբանությունը» բավականին երիտասարադ հետազոտական բնագավառ է, այդուհանդերձ իր քարորդ դար տևած զարգացման ընթացքում այն հասցրել է բախվել անխուսափելի հակասությունների և մարտահրավերների, որոնք ժառանգել է հոգեբանությունից: Այսպես, մասնավորեցնելով իր առարկան՝ ընտանիքի հոգեբանությունն ավելի շատ կենտրոնանում է անհատական և կենսաբանական համակարգերի վրա: Լայնացնելով առարկան՝ սկսում է հետաքրքրվել այնպիսի լայն համակարգերով, ինչպիսիք են մշակույթը, ազգությունները, քաղաքականությունը [92, էջ 3]:

Որպես ստեղծված խնդրահարույց իրավիճակի լուծում Փինսոֆն ու Լեբովն առաջարկում են ընտանիքի հոգեբանության տարամիտվող հայեցակարգերի համակարգման երկչափ մոդել: Առաջին չափումը ներառում է հայեցակարգի հիմքում ընկած տեսությունները, ներկայացնում է հայեցակարգի մեթոդաբանական կողմնորոշումը (հորիզոնական առանցք): Երկրորդ չափումը ներառում է այն իրական ոլորտները, հարցադրումների տիրույթները, որոնք մասնավորեցնում են հետագա աշխատանքի շրջանակները (ուղղահայաց առանցք): Միավորելով այս երկու չափումները հեղինակներն առաջարկում են ընտանիքի հոգեբանության գիտական պարադիգմայի մատրից [92, էջ 3-18].

Փինսոֆի և Լեբովի կողմից առաջարկված հարացույցային մատրիցում ընտանիքի հոգեբանական հետազոտությունը բնութագրվում է ինն չափանիշներով, որոնցից երեքը (ուղղահայաց սյունյակներ) ցույց են տալիս հետազոտության հիմքում ընկած մեթոդաբանական կանխադրույթները, վեցը (հորիզոնական տողեր) առարկայական

տիրույթը: Մեթոդաբանական կանխադրույթները վերաբերում են հետազոտության գոյաբանական, իմացաբանական և պատճառագիտական կողմերին: Գոյաբանական կողմը ցույց է տալիս, թե ի՞նչ գոյաբանական կարգավիճակով է օժտվում հետազոտության առարկան՝ տվյալ դեպքում, ընտանիքը: Իմացաբանական կողմը որոշում է հետազոտության հիմքում ընկած իմացաբանական կանխադրույթները, որոնց միջոցով հիմնավորվում են հետազոտության գիտական, իմացաբանական, գիտելիքաբանական նշանակությունն ու արժեքը: Պատճառագիտական կողմով որոշվում է հետազոտության ընթացքում պատճառահետևանքային կապերի հասկացման և մեկնաբանման բնույթը:

Հետազոտության առարկայական ոլորտը որոշվում է վեց հարթություններում: Առաջին հարթությունը վերաբերում է ընտանիքի հոգեբանական հետազոտության ընթացքում անհատի հոգեբանության և անհատական հոգեախտաբանության ներգրավվածության չափը: Երկրորդ հարթությունը որոշում է զարգացման դիտարկվող ձևը, դրա ուղղությունը: Երրորդ հարթությամբ որոշվում են հետազոտության ընթացքում գենդերային տարբերակումներն ու շեշտադրումները: Չորրոդ հարթությունը վերաբերում է հետազոտության մեջ ռասայական, էթնիկական, մշակութային ներգրավվածությանը: Հինգերորդ չափմամբ որոշվում է հետազոտության քաղաքական ենթատեքստը: Եվ, վերջապես, վեցերորդ հարթությամբ ներկայացվում է հետազոտության կիրառական նշանակությունը կանխարգելումմիջամտություն տեսանկյունից:

Տալով ընտանիքի հոգեբանության չափումների այս մատրիցը՝ Փինսոֆն ու Լեբովը նշում են, որ դրա միջոցով հնարավոր է նկարագրել և դասակարգել տվյալ բնագավառում իրականացվող բոլոր հետազոտությունները: Բացառություն չի կազմի նաև մեր հետազոտությունը, որի մեթոդաբանական հիմնավորումները կտրվեն համաձայն առաջարկված մատրիցի:

Անդրադառնալով Փինսոֆի և Լեբովի կողմից առանձնացվող առաջին՝ հետազոտության առարկայի գոյաբանական կարգավիճակի չափանիշին, նշենք, որ վերջին ժամանակներս ընտանիքի հոգեբանության բնագավառում նկատվում է ակնհայտ միտվածություն դեպի համակարգային մոտեցումը: Համակարգային

մոտեցման շրջանակներում ընտանիքը դիտարկվում է որպես բաց համակարգ, որը գտնվում է շրջակա միջավայրի հետ անընդհատ փոխադարձ փոխանակության մեջ: Ընտանեկան համակարգն ինքնակարգավորվող համակարգ է, այսինքն դրա դրսևորումները նպատակաուղղված են և համակարգի փոխակերպումների աղբյուրը գտնվում է նրա ներսում: Ընդ որում, կարևոր է այն հանգամանքը, որ ընտանիքն, այս տեսանկյունից, որպես համակարգ առաջնային է այն կազմող անդամների համեմատությամբ: Այս մոտեցման շրջանակներում ընտանիքի առանձին անդամների մտադրություններն ու դրսևորումները երկրորդական են և ենթարկվում են ընտանեկան համակարգի գործառման օրենքներին և կանոններին: Հետևաբար, նպատակահարմար է աշխատել ամբողջ ընտանիքի, այլ ոչ դրա առանձին անդամների հետ [24, էջ 4]:

Ընտանիքի, որպես ամբողջական համակարգի դիտարկումը համահունչ է հոգեբանության բացատրական սկզբունքներից մեկի՝ համակարգայնության սկզբունքի հետ: Համակարգայնությունը գիտական իմացության բացատրական սկզբունք է, որը պահանջում է երևույթների հետազոտություն ներքնապես կապակցված ամբողջից դրանց կախվածության մեջ: Ամբողջի կազմավորման արդյունքում առանձին երևույթները ձեռք են բերում ամբողջին հատուկ նոր որակներ [58, էջ 313]:

Այստեղ, սակայն, հարկ է կանգ առնել մի կարևոր հանգամանքի վրա: Եթե որպես հետազոտության հիմք ընդունենք համակարգային մոտեցման դրույթը և ընտանիքը դիտարկենք որպես համակարգ՝ երկրորդական պլան մղելով անհատական և հասարակական ազդեցությունների դերը, հաշվի չառնելով մի կողմից ընտանիքը կազմող անհատների դրսևորումները, մյուս կողմից դրա գործառման միջավայրի ազդեցությունը, ստիպված կլինենք ընտանիքը դիտարկել որպես մեկուսացված, ինքնաբավ միավոր: Այս դեպքում դրա բոլոր դրսևորումները կբխեցվեն հենց իրենից, ինչը, սակայն, մեթոդաբանորեն արդարացված չէ:

Ինչպես նշում են Փինսոֆն ու Լեբովը՝ հենց այսպես էին վարվում ընտանիքի հոգեբանության զարգացման վաղ շրջանում: Հեղինակները նշում են, որ պատմականորեն ընտանեկան թերապիայի հայեցակարգերում և ինչ-որ չափով նաև ընտանիքի հոգեբանության տեսություններում հնարավորինս նեղացվում էին անհատի

հոգեբանության և անհատական հոգեախտաբանության ներկայացվածության շրջանակները: Անհատի գործառման վրա կենտրոնանալու ցանկացած փորձ դիտարկվում էր որպես անհամատեղելի՝ իրականության համակարգային տեսության հետ: Այդուհանդերձ, Փինսոֆն ու Լեբովը անհատի և ընտանիքի փոխհարաբերություններն օժտում են ընտանիքի հոգեբանության համար էական, անհրաժեշտ նշանակությամբ: Նրանց կարծիքով ընտանիքի հոգեբանության վաղ շրջանի հետազոտություններում հոգեախտաբանական երևույթների բացառումը կապված է այն հանգամանքի հետ, որ այդ ժամանակահատվածում հետազոտողների շրջանում տիրում էր կամ/կամ դիրքորոշումը, համաձայն որի անհատական հոգեախտաբանությունը սկզբունքորեն անհամատեղելի է համակարգային հայեցակարգի հեռանկարի հետ: Ի հակադրության դրան, հեղինակների կողմից առաջարկվող տեսանկյունից այդ երկու՝ անհատական և համակարգային մոտեցումները համատեղելի են [92, էջ 11-12]:

Ասվածն ավելի հասկանալի է դառնում Փինսոֆի և Լեբովի կողմից որպես ընտանիքի հոգեբանական տեսության գոյաբանական կանխադրույթ առաջարկվող կենսա-հոգե-հասարակական համակարգերի տեսությունը (BST-ԿՀՏ): Այստեղ մարդը դիտարկվում է որպես կենսա-հոգե-հասարակական համակարգ և ունի փոխազդող ու փոխգործող բաց համակարգերից կազմված ամբողջության տեսք: Եվ ընդհանրապես, այս մոտեցման շրջանակներում յուրաքանչյուր համակարգ ունի իր սեփական սահմաններն ու անհատականությունը և կարող է ներկայացվել որպես մի կողմից իր մեջ ավելի փոքր ենթահամակարգեր պարունակող համակարգ, մյուս կողմից, որպես ավելի մեծ համակարգի ենթահամակարգ: Օրինակ՝ ամուսնական զույգը կազմում է համակարգ, որն իր մեջ ներառում է անհատական ենթահամակարգեր (ամուսնական զույգերին) և իր հերթին հանդես է գալիս որպես բջջային կամ լայնացված ընտանիքի ենթահամակարգ:

Ի հավելումն դրան, համակարգի հիմնական բնութագրիչներից է նաև այն, որ դրա առանձին մասերը գտնվում են անընդհատ փոխազդեցության մեջ: Համակարգի ենթահամակարգերից յուրաքանչյուրի փոխակերպումը վաղ թե ուշ հանգեցնում է մյուս ենթահամակարգերի փոխակերպումների: Այս ազդեցությունը փոխադարձ կամ

երկկողմանի է [92, էջ 6]: Այնպես որ, ընտանիքի դրսևորումներն անմիջականորեն բխում են ինչպես այն կազմող անհատների, այնպես էլ հասարակության, որտեղ այն գործառում է, դրսևորումներից: Ընտանիքի հետ տարվող հոգեթերապևտիկ աշխատանքների ընթացքում թերապևտիկ ազդեցությունը կարող է ուղղված լինել միայն ընտանիքի անդամների կամ ամբողջական ընտանիքի ուղղությամբ: Այս դեպքում ընտանիքի գործառման միջավայրը՝ հասարակությունը, դուրս է ուղղակի հոգեբանական ազդեցության շրջանակներից: Դա է պատճառը, որ ընտանեկան թերապիայի ուղղությունները բաժանվում է անհատական կողնորոշում և համակարգային կոմնորոշում ունեցող ուղղությունների:

Սակայն իրական կյանքում ընտանիքի դրսևորումները կախված են ինչպես այն կազմող անհատների դրսևորումներից, այնպես էլ հասարակական այն միջավայրի յուրահատկություններից, որտեղ դրանք գործառում են: Իրականում հնարավոր չէ առանձնացված մակարդակներից որևէ մեկի վրա ազդեցություն գործելու ընթացքում չազդել մյուս մակարդակների վրա: Դա նշանակում է, որ անհատական կամ համակարգային կողմնորոշում ունեցող ընտանեկան թերապևտի գործունեությունն անուղղակիորեն առնչվում է հակադիր կողմնորոշման ոլորտին: Անհատական մակարդակում խնդիրների լուծումը կարող է նպաստել ինչպես ընտանեկան կապերի ամրացմանը, ներընտանեկան միջանձնային փոխհարաբերությունների լավացմանը, այնպես էլ ընտանիքի կողմից հասարակական գործառույթների կատարման արդյունավետության բարձրացմանը: Նույնը կարելի է ասել միջանձնային կողմնորոշում ունեցող թերապևտների աշխատանքի մասին. աշխատելով ընտանիքի, որպես ամբողջական կառույցի հետ, նրանք ինքնաբերաբար լուծում են բազմաթիվ անհատական և հասարակական խնդիրներ: Տարբեր կողմնորոշում ունեցող թերապևտների աշխատանքը վերջնանպատակի իմաստով համընկնում է: Տարբերությունները բխում են շարժման մեկնակետի և ուղղության ընտրությունից: Բոլոր դեպքերում մենք գործ ունենք անհատ-ընտանիք-հասարակություն նպատակային շարքի հետ: Եվ, անկախ հանգամանքից, շարժումն իրականանում է անհատից դեպի ընտանիքը, իսկ այնուհետև նաև հասարակությունը, թե հակառակ ուղղությամբ, այդ շարքը մնում է նույնը:

Ասվածն իր արտացոլումն է գտնում Լիդերսի մոտ ընտանիքի, որպես համակարգի հետևյալ սահմանման մեջ՝ «Ընտանիքը բաց համակարգ է, որի տարրերը փոխազդում են միմյանց և շրջապատող համակարգերի հետ: Արտաքին կենսաբանական և սոցիալական համակարգերի հետ «ուղիղ և հետադարձ կապերի» դրսևորման հետևանքով ընտանիքը հանդես է գալիս որպես անընդհատ զարգացող համակարգ: Արտաքին ուժերը կարող են ընտանիքի վրա ունենալ դրական կամ բացասական ազդեցություն, ընտանիքն, իր հերթին, նույն կերպ կարող է ազդել այլ համակարգերի վրա: Այսպիսով, ընտանեկան համակարգը ձգտում է մի կողմից առկա կապերի պահպանմանը, մյուս կողմից՝ զարգացմանն ու գործառման առավել բարձր մակարդակի անցմանը» [51, էջ 10]:

Քննարկումից պարզ է դառնում, որ ընտանիքի հոգեբանական հետազոտության ընթացքում առավել նպատակահարմար է այն դիտարկել որպես համակարգ, որը գտնվում է անընդհատ փոխազդեցությունների մեջ ինչպես իր կազմի մեջ գտնվող ենթահամակարգերի (ընտանիքի անդամներ, անհատական մակարդակ), այնպես էլ այն համակարգերի հետ, որոնց մաս է կազմում ընտանիքը (հասարակական մեծ խմբեր, հասարակական մակարդակ): Այսպիսով, ելնելով մեր առջև դրված նպատակներից և առաջադրված վարկածից, մեր հետազոտության շրջանակներում *ընտանիքը կդիտարկվի որպես բաց սոցիալ-հոգեբանական համակարգ, որի գործառումն իրականանում է անհատ-ընտանիք-հասարակություն-անհատ··· փոխազդեցությունների անընդհատ շղթայում և կախված է այդ իսկ փոխազդեցությունների արդյունքում առաջ եկող փոխակերպումների բնույթից: Ընդ որում, ընտանիքը, որպես գործառող բաց համակարգ, բնութագրվում է ինքնակազմակերպման, ինքնապահպանման, հարմարման և զարգացման ձգտումով:*

Մեր հետազոտության համար ընտանիքի նշված բնութագրիչներն ունեն առաջնային նշանակություն: Որո՞նք են ընտանիքի կառուցվածքային բաղադրիչները, ի՞նչ գործառույթներ է իրականացնում ընտանիքը, ի՞նչ մեխանիզմներով են իրականանում ընտանիքի ինքնակազմակերպումն ու ինքնապահպանումը, հարմարումն ու զարգացումը, ի՞նչ գործոններ են ընկած դրանց հիմքերում, այդ գործոններից որո՞նք են նպաստում և որոնք խանգարում ընտանիքի օրինաչափ

գործառմանը: Այս հարցերին մենք մանրամասնորեն կանդրադառնանք հաջորդ բաժիններում:

1.2. Ընտանիքի հիմնական բնութագրիչները

Լինելով սոցիալ-հոգեբանական բաց համակարգ՝ ընտանիքն, իր դրսևորումներում ենթարկվում է այդպիսի համակարգերի դրսևորումներին հատուկ ընդհանուր օրինաչափություններին: Այդուհանդերձ, որոշակի առանձնահատկություններով ընտանիքը տարբերվում է այլ սոցիալ-հոգեբանական խմբերից: Ընդ որում, որոշ բնութագրիչների տեսանկյունից ընտանիքները տարբերվում են նաև իրարից, ինչը տալիս է ընտանիքի դասակարգման և տիպաբանության հնարավորություն: Եվ, կախված այդ բնութագրիչներից, ընտանիքի դրսևորումները կարող են տարբերվել ինչպես այլ սոցիալ-հոգեբանական համակարգերի, այնպես էլ այլ տիպի ընտանիքիների դրսևորումներից:

Հատուկ գրականության մեջ առանձնացվում են ընտանիքի հիմնական բնութագրիչները: Դրանք են ընտանիքի գործառույթները, կառուցվածքն ու դինամիկան: Ընտանիքի գործառույթը սահմանվում է որպես ընտանիքի կենսագործունեության ոլորտ, որն անմիջականորեն կապված է ընտանիքի անդամների որոշակի պահանջմունքների բավարարման հետ [78, էջ 9]: Որոշ դեպքերում մատնանշվում են նաև հասարակության պահանջմունքները: Գրիշինան, օրինակ, նշում է՝ «Գործառույթ ասելով՝ մենք հասկանում ենք ընտանիքի կենսագործունեությունը՝ անմիջականորեն կապված ինչպես դրա անդամների, այնպես էլ հասարակության պահանջմունքների բավարարման հետ» [31, էջ 6]: Ընտանիքի կառուցվածքն ընտանիքի կազմն է, դրա անդամների քանակությունը, ինչպես նաև նրանց միջև առկա կապերի և փոխհարաբերությունների ամբողջությունը [11, էջ 51, 51, էջ 15]:

Նշված բնութագրիչները փոխպայմանավորում են միմյանց, դրանք սերտորեն փոխկապակցված են և միասին կազմում են ընտանիքի ընդհանուր բնութագիրը, որոշում են ընտանիքի դրսևորման միտումները, զարգացման դինամիկան: Այնպես որ, դրանց պարզաբանումը էական նշանակություն ունի ընտանիքի հոգեբանական հետազոտության համար:

1.2.1. Ընտանիքի գործառման մակարդակները եվ դրանց փոխհարաբերությունները

Ինչպես վերը նշվեց, ընտանիքի կողմից իրականացվող գործառույթները կապվում են ընտանիքի անդամների կամ հասարակության որոշակի պահանջմունքների բավարարման հետ [31, էջ 6, 78, էջ 9]: Նշվեց նաև, որ, որպես համակարգ, ընտանիքը ձգտում է մի կողմից պահպանել առկա կապերը, մյուս կողմից՝ բարձրանալ զարգացման և գործառման առավել բարձր մակարդակի [51, էջ 10]: Ինչպես տեսնում ենք, ընտանիքի գործառումը ծավալվում է երեք՝ անհատական, հասարակական և ընտանեկան պահանջմունքների մակարդակներում: Սակայն անհատական, հասարակական և ընտանեկան պահանջմունքները միշտ չէ, որ ներդաշնակում են: Որոշ դեպքերում դրանք կարող են հակասել, նույնիսկ փոխբացառել միմյանց: Այնպես որ, ընտանիքի հոգեբանական հետազոտության համար որոշիչ նշանակություն ունի ընտանիքի գործառման այդ երեք մակարդակների փոխհարաբերությունների պարզաբանումը:

Ընտանիքի գործառույթների պարզաբանման կարևորությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ընտանիքն այլ սոցիալական փոքր խմբերից առանձնանում է մի շարք յուրահատուկ գործառույթներով, որոնց իրականացման արդյունավետությունն ընկած է ընտանիքի գոյատևման հիմքում: Այդուհանդերձ, դիտարկվող գործառույթների՝ որպես ընտանիքի բնութագրիչների դասակարգումը, որոշ դեպքերում, չի բավարարում ընտանիքի հետ տարվող հոգեբանական աշխատանքների պահանջներին: Նման պայմաններում առաջ է գալիս ընտանիքի գործառույթների բնույթի և նշանակության վերանայման անհրաժեշտություն:

Գրականության մեջ, սովորաբար, առանձնացվում են ընտանիքի ավանդական և ժամանակակից [31, էջ 6-7], ներքին, արտաքին և երկակի [11, էջ 64-69], սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ [19, էջ 76-77], հոգեբանական և հասարակական-մշակութային [37] գործառույթների խմբերը: Ընդ որում, անկախ ընտանիքի գործառույթների խմբավորման չափանիշի, դրանք հիմնականում կրկնվում են, նույնն են տարբեր հետազոտողների մոտ:

Այսպես, առանձնացնելով ընտանիքի ավանդական և ժամանակակից գործառույթները, Գրիշինան, որպես ավանդական գործառույթներ (գործառույթներ, որոնք կայուն են փոփոխությունների նկատմամբ) դիտարկում է՝ վերարտադրողական (կապված է հասարակության կենսաբանական վերարտադրության և երեխաներ ունենալու անհատական պահանջմունքների բավարարման հետ), դաստիարակչական (ապահովում է երիտասարդ սերունդի սոցիալականացումը, բավարարում է բարեկամության և ինքնահիրացման պահանջմունքը, հիմնված է երեխաների նկատմամբ ծնողական սիրո և ծնողների նկատմամբ փոխադարձ սիրո վրա), տնտեսվարական-տնտեսական (կապված է այպես կոչված «տնային գործերի»՝ սնունդի, կենցաղի, կացարանի կազմակերպման հետ, որոնցում ձևավորվում են ներընտանեկան հարաբերությունները, ապահովում է դեռահասների և հասարակության անաշխատունակ անդամների տնտեսական աջակցությունն ու երեխաների խնամքը), առաջնային հասարակական վերահսկման (ձևավորում և ապահովում է տարբեր կենսական իրավիճակներում ընտանիքի անդամների վարքի բարոյական նախասահմանումներն ու չխրախուսվող վարքի արգելքները), ռեկրեատիվ (կապված է ժամանցի, հանգստի կազմակերպման և դրանց սոցիալական վերահսկման հետ), սեռական (ապահովում է սեռական պահանջմունքների բավարարումը, որոնց բնույթից է կախված ամուսնական սերը), ռեգեներատիվ (կապված է անվան, ունեցվածքի, սոցիալական դիրքի ժառանգման հետ):

Որպես ժամանակակից գործառույթներ (գործառույթներ, որոնք առաջացել են ընտանիքին ներկայացվող ժամանակակից սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցությամբ) առանձնացվում են՝ հոգեթերապևտիկ (ապահովում է հոգեբանական պաշտպանություն և հուզական աջակցություն, բավարարում է համակրման, հարգանքի և ճանաչման պահանջմունքը) և հոգևոր հաղորդակցման (նպաստում է ընտանիքի անդամների հոգևոր աճին և անձնային զարգացմանը, ընդհանուր հոգևոր հետաքրքրությունների և պահանջմունքների միջոցով ամրացնում է ամուսնական կապերը) գործառույթները [31, էջ 6-7]:

Մյուս կողմից առանձնացվում են ընտանիքի սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ գործառույթներ: Սպեցիֆիկ (յուրահատուկ) գործառույթները բխում են ընտանիքի

էությունից և արտացոլում են նրա՝ որպես սոցիակալան երևույթի առանձնահատկությունները: Դրանց շարքին են դասվում վերարտադրողական (ռեպրոդուկտիվ), երեխաների խնամքի (էկզիստենցիալ) և դաստիարակության (սոցիալիզացիայի) գործառույթները, որոնք կայուն են հասարակական փոխակերպումների նկատմամբ: Ոչ սպեցիֆիկ գործառույթներն ընտանիքի այն գործառույթներն են, որոնք պարտադրվում կամ հարմարեցվում են ընտանիքին որոշակի պատմական պայմանների ազդեցությամբ: Որպես այդպիսիք առանձնացվում են՝ սեփականության կուտակման և փոխանցման, կարգավիճակի ամրապնդման և փոխանցման, արտադրության և սպառման կազմակերպման,հանգստի և ժամանցի կազմակերպման, ընտանիքի անդամների առողջության և բարեկեցության հոգսի, լարման թուլացմանը և ինքնապահպանմանը նպատսող միկրոկլիմայի ստեղծման գործառույթները: Ընդ որում, նշված ոչ սեպցիֆիկ գործառույթներն ունեն երկրորդական դեր և բացահայտում են հիմնական գործառույթների՝ ընտանիքում մանկածնության, երեխաների խնամքի և դաստիարակության պատմականորեն փոփոխվող պատկերը [19, էջ 76-77]:

Իր մեկ այլ՝ «Ժամանակակից ընտանիքի հոգեբանություն» աշխատության մեջ Անդրեևան բերում է ընտանիքի գործառույթների մեկ այլ դասակարգում, որտեղ առանձնացվում են ընտանիքի վերարտադրողական, տնտեսական, դաստիարակչական, հաղորդակցական, տնտեսվարական-կենցաղային, հասարակա-կան-կարգավիճակային, հուզական, սեռական, առաջնային հասարակական վերահսկման և հոգևոր հաղորդակցման գործառույթները [18, էջ 70-71]:

Օլգա Կարաբանովայի մոտ հանդիպում ենք ընտանիքի հետևյալ գործառույթներին՝ տնտեսական գործառույթ, վերարտադրողական գործառույթ, երեխաների դաստիարակության գործառույթ, սեռական-էրոտիկ գործառույթ, հոգևոր հաղորդակցման գործառույթ, հուզական աջակցման և ընդունման գործառույթ, վերականգնողական գործառույթ, հասարակական կարգավորման, վերահսկման և խնամքի գործառույթ, հասարակական կարգավիճակի փոխանցման գործառույթ [41, էջ 11-13]:

Ընտանիքի գործառույթների դասակարգման համընդգրկուն համակարգ է ներկայացնում Սեդրակ Սեդրակյանը [11, էջ 64-68]: Իր «Ընտանիքի հոգեբանություն» աշխատության մեջ նա առանձնացնում է ներքին, արտաքին և, որպես նորամուծություն՝ միջանկյալ գործառույթները: Ներքին գործառույթներն ընտանիքի այն գործառույթներն են, որոնք ծառայում են երկու հիմնական նպատակի. ա) իր՝ որպես սոցիալական խմբի, պահպանմանն ու ամրապնդմանը, բ) իր անդամների պահանջմունքների բավարարմանը: Դրանց շարքին են դասվում՝ մանկածնության և մոր ու հոր դերեր կատարելու ցանկության բավարարման, ամուսինների սեռական ցանկության բավարարման, երեխաների խնամքի, դաստիարակության և դերային սոցիալականացման, մեծ հասարակության մեջ հասուն դերերին նախապատրաստման, սոցիալ-հոգեբանական հարմարավետ վիճակի և պաշտպանվածության ապահովման, ընտանիքի անդամի զարգացման և հասունացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, ընտանիքի յուրաքանչյուր անդամի դրական ինքնագիտակցության ձևավորման, պահպանման և հետագա ուժեղացման, շփվելու, հաղորդակցվելու պահանջմունքի բավարարման, ընտանիքի անդամների փոխադարձ սոցիալական վերահսկողության և վարքի կարգավորման, համատեղ հանգստի իրականացման, ընտանիքի անդամների միջև ծագող բախումների մյուս անդամների կողմից լուծման, համատեղ ապրելակերպի և կենցաղի կազմակերպման գործառույթները:

Արտաքին գործառույթներն, ըստ Սեդրակյանի, ծագում են տվյալ ընտանիքի՝ այլ ընտանիքների և ավելի լայն հասարակության հետ ունեցած հարաբերություններում: Այդպիսի գործառույթներ ծագում են այն պատճառով, որ յուրաքանչյուր ընտանիք ծառայում է ոչ միայն ինքն իրեն, այլև հասարակությանը, քանի-որ այդ մեծ ամբողջության մի «բջիջն է»: Որպես ընտանիքի արտաքին գործառույթներ Սեդրակյանն առանձնացնում է՝ հասարակության մշակույթի կուտակումը, պահպանումն ու փոխանցումը սերունդներին, հասուն սոցիալական դերերի կատարմանը երեխաներին նախապատրաստելը, ընտանիքի անդամների մասնակցությունը պետական կառավարման, երկրի պաշտպանության, տնտեսության,

մշակույթի, կրթության, գիտության և հասարակական կյանքի այլ ոլորտի զարգացման գործին:

Եվ վերջապես, Սեդրակյանը ներմուծում է երկակի գործառույթների գաղափարը, այսինքն, այնպիսի գործառույթների, որոնք միաժամանակ և՛ արտաքին են, և՛ ներքին, համալիր են և ունեն երկակի բնույթ՝ դրանց թվին դասելով մանկածնությունը, երեխաների դերային սոցիալականացման գործառույթը:

Ինչպես տեսնում ենք, տարբեր դասակարգումներում հիմնականում դիտարկվում են ընտանիքի նույն գործառույթները, սակայն, որոշ դեպքերում, դրանք կարող են հայտնվել տարբեր խմբերում: Այս հանգամանքը դժվարացնում է գործառման տեսանկյունից ընտանիքի հոգեբանական հետազոտության կազմակերպումը:

Բանն այն է, որ վերը բերված դասակարգումների գերակշռող մեծամասնությունը հիմնվում է ընտանիքի գործառման մակարդակների առանձնացման կանխադրույթի վրա: Որպես այդպիսիք ենթադրվում են ընտանիքի գործառման հասարակական (Սեդրակյանի դասակարգման մեջ՝ արտաքին), բուն ընտանեկան (ներքին գործառույթների առաջին ենթախումբ) և անձնային (կամ անհատական, ներքին գործառույթների երկրորդ խումբ) մակարդակները: Արդյունքում, ընտանիքի գործառույթները նույնպես դիտարկվում են այդ մակարդակների տեսանկյունից: Օրինակ, առանձնացնելով ընտանիքի հոգեբանական և հասարակական-մշակութային գործառույթները, Զդրավոմիսլովան նշում է՝ «Երբ խոսքն ընտանիքի հոգեբանական գործառման մասին է, այն ներկայանում է ոչ այնքան որպես ինստիտուտ, որքան որպես փոքր խումբ, իրեն հատուկ խմբային փոխազդեցության առանձնահատկություններով: Հետևաբար, ընտանիքի հոգեբանական գործառման հիմքում ընկած են միայն այնպիսի անհատական պահանջմունքներ, որոնց բավարարումն անհնար կամ չափազանց դժվարեցված է ընտանիքից դուրս» [37, էջ 82-83]:

Դժվար չէ նկատել, որ Զդրավոմիսլովայի խոսքերը վերաբերում են ընտանիքի գործառման անձնային մակարդակին, այստեղ առավելապես կարևորվում են այն գործոնները, որոնք անմիջականորեն կապված են անհատական պահանջմունքների

հետ, իսկ ընտանիքը հանդես է գալիս որպես այդ իսկ պահանջմունքների բավարարման յուրահատուկ միջավայր:

Սակայն, եթե ընտանիքը դիտարկվում է որպես հասարակական կառույց, ապա առաջին պլան են մղվում դրա հասարակական գործառույթները: Այսպես՝ խորհրդային սոցիոլոգ Խարչևի կարծիքով՝ «Ընտանիքը ամուսինների, ծնողների և որդիների միջև առկա փոխհարաբերությունների պատմականորեն կոնկրետ համակարգ է, փոքր խումբ, որի անդամները կապված են ամուսնական կամ ազգակցական կապերով, կենցաղի ընդհանրությամբ ու փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ և որի հասարակական անհրաժեշտությունը պայմանավորված է ազգաբնակչության ֆիզիկական և հոգևոր վերարտադրման պահանջմունքով [73, էջ 66]»:

Ինչպես տեսնում ենք, այս դեպքում ընդգծվում է ազգաբնակչության ֆիզիկական և հոգևոր վերարտադրման հասարակական պահանջմունքի կարևորությունը, իսկ ընտանիքի անդամների անհատական պահանջմունքները մղվում են հետին պլան, կամ ընդհանրապես չեն դիտարկվում:

Մենք կասկածի տակ չենք առնում հանգամանքը, որ ընտանիքն ունի հասարակական նշանակություն և կատարում է որոշակի հասարակական գործառույթներ: Այդուհանդերձ, այդ գործառույթների ընտանեկան և անհատական մակարդակից մեկուսացված դիտարկումը բերում է փակուղու: Այսպես, եթե ֆիզիկական և հոգևոր վերարտադրության հասարակական պահանջմունքի բավարարումը կապենք ընտանիքի հետ և, հաշվի չառնելով դրա անհատական կողմը, ընտանիքը դիտարկենք որպես այդ պահանջմունքի բավարարման անհրաժեշտ պայման, ապա կարող ենք ենթադրել, որ այն հասարակություններում (պատմական կամ ներկայումս մշակութային ցածր մակարդակի վրա գտնվող), որտեղ դեռևս չէր ձևավորվել հասարակության ընտանեկան կազմակերպությունը, որտեղ մարդիկ ապրում էին մեծ, չառանձնացված խմբերով, որտեղ որպես հասարակական կառույցներ բացակայում էին ընտանիքները, վերարտադրության գործառույթը չէր կարող իրականացվել, չէր կարող բավարարվել վերարտադրման հասարակական պահանջմունքը:

Սակայն, դեռևս 19-րդ դարավերջին իրականացված հետազոտությունները ցույց տվեցին, որ հասարակական կազմակերպության մեջ ընտանիքի առկայությունը վերարտադրության և գոյատևման անհրաժեշտ պայման չէ: Կենդանական խմբերի և մարդկային հասարակությունների համեմատական հետազոտությունը ցույց տվեց, որ չնայած կենդանական հոտերի և ընտանիքների միջև առկա կապին, այնուամենայնիվ դրանք գտնվում են որոշակի հակադրության մեջ: Էսպինասը նշում է, որ՝ «Հոտը կենդանիների մոտ դիտվող բարձրագույն հասարակական խումբ է: Այն, ըստ ամենայնի, կազմված է ընտանիքներից, սակայն հենց սկզբից ընտանիքն ու հոտը գտնվում են հակադրության մեջ, դրանց զարգացման միջև առկա է հակադարձ կախվածություն»: Այնուհետև՝ «Որտեղ ընտանիքն ամրակուռ է, հոտը ձևավորվում է որպես հազվադեպ բացառություն: Եվ հակառակը, որտեղ գերակայում են կամ ազատ սեռական հարաբերությունները, կամ պոլիգամիան, հոտը ձևավորվում է համարյա ինքնըստինքյան... Հոտի ձևավորման համար անհրաժեշտ է, որ ընտանեկան կապերը թուլանան և անհատը նորից դառնա ազատ: Այդ իսկ պատճառով մենք հազվադեպ ենք թռչունների մոտ հանդիպում կազմակերպված երամների... Եվ ընդհակառակը, կաթնասունների մոտ մենք գտնում ենք որոշակի աստիճանի կազմակերպված համայքներ, քանի-որ այստեղ անհատը չի կլանվում ընտանիքի կողմից: Հոտային ընդհանրության զգացման համար դրա առաջացման պահին չի կարող լինել առավել մեծ թշնամի, քան ընտանեկան ընդհանրության զգացումն է» [79, էջ 38-39]: Ստացվում է, որ որոշ դեպքերում, ընտանիքը ոչ միայն չի ամրացնում հասարակական կազմակերպությունը, այլև թուլացնում է այն:

Մյուս կողմից, Էսպինասի դիտարկումները կարող են նշանակել, որ ընտանիքի կազմավորումն ամենևին կապ չունի վերարտադրման գործառույթի առավել արդյունավետ իրականացման հետ: Հասարակության համայնքային կազմակերպությունը նույնպես կարող է նպաստել տեսակի պահպանմանը, ֆիզիկական և հոգևոր վերարտադրությանը: Բացի դա, հայտնի է, որ կենդանական աշխարհի ինչպես հոտային, այնպես էլ ընտանեկան (այս պարագայում ավելի ճիշտ կլինի ասել զուգամիություն) հասարակական կազմակերպություն ունեցող տեսակները

հոգում են իրենց սերունդների վերարտադրումն ու պահպանումը և երկու դեպքում էլ դա անում են բավարար արդյունավետությամբ [53, էջ 137-154]:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ ընտանիքի առկայությունը վերարտադրության հասարակական պահանջմունքի բավարարման պարտադիր գործոն չէ: Հետևաբար, վերարտադրության հասարակական գործառույթը, մեկուսացված դրա ընտանեկան և անհատական կողմերից, չի կարելի դիտարկել որպես ընտանիքի հիմնական գործառույթ: Հասարակությունը (մարդկային, թե կենդանական) իր վերարտադրությունը կարող է ապահովել ինչպես ընտանիքների առկայության, այնպես էլ բացակայության պարագայում:

Սակայն, եթե վերարտադրության գործառույթը դիտարկենք անձնային (սեռական պահանջմունքների բավարարում, համատեղ երեխաներ ունենալու, մոր և հոր դերեր կատարելու ցանկություն) կամ ընտանեկան (ընտանիքի՝ որպես սոցիալական խմբի պահպանումն ու ամրապնդում) տեսանկյունից, ապա այն հանդես կգա որպես ընտանիքի յուրահատուկ գործառույթ և հնարավոր կլինի միայն ընտանիքի առկայության, հասարակության ընտանեկան կազմակերպության պայմաններում: Այսպես, Ֆեդոտովայի և Ֆիլիպովայի հետազոտություններում, որպես ամուսնական զույգի որոնման շարժառիթներ առավել հաճախակ նշվում են սեռական մերձեցման ձգտումը, հոգատարություն դրսևորելու ցանկությունը (առավել հաճախ հանդիպում է տղամարդկանց շրջանում), հոգատարություն զգալու ցանկությունը (առավել հաճախ հանդիպում է կանանց շրջանում), սիրելու և սիրված լինելու ցանկությունը, իր նման մարդու գտնելու ձգտումը, հասկացված լինելու ցանկությունը [40, էջ 222]: Այն հանգամանքը, որ վերարտադրության պահանջմունքը չի նշվում որպես ամուսնական զույգի որոնման հիմնական շարժառիթ, դեռևս չի նշանակում որ ընտանիքը չի կատարում վերարտադրության գործառույթը: Վերարտադրության հասարակական գործառույթն անմիջականորեն կապված է նշված շարժառիթների հետ և դրսևորվում է դրանց իրականացմանը զուգահեռ:

Ասվածից պարզ է դառնում, որ վերարտադրության հասարակական գործառույթն ունի ընդգծված անհատական և ընտանեկան նշանակություն: Եվ ավելին, կարելի է ասել, որ վերարտադրության գործառույթի հասարակական կողմը հնարավոր է

դառնում դրա անհատական և ընտանեկան կողմերի իրականացման արդյունքում, ինչպես նաև, որ վերարտադրության գործառույթը յուրահատուկ է ընտանիքի համար միայն այն դեպքում, երբ դիտարկվում են նաև դրա անհատական և ընտանեկան կողմերը:

Նույնը կարելի է ասել նաև սոցիալականացման գործառույթի մասին, որն, ինչ-որ չափով հանդես է գալիս որպես հոգևոր վերարտադրության բաղադրիչ: Կասկածից վեր է, որ ընտանիքը որոշիչ դեր ունի սերունդների ձևավորման և կայացման գործում: Ինչպես նշում է Ուինիքոթը՝ «Ընտանիքը կատարում է կարևորագույն դեր, որպես վայր, որտեղ երեխան առաջին անգամ առնչվում է հասարակության մեջ գործող ուժերի հետ: Որպես աշխարհի հետ փոխհարաբերությունների նախատիպ են ծառայում մոր և նորածնի նախասկզբնական հարաբերությունները, որոնցում մայրը հանդես է գալիս որպես բարդ շրջապատող աշխարհի ներկայացուցիչ և նպաստում է երեխայի ժառանգաբար տրված անձնային որակների զարգացմանը կամ խանգարում է դրան» [26, էջ 4]:

Այդուհանդերձ, որոշ դեպքերում ընտանիքի սոցիալականացման գործառույթի հասարակական նշանակությունը գերագնահատվում է: Այն դիտարկվում է որպես ընտանիքի գործառման հիմնական նպատակ: Օրինակ՝ Վլադիմիր Դրուժինինը նշում է, որ՝ «երեխաների սոցիալականացումը միշտ, բոլոր ժամանակներում և բոլոր ժողովուրդների մոտ եղել է ընտանիքի միակ յուրահատուկ (սպեցիֆիկ) գործառույթը, իսկ մյուս գործառույթները եղել են լրացուցիչ և փոփոխվել են դարերի ընթացքում» [34, էջ 29-30]: Դրուժինինն ամենևին չի պնդում, որ երեխաների սոցիալականացումն անհնարին է ընտանեկան կազմակերպություն չունեցող հասարակություններում: Սակայն մեզ հետաքրքրող տեսանկյունից առավել կարևորվում է հանգամանքը՝ արդյո՞ք ընտանիքում ծնող-երեխա հարաբերությունների անմիջական նպատակը երեխաների սոցիալականացումն է, թե դա նաև ուրիշ նպատակներով, շարժառիթներով կառուցվող հարաբերությունների ինքնաբերաբար ձևավորվող արդյունք է: Մեր կարծիքով, սոցիալականացումը ծնող-երեխա հարաբերությունների հասարակական կողմն է, այն դեպքում, երբ դրա անձնային կողմը կազմում են երեխային խնամելու և դաստիարակելու միջոցով ինքնահաստատման, երեխաների

մեջ ինքնաարտահայտման և ինքնադրսևորման, իսկ ընտանեկանը կողմը՝ երեխաների դաստիարակման, համատեղ կենցաղի, հանգստի և ժամանցի կազմակերպման գործառույթները:

Այսպիսով, քննարկման արդյունքում կարող ենք եզրակացնել, որ ընտանիքի ցանկացած գործառույթ հանդես է գալիս երեք կողմերով՝ հասարակական, ընտանեկան և անհատական: Այդ կողմերն անքակտելիորեն փոխկապակցված են, և, իրականացնելով յուրաքանչյուր գործառույթի մի կողմը (հասարակական, ընտանեկան կամ անհատական), ընտանքին անհրաժեշտաբար իրականացնում է մյուս կողմերին առնչվող գործառույթներ: Օրինակ՝ ծնողների դերում հանդես գալու անհատական գործառույթի իրականացումն ինքնաբերաբար հանգեցնում է վերարտադրության հասարակական գործառույթի և ընտանիքի ամրապնդման գործառույթի իրականացմանը: Ընդ որում, պատմական առանձին ժամանակաշրջաններում, ինչպես նաև կախված ընտանիքի բնույթից այդ կողմերից մեկը կարող է դառնալ առաջնային:

Ըստ այդմ, մեր կարծիքով *առավել նպատակահարմար է ընտանիքի հոգեբանական հետազոտության, ինչպես նաև դրա հետ տարվող հոգեբանական աշխատանքների ընթացքում ընտանիքի գործառույթների դասակարգման փոխարեն դիտարկել յուրաքանչյուր առանձին գործառույթի նշանակությունը հասարակության, ընտանիքի, որպես հասարակական խմբի և ընտանիքի առանձին անդամի համար, պարզել դրա հասարակական, ընտանեկան և անհատական կողմերի հնարավոր փոխհարաբերությունները:*

1.2.2. Ընտանիքի կառուցվածքի անհատական եվ սոցիալական բաղադրիչները

Նախորդ բաժնում խոսվեց ընտանիքի գործառույթների մասին, որոնց նպատակը անհատական և հասարակական պահանջմունքների բավարարումն է: Նշվեց, որ յուրաքանչյուր՝ անհատական, ընտանեկան և հասարակական, մակարդակում իրականացող գործառույթ իր արտացոլումն է գտնում մյուս մակարդակներում և, հետևաբար, ընտանիքի գործառումը ներկայանում է որպես մեկ ամբողջական գործընթաց: Սակայն, եթե գործառման առումով ընտանիքն, իր անհատական, ընտանեկան և հասարակական մակարդակներով հանդերձ կարելի է դիտարկել որպես

մեկ ամբողջություն, արդյո՞ք նույն կերպ այն մեկ ամբողջություն է կազմում նաև կառուցվածքային առումով: Այլ կերպ ասած՝ կարելի՞ է արդյոք ընտանիքի գործառման ընթացքում դրա մակարդակների միասնության դրույթն ամրապնդել ընտանիքի կառուցվածքային առանձնահատկությունների վերլուծությամբ: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է անրադառնալ ընտանիքի կառուցվածքային բնութագրին, պարզաբանել ընտանիքի կառուցվածքում անհատական և հասարակական բաղադրիչների փոխհարաբերությունների բնույթը:

Հատուկ գրականության մեջ ընտանիքի կառուցվածքը սահմանվում է որպես դրա անդամների և նրանց միջև գոյություն ունեցող կապերի և փոխհարաբերությունների ամբողջություն [11, էջ 51]: Ընտանիքում գոյություն ունեցող միջանձնային փոխհարաբերությունների պարզաբանումը կարևոր նշանակություն ունի ընտանիքի հետ տարվող հոգեբանական աշխատանքների համար, և ներկայումս մշակված են ընտանեկան փոխհարաբերությունների հետազոտման մեթոդներ և մեթոդիկաներ, որոնք արդյունավետ կերպով ուրվագծում են ընտանիքում գոյություն ունեցող միջանձնային կապերի բնույթը: Որպես օրինակ նշենք ընտանիքի քարտեզագրման [87, էջ 89-90] և «ընտանիքի սոցիոգրամի» մեթոդները [11, էջ 173]:

Այդուհանդերձ, չնայած ընտանիքի գործառման ընթացքում ներընտանեկան փոխհարաբերությունների կարևորությանը, ակնհայտ է, որ դրանք մեծամասամբ կախված են ընտանիքի անդամների սոցիալ-հոգեբանական բնութագրից, նրա գործունեության վրա ազդող արտաքին՝ հասարակական, և նեքին՝ ներհոգեկան, գործոններից: Ընտանիքի անդամի դրսևորումների ներքին և արտաքին դետերմինացվածության դրույթն ընկած է կառուցվածքային կողմնորոշում ունեցող ընտանեկան թերապիայի հիմքերում: Սալվադոր Մինուխինը (Minuchin) նշում է, որ ընտանեկան թերապիայի տեսությունը, որպես կանխադրույթ, ընդունում է այն փաստը, որ մարդը մեկուսացված չէ: Նա սոցիալական խմբի գործող և հակազդող անդամ է: Այն ամենն, ինչ նա ապրում է որպես իրականություն կախված է ներքին և արտաքին բաղադրիչներից: Մարդու փորձը որոշվում է շրջապատի հետ նրա փոխհարաբերություններով [87, էջ 2]:

Այսպիսով, անհատը, որպես ընտանիքի անդամ, բնութագրվում է երկու կողմերով: Մի կողմից որոշիչ են նրա պահանջմունքները, դրդապատճառներն ու շարժառիթները, որոնք բավարարման հնարավորություն են ստանում ընտանիքի գործառման ընթացքում: Մյուս կողմում այն ընտանեկան դերերն են, որոնք կատարում է անհատը՝ լինելով ընտանիքի անդամ: Եվ, եթե առաջինն, իր բնույթով հոգեբանական է, երկրորդն ունի ընդգծված հասարակական բնույթ: Այնպես որ, ընտանիքի անդամների պահանջմունքների և նրանց կողմից իրականացվող դերերի փոխհարաբերությունների հետազոտությամբ կարելի է բացահայտել ընտանիքի կառուցվածքում հոգեկան և հասարակական բաղադրիչների փոխհարաբերությունների բնույթը, ընտանիքի գործառման վրա ահնատական և հասարակական գործոնների նշանակությունը:

Նախ անդրադառնանք ընտանիքի անդամի մոտիվացիոն ոլորտի նկարագրությանը: Ժամանակակից հոգեբանության համակարգում անձի մոտիվացիոն ոլորտի՝ պահանջմունքների, դրդապատճառների ու շարժառիթների խնդիրը չի ստանում միանշանակ լուծում: Բազմաթիվ հարցերի վերաբերյալ հետազոտողների կարծիքները էականորեն տարբերվում են [40, էջ 21-45]: Այդուհանդերձ, անձի մոտիվացիոն բաղադրիչները մեծամասամբ դիտարկվում են որպես նրա ակտիվության հիմնական խթաններ: «Համընդհանուր ճանաչում է գտել այն տեսակետը, - գրում է Ասեևը, - որ մոտիվացիան, մարդու մոտ ներառում է դրդապատճառների բոլոր ձևերը՝ շարժառիթները, պահանջմունքները, հետաքրքրությունները, ձգտումները, նպատակները, հակումները, մոտիվացիոն դիրքորոշումները, իդեալները և այլն: Առավել լայն իմաստով, մոտիվացիան երբեմն սահմանվում է որպես վարքի որոշիչ գործոն» [21, էջ 7-8]:

Այսպիսով, անհատի, որպես ընտանիքի անդամի դրսևորումները պայմանավորվում են նրա մոտիվացիոն ոլորտի, մասնավորապես պահանջմունքների բնույթով: Ընդ որում, ընտանիքի գործառումն անմիջականորեն կապված է ընտանիքի անդամների պահանջմունքների բավարարման չափից: Եվ այստեղ ամենևին կարևոր չէ պահանջմունքի բնույթը: Այսպես, ռուս հետազոտող Սիսոևը գրում է, որ ամուսնության ամրությունն ուղղակիորեն և անմիջականորեն կապված է այն հանգամանքից, թե ինչ չափով են ամուսնական կյանքում բավարարվում ընտանիքի

անդամների հուզական-հոգեկան պահանջմունքները [64]: Չեխ հետազոտող Կրատոխվիլի մոտ ամուսնական ներդաշնակության համար առաջնային նշանակություն են ստանում սեռական պահանջմունքները: Ընդ որում, այս տեսակետը հետաքրքիր է այն առումով, որ հեղինակի կարծիքով սեռական շեղումները մի կողմից կարող են պայմանավորված լինել ամուսինների միջև փոխհարաբերությունների աններդաշնակությամբ, մյուս կողմից՝ հանդես են գալիս որպես ամուսնական կոնֆլիկտների բաղադրիչ [47, էջ 9]:

Ամուսնության ամրության և ընտանիքի արդյունավետ գործառման ընթացքում անհատական պահանջմունքների դերի կարևորությունը ստիպում է ընտանիքի հոգեբանական հետազոտության ընթացքում մշտապես ուշադրության կենտրոնում պահել ընտանիքի անդամների պահանջմունքների խնդիրը: Շատ դեպքերում, խնդրի արդյունավետ լուծման համար ամուսնական կամ ընտենական պահանջմունքները դասակարգվում են: Այսպես, ամուսնական կոնֆլիկտների՝ Լևկովիչի և Զուսիկովայի կողմից իրականացված համատեղ հետազոտության մեջ առանձնացնում են ամուսնական համատեղ կյանքի ընթացքում առավել մեծ նշանակություն ունեցող պահանջմունքների հետևյալ հինգ խումբը՝

1.Ընտանիքում որոշակի (մոր-հոր, ամուսնու-կնոջ, տանտիրոջ-տնային տնտեսուհու, կնոջ-տղամարդու) դերերի կատարման ամուսինների պահանջմունքը:

2.Միմյանց հետ ինչպես նաև ընկերների հետ հաղորդակցվելու պահանջմունքը:

3.Ամուսինների իմացական, ինչպես նաև հոգևոր զարգացման և աճի պահանջմունքը:

4.Նյութական, այդ թվում համատեղ տնտեսվարման և ունեցվածքի ձեռքբերման պահանջմունքները:

5.«Ես-կոնցեպցիայի», որպես «Ես» կերպարների ամբողջականության պահպանման պահանջմունքը [49]:

Դժվար չէ նկատել, որ նշված պահանջմունքներից միայն առաջին խմբի պահանջմունքներն են, որ անմիջականորեն կապված են ամուսնության կամ ընտանիքի հետ. դրանց բավարարումը հնարավոր է միայն ընտանեկան կամ ամուսնական փոխհարաբերությունների առկայության դեպքում: Դա բնական է, քանի-

որ այդ խմբի պահանջմունքներն անմիջականորեն կապված են ընտանեկան դերերի հետ:

Մյուս չորս խմբերի պահանջմունքների բավարարումը չի ենթադրում ամուսնական կամ ընտանեկան հարաբերությունների առկայություն: Միմյանց հետ հաղորդակցվելու, իմացական, նյութական պահանջմունքների բավարարումը կարող է իրականանալ նաև փոխհարաբերությունների այլ տիպերի դեպքում:

Այդ դեպքում ինչո՞վ է պայմանավորված ամուսնական կամ ընտանեկան փոխհարաբերությունների անհրաժեշտությունն անհատական պահանջմունքների բավարարման ընթացքում: Այս հարցի պատասխանն անմիջականորեն վերաբերում է անհատի, որպես ընտանիքի անդամի և հասարակության, որպես ընտանիքի գործառման միջավայրի փոխհարաբերությունների խնդրին: Այս առումով բավականին հետաքրքիր կարծիք է հայտնում Օբոզովը: Նա մասնավորապես գրում է՝ «Անհատի տեսանկյունից ամուսնությունը միջանձնային հարաբերություն է, որը հնարավորություն է տալիս բավարարել հուզական կապվածության, անհատական սեռական սիրո, ցեղի շարունակության, կենցաղի և ժամանցի կազմակերպման, բարոյական և հուզական աջակցության պահանջմունքները: <…> Ընդ որում,- շարունակում է հեղինակը, - ամուսնության նշանակությունը ոչ թե այն է, որ միայն դրա շրջանակներում է հնարավոր բավարարել նշված պահանջմունքները. դրանք կարող են բավարարվել նաև ամուսնությունից դուրս: Ամուսնության նշանակությունն կայանում է նրանում, որ այն կազմակերպում, կայունացնում, հասարակայնորեն վավերացնում է այդ պահանջմունքների բավարարումը» [57, էջ 363-364]:

Հենվելով Օբոզովի տեսակետի վրա, կարելի է ենթադրել, որ ամուսնական կամ ընտանեկան հարաբերությունների շրջանակներում անհատական պահանջմունքները ստանում են բավարարման հասարակայնորեն ընդունված ձև: Դա կարող է նշանակել, որ, այն դեպքում, երբ ընտանիքի անդամի ակտիվության հիմքում ընկած են նրա ներհոգեկան բովանդակությունները՝ պահանջմունքները, ապա դրանց բավարարման ձևն ու միջոցը որոշվում են «արտաքին» մշակութային ազդեցությամբ, ունեն հասարակական պայմանավորվածություն:

Ստացվում է, որ ընտանիքի անդամի դեպքում մենք հանդիպում ենք անհատի ներհոգեկան և նրա կենսամիջավայրի (այս դեպքում՝ հասարակական միջավայրի) փոխգործության երևույթին, որին, համարյա մեկ դար առաջ, անդրադարձել է հոգեվերլուծության հիմնադիր Զիգմունդ Ֆրոյդը: Նրա մոտ, որպես ներհոգեկան մոտիվացիոն ոլորտի բաղադրիչներ հանդես են գալիս մղումները [68, էջ 42], որոնք հոգեկան գործունեության խթանիչների՝ ֆիզիոլոգիական պահանջմունքների հոգեկան ներկայացուցիչներն են [66, էջ 68] և ձգտում են բավարարման, այսինքն այնպիսի պայմանների ստեղծմանը, որտեղ ֆիզիոլոգիական պահանջմունքները ժամանակավորապես վերանում են: Ընդ որում, պահանջմունքները առաջ են բերում որոշակի լարում, որը սուբյեկտիվորեն ապրվում է որպես տհաճություն, իսկ պահանջմունքների բավարարումը հանգեցնում է լարման թուլացման, որը ապրվում է որպես հաճույք [66, էջ 69]: Ըստ Ֆրոյդի, մարդու հոգեկան ակտիվությունն ուղղված է սեփական պահանջմունքների բավարարման և բավարարման արդյունքում հաճույք ապրելու ուղղությամբ: Այս դեպքում գործում է հաճելիության սկզբունքը [67, էջ 345]:

Մղումները, Ֆրոյդի մետահոգեբանական համակարգում, տեղակայված են հոգեկանի այն մակարդակում, որին նա տալիս է Այն (գերմ. Es) անվանումը: Ընդ որում, պահանջմունքների բավարարման ձգտման մեջ Այն-ը կույր է, նրան հասու չեն արտաքին միջավայրի պայմանները: Հետևաբար, այդ կույր ձգտման մեջ, հաշվի չառնելով արտաքին միջավայրի՝ շատ դեպքերում անբարենպաստ պայմանները, Այն-ը չի կարող խուսափել կործանումից [67, էջ 346]: Այս դեպքում Այն-ին օգնության է գալիս հոգեկանի այն մակարդակը, որը ֆրոյդյան համակարգում ստանում է Ես (գերմ. Ich) անվանումը. «Բավականաչափ կազմավորված Ես չունեցող պարզագույն կենդանի էակը հեշտությամբ է ենթարկվում վնասվածքների: Այդ էակն ապրում է իր մղումների «կույր» բավարարմամբ՝ հաճախ զոհվելով այդ ընթացքում», - գրում է Ֆրոյդը [66, էջ 71]:

Ես-ը, որպես հոգեկանի արտաքին միջավայրին ուղղված մակարդակ, կատարում է միջնորդի դեր ներհոգեկան մղումների և անհատի կենսամիջավայրի միջև: Նա պարտավոր է հետևել արտաքին աշխարհին, իր ընկալումների հետքերում պահպանել նրա ճշմարտացի պատկերը և համեմատելով այն ընթացիկ իրականության հետ,

հեռացնել այն բոլոր հավելումները, որոնք բխում են ներքին աղբյուրից: «Ես-ը, - գրում է Ֆրոյդը, - Այն-ի հանձնարարականով, տիրանում է շարժումների մատույցներին, սակայն փոքր-ինչ հապաղում է պահանջի և գործողության միջև, իրականացնելով մտավոր աշխատանք, որի ընթացքում օգտագործում է փորձից բխող հիշողությունները: Այս ձևով Այն-ի սահմաններում գործընթացները ղեկավարող հաճելիության սկզբունքը գահընկեց է արվում և փոխարինվում իրականության սկզբունքով, որը խոստանում է հուսալիության և հաջողության ավելի բարձր մակարդակ [67, էջ 347]:

Այսպիսով, ընտանիքի անհատական նշանակությունը կայանում է նրանում, որ այն անհատին տալիս է որոշ պահանջմունքների բավարարման հասարակայնորեն ընդունելի և վավերացված հնարավորություն: Սակայն դրան հասնելու համար, անհատը պետք է համապատասխանեցնի ներքին, ներհոգեկան բովանդակություններն ու արտաքին, հասարակական պայմանները:

Չնայած այն հանգամանքին, որ որոշ դեպքերում հետազոտողներն առանձնացնում են մոտիվացիայի անբացահայտ (implicit) և բացահայտ (explicit) տարատեսակները, մոտիվացիայի ձևավորման անձնային և իրադրական գործոններն ու ներքին (intrinsic) և արտաքին (extrinsic) խթանները [88], այդուհանդերձ, առավել ընդունելի է Իլյինի տեսակետը, համաձայն որի՝ «մոտիվացիան և մոտիվները միշտ ունենում են ներքին պայմանավորվածություն, սակայն կարող են կախված լինել նաև արտաքին գործոններից, խթանվել արտաքին ազդակներով» [40, էջ 68]:

Այսպիսով, ընտանիքի հոգեբանական հետազոտության ընթացքում հարկ է հաշվի առնել, որ *ընտանիքի անդամների դրսևորումներն, ուղղորդվելով նրա ներհոգեկան բովանդակություններով՝ անհատական պահանջմունքներով և շարժառիթներով, այդուհանդերձ ենթարկվում են տվյալ հասարակության մեջ ընդունված որոշակի նորմերի, կարգավորվում են դրանցով: Այս դեպքում մենք գործ ունենք ընտանիքի կառուցվածքի անհատական և սոցիալական բաղադրիչների փոխգործության երևույթի հետ:*

Որպես ընտանիքի անդամի դրսևորումները կարգավորող հասարակական մեխանիզմներ հանդես են գալիս ընտանեկան կարգավիճակներն ու դերերը: Արդեն

իսկ դերերի տեսության ստեղծման ժամանակներում դերը դիտարկվում էր որպես հասարակական կառույցի միավոր, որպես վարքի հասարակական պայմանավորվածություն ունեցող մոդել: Իր «Ուսմունք մարդու մասին» աշխատության մեջ Լինտոնը գրում է, որ հասարակության գործառման համար անհրաժեշտ է այն կազմող անհատների կամ անհատների խմբերի միջև փոխադարձ (reciprocal) վարքի օրինակների առկայություն: Վարքի այդպիսի օրինակները կոչվում են կարգավիճակ: Ընդ որում, Լինտոնն առանձնացնում է կարգավիճակ հասկացության երկակի կիրառում. մասնավոր և ընդհանուր: Առաջին դեպքում, երբ կարգավիճակ հասկացությունը կիրառվում է վերացական իմաստով, այն կապվում է վարքի կոնկրետ օրինակի, ձևի հետ: Մյուս կողմից, ընդհանրական առումով, մարդու կարգավիճակը հանդես է գալիս որպես նրա առանձին կարգավիճակների հանրագումար և արտահայտում է հասարակության նկատմամբ նրա դիրքը [85, էջ 113]:

Հասարակական կարգավիճակի լինտոնյան սահմանման մեջ մեզ համար առավել կարևորվում է այն հանգամանքը, որ այստեղ կարգավիճակը դիտարկվում է որպես անհատի իրավունքների և պարտականությունների ամբողջություն: Եվ, ինչպես նշում է Լինտոնը, քանի-որ այդ իրավունքներն ու պարտականություններն իրենց արտահայտումը գտնում են անհատի միջոցով, ապա բավականին դժվար է տարբերակել անհատին նրա կարգավիճակից: Կարգավիճակն, ըստ Լինտոնի, վարքի ներուժային հնարավորությունների ամբողջություն է և կախված անհատից, կարող է իրականացվել որոշակի արդյունավետությամբ, լավ կամ վատ [85, էջ 113]:

Դերը, Լինտոնի սահմանմամբ, ներկայացնում է կարգավիճակի դինամիկ կողմը: Անհատը սոցիալապես զբաղեցնում է որոշակի կարգավիճակ և իրագործում է այն այլ կարգավիճակների հետ հարաբերության մեջ: Երբ նա իրականացնում է իր կարգավիճակը կազմող իրավունքներն ու պարտականությունները, նա կատարում է կարգավիճակին համապատասխանող դեր: Դերերն ու կարգավիճակները կազմում են մեկ ամբողջություն, և, ինչպես նշում է Լինտոնը, դրանց տարաբաժանումն ունի զուտ ակադեմիական նշանակություն. չկան դերեր առանց կարգավիճակների և կարգավիճակներ՝ առանց դերերի [85, էջ 114]:

Ինչպես և կարգավիճակի դեպքում, Լինտոնն առանձնացնում է դեր հասկացության կիրառման երկու տարբերակ: Մի դեպքում խոսքը մասնավոր դերերի մասին է: Յուրաքանչյուր անհատ իրականացնում է վարքի տարբեր սոցիալական նմուշներից բխող բազմաթիվ դերեր: Մյուս դեպքում, դեր հասկացության տակ համախմբվում և ընդհանրացվում են անհատի կողմից իրականացվող բոլոր դերերը: Այս պարագայում դեր հասկացությունը որոշում է հասարակության առջև մարդու պարտականություններն ու հասարակությունից նրա սպասումները [85, էջ 114]:

Ստացվում է, որ *կարգավիճակներն ու դերերը, ունենալով հասարակական պայմանավորվածություն, այդուհանդերձ դրսևորվում են միայն անհատի միջոցով, անբաժան են անհատից և կատարում են նրա վարքի կարգավորման գործառույթ:* Իսկապես, վերլուծելով Լինտոնի տեսությունը Սփրոթն ուղղակիորեն նշում է, որ դերը որոշակի կարգավիճակի համապատասխանող վարքի ձև է: Կարգավիճակն, իր հերթին, հանդես է գալիս որպես հասարակական դիրք, որի շուրջ գոյանում է անհատի վարքը [95, էջ 153]:

Անդրադառնալով ընտանեկան հոգեբանության ոլորտում դերերի տեսության կիրառմանը՝ նշենք, որ ժամանակակից հոգեբանության մեջ ընտանեկան դերը սահմանվում է որպես սոցիալական դերերի այն ամբողջությունը, որն անձինք կատարում են՝ ի հետևանս այն բանի, որ ընտանիք ունեն և նրանում որոշակի դիրք (դիրքեր) են զբաղեցնում: Ընդ որում, ինչպես նշում է Սեդրակ Սեդրակյանը, առավել կոնկրետ ուսումնասիրության դեպքում դերերը բաժանվում են երկու խմբի՝ ներընտանեկան և միջընտանեկան դերերի [11, էջ 52-53]: Մեր հետազոտության համար առավել կարևորվում են ներընտանեկան դերերը: «Ներընտանեկան են այն կարգավիճակներն ու դերերը, - գրում է Սեդրակյանը,- որ ընտանիքի անդամները ստանձնում ու կատարում են միայն այդ ընտանիքի անդամների հետ փոխգործության մեջ մտնելիս: Դրանք են ամուսնական դերերը (կին և տղամարդ), ծնողական դերերը (հայր և մայր), զավակների դերերը (տղա, աղջիկ, քույր, եղբայր)»: Նշված դերերն, ըստ Սեդրակյանի, հատուկ են բջջային ընտանիքին: Ընդլայնված և նահապետական ընտանիքներում կարող ենք հանդիպել այնպիսի ներընտանեկան դերերի, ինչպիսիք են պապի ու տատի, մորաքրոջ, մորեղբոր և այլ դերեր [11, էջ 53]:

Այսպիսով, կարելի է ասել, որ *ընտանիքի անդամի վարքը որոշվում է նրա պահանջմունքներով և նրա կողմից իրականացվող ընտանեկան դերերով: Ընդ որում, չնայած այն հանգամանքին, որ ընտանեկան դերերն ու կարգավիճակներն իրականանում են անհատական մակարդակում, դրանց նշանակությունն ունի ընդգծված հասարակական բնույթ. դրանք ծառայում են հիմնականում հասարակական պահանջմունքների բավարարման նպատակին:*

Հենց այս վերջին առումով է ընտանիքը դիտարկվում որպես հասարակական ինստիտուտ: Ինչպես նշում է Դրուժինինը՝ ընտանիքը ոչ միայն հասարակական խումբ է, այլև հասարակական ինստիտուտ: «Սոցիոլոգների սահմանմամբ, - շարունակում է Դրուժինինը, - «ինստիտուտ» է կոչվում հասարակական դերերի և կարգավիճակների ամբողջությունը, որի նշանակությունը որոշակի հասարակական պահանջմունքի բավարարումն է» [35, էջ 65]: Ընդ որում, եթե ընտանեկան իսնտիտուտը արժեզրկվում է, դա նշանակում է, որ տնային ազգակցական խմբերը չեն կատարում այն գործառույթները, որոնք բավարարում են համապատասխան հասարակական պահանջմունքները [59, էջ 153-155]:

Փաստորեն ստացվում է, որ սեփական պահանջմունքները բավարարելու նպատակով հասարակությունը «ստեղծում» է ընտանիքի կարգավիճակադերային համակարգեր: Իսկ ինչպե՞ս կարելի է պատկերել այդ գործընթացը: Այստեղ հարկ է կանգ առնել ընտանիքի դերային կառուցվածքի և հասարակական կարգի փոխհարաբերությունների խնդրին:

Բանն այն է, որ քաղաքակրթության պատմական զարգացման ընթացքում, հասարակական կարգի փոփոխություններին զուգահեռ որոշակի փոխակերպումներ է ապրում նաև ընտանիքը: Ինչպես նշում է Շնեյդերը՝ «Կարելի է համաձայնել, որ յուրաքանչյուր մշակույթ ծնում է ընտանիքի որոշակի նորմատիվ մոդել, ավելի ճիշտ՝ մոդելների խումբ: Նորմատիվ մոդելի կառուցվածքը ներառում է տարրեր՝ ընտանիքի անդամներին, որոնցից յուրաքանչյուրը բնութագրվում է որոշակի կարգավիճակով, այսինք՝ որոշակի իրավունքներ և պարտականություններ ունեցող դիրքով, որի հետ կապված է վարքի համապատասխան ձևը [77, էջ 39]:

Ընտանիքի դերային կառուցվածքի վրա հասարակական-մշակութային միջավայրի ազդեցությունը կարելի է բացահայտել, համեմատելով ինչպես մարդկային քաղաքակրթության զարգացման տարբեր փուլերում տեղ գտած ընտանիքի պատմական տարատեսակները, այնպես էլ միևնույն ժամանակահատվածում, սակայն էթնոմշակութային տարբեր միջավայրերում գործառող ընտանիքները:

Պատմական զարգացման համատեքստում ընտանիքի դասակարգման առաջին հիմնարար փորձը պատկանում է 19-րդ դարի ամերիկացի ազգագրագետ, սոցիոլոգ Լյուիս Մորգանին: Դիտարկելով ընտանիքը պատմական զարգացման տեսանկյունից՝ Մորգանն առանձնացնում է ընտանիքի հինգ հիմնական տիպեր, որոնցից յուրաքանչյուրը բնորոշվում է ընտանիքի յուրահատուկ կառուցվածքով, ներընտանեկան կապերի և փոխհարաբերությունների որոշակի տարատեսակներով[2]: Դրանք են՝

1. Արյունակցական (consanguine) ընտանիք – ձևավորվում է միևնույն խմբում քույրերի և եղբայրների, զարմիկ-զարմուհիների ազգակցական ամուսնության արդյունքում:

2. Պանալուական (panaluan) ընտանիք – ձևավորվում է հարազատ քույրերի և զարմուհիների, նրանցից յուրաքանչյուրի ամուսնու հետ, ինչպես նաև հարազատ եղբայրների և զարմիկների, նրանցից յուրաքանչյուրի կնոջ հետ ամուսնության արդյունքում: Ընդ որում, պարտադիր չէ, որ, առաջին դեպքում՝ քույրերի ամուսինները, երկրորդ դեպքում՝ եղբայրների կանայք, միմյանց կապված լինեն արյունակցական կապերով: Բոլոր դեպքերում նման ընտանիքները խմբային են՝ տղամարդկանց խումբն ամուսնանում է կանանց խմբի հետ:

3. Զուգամուսնական (syndyasmian, pairing) ընտանիք – ձևավորվում է մեկ զույգի ամուսնության արդյունքում, սակայն առանց բացառիկ կենակցության իրավունքի: Ամուսնությունը շարունակվում է այնքան ժամանակ, քանի-դեռ այն բավարարում է զույգերին:

---

[2] Մորգանի դասակարգման մեջ ընտանեկան փոխհարաբերությունների ձևավորմանը պատմականորեն նախորդում է ցեղային այլազանության (promiscuity) փուլը, որին հերթականությամբ հաջորդում են ընտանիքի առանձնացվող տեսակները:

4. Հայրիշխանական (patriarchal) ընտանիք – ձևավորվում է մեկ տղամարդու մի քանի կանանց հետ ամուսնության արդյունքում, ընդ որում, կանայք մեկուսացվում են:

5. Մենամուսնական (monogamian) ընտանիք – ձևավորվում է մեկ զույգի ամուսնության արդյունքում՝ բացառիկ կենակցության իրավունքով [89, էջ 383-385]:

Ինչպես տեսնում ենք, Մորգանի կողմից ընտանիքների պատմական տարատեսակների դասակարգման հիմքում ընկած են ընտանիքի կառուցվածքային առանձնահատկությունները: Որոշ դեպքերում կարևորվում է այն, թե ի՞նչ ազգակցական կապերի մեջ են գտնվում ամուսինները (քույր-եղբայրներ, զարմիկ-զարմուհիներ), մյուս դեպքում կարևորվում է ամուսնական փոխհարաբերությունների մեջ գտնվող կողմերի քանակությունը (խմբային ամուսնություններ՝ պունալուական և հայրիշխանական ընտանիքներում, զուգամուսնություններ՝ զուգամուսնական և մոնոգամ ընտանիքներում), երրորդ դեպքում՝ կարևորվում է ամուսնական փոխհարաբերությունների գործոնը (բացառիկ կենակցության իրավունքը՝ մենամուսնական ընտանիքի դեպքում և դրա բացակայությունը զուգամուսնական ընտանիքում):

Ընտանիքի որոշ պատմական ձևեր դուրս են մնում Մորգանի համակարգից: Օրինակ, դանիացի փիլիսոփա, սոցիոլոգ և մանկավարժ Կարլ Նիկոլաս Սթարկեի «Պրիմիտիվ ընտանիքն իր առաջացման և զարգացման մեջ» աշխատությունում [96, էջ 141-158] հանդիպում ենք պոլիանդրիկ և լևիրատիվ ամուսնությունների նկարագրությանը: Պոլիանդրիան, ինչ-որ իմաստով հակադրվում է հայրիշխանությանը. այս դեպքում կինը միևնույն ժամանակամիջոցում կարող է ամուսնական փոխհարաբերությունների մեջ գտնվել մի քանի տղամարդու հետ: Լևիրատիվ ամուսնության դեպքում տղամարդը ստիպված է ամուսնանալ իր հանգուցյալ եղբոր կնոջ հետ, կինը՝ հանգուցյալ ամուսնու եղբոր հետ: Եվ, եթե առաջին դեպքում խոսքը վերաբերում է ամուսնական փոխհարաբերությունների քանակական կողմին (բազմամուսնություն), ապա երկրորդ դեպքում կարևորվում է ամուսնացողների միջև ազգակցական կապերի բնույթը (հարս և տեգր): Ամուսնական փոխհարաբերությունների այս տարատեսակները կարող էին լրացնել Մորգանի համակարգը, առավել ևս, որ ընտանիքի պատմական զարգացման ընթացքում դրանց

նշանակությունը, որոշ հեղինակների կարծիքով, չի զիջում Մորգանի կողմից առանձնացված տարատեսակների նշանակությանը [96, էջ 128]: Բոլոր դեպքերում, ինչպես տեսնում ենք, ընտանիքի պատմական տեսակների դասակարգման հիմքում ընկած են ընտանիքի կարգավիճակադերային կառույցի յուրահատկությունները, ամուսնական կապերի բնույթը:

Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ Մորգանի հետազոտությունն ուներ կոնկրետ նշանակություն: Դրա հիմնական նպատակը ընտանիքի պատմական զարգացման դիտարկումն էր մարդկային հասարակության պատմական զարգացման համատեքստում: Հետևաբար, այստեղ առավելապես ընդգծվում են հասարակական կարգի և ընտանիքի բնույթի փոխհարաբերությունները, ընտանիքի այնպիսի տարատեսակները, որոնք համապատասխանում են հասարակության զարգացման փուլերին: Ընդհանրացնելով Մորգանի մոտեցումը՝ Ֆրիդրիխ Էնգելսը նշում է՝ «Այսպիսով, մենք ունենք ամուսնության երեք գլխավոր ձևեր, որոնք, ընդհանուր առմամբ, համապատասխանում են մարդկության զարգացման երեք հիմնական փուլերին: Վայրենությանը համապատասխանում է խմբային ամուսնությունը, բարբարոսությանը՝ զուգամուսնությունը, քաղաքակրթությանը՝ մենամուսնությունը՝ լրացված ամուսնական անհավատարմությամբ և մարմնավաճառությամբ: Զուգամուսնության և մենամուսնության արանքում, բարբարոսության զարգացման բարձրագույն մակարդակում տեղավորվում է ստրկուհիների նկատմամբ տղամարդու գերակայությունն ու բազմակնությունը» [79, էջ 77]: Դա նշանակում է, որ ընտանիքի կարգավիճակադերային կառուցն անմիջականորեն կապված է հասարակական կարգի հետ և փոփոխվում է դրա հետ զուգահեռաբար:

Մորգանի տեսակետը ցույց է տալիս, որ ներկայիս քաղաքակրթության մեջ գերակշռում են (իհարկե, որոշ բացառություններով) մենամուսնության վրա հիմնվող ընտանիքները: Ընտանիքի մյուս ձևերն ունեն ավելի շուտ պատմական կամ ազգագրական արժեք: Այնպես որ, *ժամանակակից ընտանիքի հոգեբանական ուսումնասիրության ընթացքում հիմնական ուշադրության են արժանանում մենամուսնության հիմքերի վրա ձևավորված ընտանիքները:*

Վերադառնալով ընտանիքի պատմական զարգացման ընթացքում հասարակական կարգից կախված դրա կարգավիճակադերային կառուցվածքի փոխակերպումների խնդրին՝ նշենք, որ այս տեսանկյունից կարևորվում է նաև *ամուսնական փոխհարաբերությունների* պատմական ձևափոխման խնդիրը: Հասարակական կարգը որոշում է ոչ միայն ընտանիքի բնույթը, այլև ամուսնական փոխհարաբերությունների ձևը: Վերջինս ունի պատմական պայմանավորվածություն: Այսպես, խոսելով ամուսնական հարաբերությունների պատմական զարգացման մասին՝ Զացեպինը նշում է, որ տարբեր սեռական խմբերին պատկանող անհատների փոխհարաբերությունների կարգավորման ամուսնական ձևը միանգամից չի առաջացել: Ամուսնությունն, ըստ Զացեպինի, տղամարդու և կնոջ փոխհարաբերությունների պատմականորեն պայմանավորված, հասարակության կողմից վավերացված և կարգավորվող ձև է, որը սահմանում է նրանց իրավունքներն ու պարտականություններն ինչպես միմյանց, այնպես էլ նրանց համատեղ երեխաների նկատմամբ: Այն ընտանիքի ձևավորման և դրա հասարակական վերահսկման ավանդական ձև է, հասարակության ինքնապահպանման և զարգացման միջոցներից մեկը [36, էջ 3]:

Ինչպես տեսնում ենք, ընտանիքի և ամուսնական փոխհարաբերությունների պատմական զարգացման հետազոտությունները ցույց են տալիս, իսկ որոշ դեպքերում նաև հենվում են ընտանիքի և ամուսնական փոխհարաբերությունների հասարակական պայմանավորվածության դրույթի վրա: Այս դրույթը հիմնական է նաև միևնույն ժամանակաշրջանում սոցիալ-մշակութային տարբեր միջավայրերում գործառող ընտանիքների համեմատական հետազոտության համար: Օրինակ, Չնաստանում ընտանեկան հարաբերություններին նվիրված աշխատության մեջ հանդիպում ենք ամուսնության մասին օրենքի այնպիսի կետերի, ինչպիսիք են երկամուսնությունը, ընտանիքների որոշմամբ ամուսնությունները, հաշվարկով ամուսնությունները, արյունակցական ամուսնություններն արգելող կետերը [33, էջ 17]:

Ի տարբերություն չինաստանի, աֆրիկյան որոշ երկներում ընդունված է ընտանիքների որոշմամբ ամուսնության պրակտիկան: Այստեղ, ավանդական իրավունքի տեսանկյունից, որպես ամուսնության հիմք հանդես է գալիս մեծ

ընտանեկան կոլեկտիվների միջև ամուսնական համաձայնությունը: Ընդ որում, պայմանավորվածության անմիջական կողմերի՝ ամուսնու և կնոջ հարաբերություններն ածանցվում են ընտանիքների միջև պայմանավորվածությունից [60, էջ 41]: Նույն կերպ և պոլիգամիան, մասնավորապես՝ պոլիգինիան (բազմակնություն), որն ավանդաբար համարվում է աֆրիկյան որոշ ազգությունների ամուսնության ձև և բխում է նրանց կենցաղից, կենսագործունեության պայմաններից [60, էջ 46]:

Ակնհայտ է հասարակական կեցության ազդեցությունն ընտանեկան և ամուսնական հարաբերությունների վրա: Հասարակական կարգը որոշվում է բազմաթիվ գործոններով (բնակլիմայական, քաղաքական, տնտեսական, կենցաղային պայմաններ), որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով որոշում են նաև ընտանիքի և ամուսնության բնույթը: Ինչպես նշում է Կիսլյակովը՝ «Հողագործության կամ անասնապահության, արհեստների, ապրանքային հարաբերությունների, դրամական տնտեսության, գաղաքական կյանքի զարգացման աստիճանն իր կնիքն է դրել նաև այնպիսի ինստիտուտների վրա, ինչպիսիք են ընտանիքն ու ամուսնությունը» [43, էջ 12]:

Ինչպես տեսնում ենք, կախված էթնո-մշակութային և սոցիալ-տնտեսական պայմաններից տարբեր ազգությունների մոտ կարող են տարբերվել ընտանիքի և ամուսնության մասին պատկերացումները, դրանց կառուցվածքային բնութագիրը: Ընդ որում, հասարակական կարգն անմիջականորեն ազդում է ընտանիքի և ամուսնության ձևերի վրա, որոշելով դրանց բնույթը կամ իրավական ակտերի, կամ տվյալ հասարակության մեջ պատմականորեն ձևավորված ավանդական նորմերի միջոցով:

Այսպիսով, կարելի է ասել, որ ընտանիքի կարգավիճակադերային կառուցվածքը նպաստում է ընտանիքի գործառման անհատական և հասարակական մակարդակներում անհատական և հասարակական պահանջմունքների բավարարմանը՝ հնարավորինս համապատասխանեցնելով դրանք: Ընտանիքը միջնորդի դեր է կատարում անհատի և հասարակության միջև, կարգավորելով նրանց փոխհարաբերությունները:

Այստեղ, սակայն, հարկ է անդրադառնալ ընտանիքի գործառման այն մակարդակին, որտեղ հենց ինքն՝ ընտանիքն է զգում սեփական պահանջմունքների

բավարարման անհրաժեշտություն: Մենք արդեն խոսել ենք այն մասին, որ ընտանիքը, որպես սոցիալ հոգեբանական համակարգ, ձգտում է մի կողմից առկա կապերի պահպանմանը, մյուս կողմից՝ զարգացմանն ու գործառման առավել բարձր մակարդակի անցմանը»[51, էջ 10]: Եվ հենց ներընտանեկան կապերի պահպանման ու ամրապնդման տեսանկյունից են առավելապես կարևոր նշանակությամբ օժտվում ընտանեկան կարգավիճակներն ու դերերը:

Բանն այն է, որ, ինչպես յուրաքանչյուր հասարակական կարգավիճակ և դեր, այնդպես էլ ընտանեկան և ամուսնական կարգավիճակներն ու դերերը հանդես են գալիս որպես սպասումների համակարգ [15,16]: Ընդ որում, այդ սպասումները կարող են բխել ինչպես շրջապատող հասարակական միջավայրից, այնպես էլ հենց դերը կատարող անհատից: Օրինակ՝ վերագրվող կամ պահանջվող դերը տվյալ կարգավիճակի հետ անմիջականորեն կապված վարքի հնարավոր ձևերի ամբողջությունն է, որը որոշում է այլ դերակատարների հետ փոխհարաբերություններում հասարակության կողմից անհատին վերագրվող, նրանից սպասվող վարքային դրսևորումների հնարավոր սահմանները: Ի տարբերություն դրան, սուբյեկտիվ դերը սեփական դերից դերակատարի սպասումների ամբողջությունն է [11, էջ 34-35]:

Մի շարք չափանիշներով առանձնացվում են դերային սպասումների տարատեսակներ՝ բացահայտ և քողարկված սպասումներ, ոչ պարզ, համատեքստավորված և ընդլայնված սպասումներ, սցենարում տրված, «դերակատարների» և «լսարանի» սպասումներ [11, էջ 42-50]: Մեզ համար կարևորվում է այն հանգամանքը, որ բոլոր դեպքերում հասարակական կարգավիճակներն ու դերերը հանդես են գալիս որպես վարքային սպասումների համակարգ, որն ուղղորդում և վերահսկում է անհատի վարքը:

Դերին վերագրվող սպասումներն ունեն ընդգծված հասարակական բնույթ, բխում են դերի մասին հասարակության մեջ ընդունված պատկերացումներից: Ինչպես նշում է Սեդրակյանը՝ «յուրաքանչյուր մշակույթ՝ որպես դարերի ընթացքում ձևավորված համակարգ, բավականին կայունացած պատկերացումներ է ստեղծում նաև ներընտանեկան և միջընտանեկան դերերի մասին» [11, էջ 55]:

Լինելով հասարակության անդամ, զարգանալով հասարակության մեջ անհատը յուրացնում է այդ պատկերացումները: Անհատի կողմից հասարակական դերերի յուրացման գործընթացն իր բացատրությունն է գտնում սոցիալական ուսուցման տեսության սահմաններում: Տեսության հիմնադիր Ալբերթ Բանդուրան գրում է, որ ուսուցումը կլիներ չափազանց աշխատատար և համարձակ գորընթաց, եթե մարդիկ իրենց գործողությունների ընթացքում հենվեին բացառապես սեփական փորձի վրա: Բարեբախտաբար, շատ դեպքերում մարդկային վարքը ենթարկվում է մոդելավորման միջոցով ուսուցմանը: Շրջապատողներին դիտելու հիմքի վրա մարդու մոտ ձևավորվում է պատկերացում այն մասին, թե ինչ ձևով պետք է իրականանա նոր վարքաձև: Հետագայում այդ գիտելիքը ծառայում է որպես գործելու ուղեցույց: Նախքան վարքի այս կամ այն ձևն իրականացնելը, մարդիկ կարող են սովորել այլոց, թեկուզև մոտավոր օրինակով: Դրա շնորհիվ հնարավոր է դառնում խուսափել բազմաթիվ սխալներից [22, էջ 40-41]:

Սոցիալական կարգավիճակների և դերերի մասին պատկերացումների յուրացման գործընթացն իրականանում է հասարակական փոխհարաբերություններում, սոցիալականացման ընթացքում: Սոցիալական ուսուցման հետ համատեղ այստեղ մեծ դեր են կատարում ընդօրինակումն ու նույնականացումը [11, էջ153-162]: Արդյունքում, անհատը յուրացնում է ընտանեկան դերերին և կարգավիճակներին համապատասխանող վարքի ձևերը, դրանց մասին մասին հասարակության մեջ շրջանառվող պատկերացումները:

Այս երևույթը նպաստում է ամուսնական կամ ընտանեկան հարաբերությունների կառուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Բանն այն է, որ որոշ դեպքերում՝ «Ամուսիններից յուրաքանչյուրն ամուսնանալու պահին ունենում է ձևավորված պահանջմունքներ, որոնք չեն կարող նույնական լինել ամուսնական զուգընկերների մոտ: Հաճախ այդ պահանջմունքները լինում են հակասող» [49, էջ 530]: Եվ ավելին, որոշ դեպքերում զույգերի մոտ չեն համապատասխանում հենց ամուսնանալու շարժառիթները:

Այս առումով բավականին հետաքրքրական կարող է լինել սիրո պահանջմունքի վերլուծությունը: Որոշ հոգեբանների կարծիքով սերը ամուսնության հիմանական

դրդապատճառն է և ընկած է ամուսնական զույգերի միավորման հիմքում [41, էջ 77]: Այդուհանդերձ, նույնիսկ այն դեպքերում, երբ զուգընկերներն ամուսնանում են փոխադարձ սիրո առկայության պայմաններում, դա դեռևս չի երաշխավորում նրանց ամուսնական միության ամրությունը: Խոսելով այս խնդրի վերաբերյալ՝ Եվգենի Իլյինը ներկայացնում է իր տեսակետը, համաձայն որի տվյալ երևույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ շատ դեպքերում միևնույն մոտիվի («սիրո հիման վրա ամուսնանալու») տակ կարող են թաքնված լինել տարբեր պահանջմունքներ [40, էջ 223]:

Իսկ ի՞նչ տարբեր կերպերով կարող է դրսևորվել սիրելու և սիրված լինելու պահանջմունքը: Իր «Մոտիվացիա և անձ» աշխատության մեջ Աբրահամ Մասլոուն գրում է՝ «Սիրո պահանջմունքը ենթադրում է ինչպես տալու, այնպես էլ ստանալու պահանջմունք: Երբ այդ պահանջմունքները բավարարված չեն, անձն ունենում է բարեկամների, զուգընկերոջ կամ երեխաների բացակայության սուր ապրում: Այսպիսի անձը խմբում կամ ընտանիքում տեղ զբաղեցնելու նպատակով անկշտաբար ձգտում է մարդկանց հետ հարաբերությունների և բոլոր ուժերով փորձում է հասնել այդ նպատակին» [54, էջ 65-66]:

«Սիրելու արվեստը» աշխատության մեջ Էրիխ Ֆրոմը, որպես մարդկային ուժեղագույն պահանջմունք դիտարկում է այլ մարդու հետ միաձուլվելու ձգտումը: Նա առանձնացնում է միաձուլվելու պահանջմունքի բավարարման այնպիսի հնարավոր տարբերակներ, ինչպիսիք են՝ ստեղծագործական գործունեությունը, օրգիաստիկ միաձուլումը, կոնֆորմիզմը: Այդուհանդերձ, ինչպես նշում է Ֆրոմը, դրանք բոլորն ընդամենը էկզիստենցիալ խնդրին տրվող մասնավոր պատասխաններ են: Այդ խնդրի ամբողջական պատասխանն այլ մարդու հետ սիրային միաձուլումն է [69, էջ 88]:

Մյուս կողմից, սիրո պահանջմունքը կարող է ունենալ ընդգծված ախտաբանական բնույթ: Ասվածի վառ օրինակ է Հոռնիի կողմից բացահայտված «սիրո և կապվածության նևրոտիկ պահանջմունքը»: Հոռնին գրում է՝ «Իսկապես, եթե մարդը զգում է, որ այս սպառնալի և թշնամական աշխարհում նա հիմնովին անօգնական է, ապա սիրո որոնումը կարող է լինել ցանկացած տիպի համակրանքի, օգնության և հասկացման հասնելու առավել տրամաբանական և կարճ ճանապարհ» [74, էջ 74]:

Այնպես որ, եթե սերն ու կապվածությունը մարդուն անհրաժեշտ են միայն սեփական տագնապայնությունից ազատվելու համար, ապա դիմացինի հետ նրա զգացմունքներն ընդամենը սիրո խաբկանք են: Այս դեպքում մարդը կորցնում է սիրելու ընդունակությունը, հաշվի չի առնում դիմացինի անձը, նրա յուրահատկությունները, թերությունները, պահանջմունքներն ու ցանկությունները [74, էջ 77-78]: Բնական է, որ այսպիսի սիրո հողի վրա կառուցված հարաբերությունները չեն կարող ամուր լինել:

Սակայն նևրոտիկ պահանջմունքը ամուսնական միությամբ միավորվելու դրդապատճառների տարբերության միակ պատճառը չէ: Որոշ դեպքերում ամուսնությամբ միավորվող անհատների նպատակները կարող են տարբերվել՝ դուրս չգալով հոգեկան առողջության թույլատրելի սահմաններից: Այսպես, պրոֆեսոր Տրոիցկին նշում է, որ մարդկային մտքի պատմության ընթացքում հանդիպում ենք ամուսնությանը վերաբերող տեսությունների երկու ուղղության: Նա դրանց տալիս է ռեալիստական և իդեալիստական տեսություններ անվանումը: Համաձայն առաջինի ամուսնությունը ծառայում է բազմանալու, սերունդներ թողնելու նպատակին: Երկրորդ մոտեցման տեսանկյունից ամուսնությունը կապված է անհատի կատարելագործվելու, ամբողջականանալու ձգտման հետ [72, էջ 58-67]: Բնական է, որ, եթե ամուսնական զույգի անդամների մոտ տարբերվում են ամուսնության մասին պատկերացումները, նրանցից մեկը ռեալիստական, իսկ մյուսը իդեալիստական կողմնորոշում է ցուցաբերում ամուսնության նկատմամբ, ապա հնարավոր է, որ նրանց միջև առաջ գան որոշակի տարաձայնություններ:

Ինչպես տեսնում ենք, այս դեպքում դարձյալ գործ ունենք զուգընկերների՝ ընտանիքի հետ կապվող պահանջմունքների անհամապատասխանության հետ, սակայն, ի տարբերություն նևրոտիկ պահանջմունքի, նշվածները տարբերվում են ընդամենը իրենց միտվածությամբ: Դա բնական է, քանի-որ զուգընկերները, մինչև ամուսնանալը, շատ պահանջմունքներ բավարարում էին իրարից անջատ: Սակայն ամուսնությունը, ամուսնության փաստը, ամուսնական դերերի և կարգավիճակների ստանձնումը ստիպում է, որ նրանք վերանայեն իրենց հետագա դրսևորումները: «Ամուսնության նպատակը, - գրում է Սիսենկոն, - համատեղ գործունեության

կազմակերպում է, որի նպատակը ամուսինների նյութական, հոգևոր, սեռական և այլ պահանջմունքների առավել ամբողջական բավարարումն է: Անհրաժեշտ է զուգընկերների՝ մինչ այդ առանձին և անկախ բավարարված պահանջմունքների և հետաքրքրությունների համապատասխանեցում» [62, էջ 551]:

Նմանատիպ կարծիք են արտահայտում Լևկովիչը և Զուսկովան: Նրանց կարծիքով ամուսինների համատեղելիությունը որոշվում է մի շարք պահանջմունքների համատեղ բավարարման հնարավորությամբ, ինչի համար անհրաժեշտ է փոխզիջումների, դիմանցինի պահանջմունքների հանդեպ հարգանքի, զիջողականության, փոխադարձ վստահության պատրաստակամություն [49]:

Այդ ամենը հնարավոր է միայն ամուսնական դերերի յուրացման և իրականացման դեպքում: Այնպես որ, դիտարկելով ընտանիքի կառուցվածքը, անդրադառնալով դրա կառուցվածքային փոքրագույն բաղադրիչին՝ անհատին, հարկ է հաշվի առնել, որ ընտանիքի ներսում նա հանդես է գալիս որպես հոգե-հասարակական էակ, որի դրսևորումները, բխելով սեփական պահանջմուքններից, ուղղորդվում են հասարակության կողմից սահմանված ընտանեկան կարգավիճակներով և դերերով: Ընտանիքի գործառման արդյունավետությունն էականորեն կախված են ընտանիքի անդամի նշված երկու կողմերի համապատասխանության աստիճանից:

Այսպիսով, ամփոփելով առաջին գլխի արդյունքները, ներկայացնենք մեր եզրակացությունները՝

Ընտանիքի, որպես հոգեբանական հետազոտության առարկայի վերը վերլուծված առանձնահատկությունները դրսևորվում են դրա գործառման՝ ձևավորման և զարգացման ընթացքում: Ընտանիքի զարգացման ընթացքը որոշվում է մի կողմից որպես համակարգ դրա ինքնակազմակերպման, ինքնապահպանման, հարմարման և զարգացման ձգտումով, մյուս կողմից ընտանիքի վրա բազմաթիվ անհատական և հասարակական գործոնների ազդեցությամբ, որոնք կարող են ինչպես նպաստել, այնպես էլ խոչընդոտել ընտանիքի օրինաչափ, ներդաշնակ գոյատևմանը: Ընտանիքի գործառման հիմքում ընկած մեխանիզմների բացահայտման նպատակով քննարկման

հաջորդ բաժնում մենք կանդրադառնանք ընտանիքի զարգացման օրինաչափություններին:

Տեսական վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել որ՝

- Ընտանիքն այնպիսի սոցիալական խումբ է, որի անդամները գտնվում են ամուսնական, ազգակցական կամ դրանց հավասարեցված անմիջական, կրկնվող, երկարատև կապերի մեջ, ընդունում և գիտակցում են այդ կապերը[3], դրանց միջոցով կազմում են մեկ կառուցվածքագործառութային ամբողջություն և իրենց զգում, ընկալում կամ ընդունում են որպես այդ իսկ ամբողջության մաս:
- Ընտանիքը բաց սոցիալ-հոգեբանական համակարգ է, որի գործառումն իրականանում է անհատ-ընտանիք-հասարակություն-անհատ··· փոխազդեցությունների անընդհատ շղթայում և կախված է այդ իսկ փոխազդեցությունների արդյունքում առաջ եկող փոխակերպումների բնույթից: Ընդ որում, ընտանիքը, որպես գործառող բաց համակարգ, բնութագրվում է ինքնակազմակերպման, ինքնապահպանման, հարմարման և զարգացման ձգտումով:
- Ընտանիքի հոգեբանական հետազոտության, ինչպես նաև դրա հետ տարվող հոգեբանական աշխատանքի ընթացքում առավել նպատակահարմար է ընտանիքի գործառույթների դասակարգման փոխարեն դիտարկել յուրաքանչյուր առանձին գործառույթի նշանակությունը հասարակության, ընտանիքի, որպես հասարակական խմբի և ընտանիքի առանձին անդամի համար, պարզել դրա հասարակական, ընտանեկան և անհատական կողմերի հնարավոր փոխհարաբերությունները:
- Ընտանիքի անդամների դրսևորումներն, ուղղորդվելով նրա ներհոգեկան բովանդակություններով՝ անհատական պահանջմունքներով և շարժառիթներով, այդուհանդերձ ենթարկվում են տվյալ հասարակության մեջ ընդունված որոշակի նորմերի, կարգավորվում են դրանցով: Այս դեպքում մենք գործ ունենք ընտանիքի կառուցվածքի անհատական և սոցիալական բաղադրիչների փոխգործության երևույթի հետ:

[3] Մասնավոր դեպքերում (նորածին և մանկահասակ երեխաներ, գիտակցության կորուստով հիվանդներ և այլն) այդ կապերը կարող է գիտակցել ընտանեկան փոխհարաբերությունների միայն մի կողմը:

- Ընտանիքի անդամի վարքը որոշվում է նրա պահանջմունքների և նրա կողմից իրականացվող ընտանեկան դերերի փոխգործությամբ: Ընդ որում, չնայած այն հանգամանքին, որ ընտանեկան դերերն ու կարգավիճակներն իրականանում են անհատական մակարդակում, դրանց նշանակությունն ունի ընդգծված հասարակական բնույթ. դրանք ծառայում են հիմնականում հասարակական պահանջմունքների բավարարման նպատակին:

Գլուխ 2. ԸՆՏԱՆԻՔԻ ԳՈՐԾԱՌՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատանքի այս հատվածում անդրադառնանք ընտանիքի գործառման սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններին: Փորձենք բացահատել ընտանիքի դրսևորումների օրինաչափությունները, գտնել այն սոցիալ-հոգեբանական գործոնները, որոնք ազդում են ընտանիքի գործառման վրա, որոշում են դրա ընթացքը:

Նախորդ գլխում տրվեց ընտանիքի, որպես սոցիալ-հոգեբանական համակարգի կառուցվածքագործառութային բնութագիրը: Այդուհանդերձ, գործառույթի և կառուցվածքի հետ համատեղ որպես ընտանիքի բնութագրիչ հանդես է գալիս նաև դրա դինամիկան, ինչը ենթադրում է, որ իր գործառման ընթացքում ընտանիքն անցնում է որոշակի ուղի, կրելով տարաբնույթ գործոնների ազդեցություն, ենթարկվում է փոփոխությունների:

Դինամիկական տեսանկյունից ընտանիքի հետազոտությունը հետապնդում է երկու նպատակ: Առաջին նպատակն ընտանիքի կյանքի ուղու առանձին փուլերի առանձնացումն է՝ դրանց քանակական և որակական բնութագրերի տեսանկյունից: Երկրորդ նպատակը ընտանիքի գործառման ընթացքում դրանում առկա քանակական և որակական փոփոխությունների ու փոխակերպումների հիմքում ընկած գործոնների՝ պատճառների բացահայտումն է: Հետևաբար, ընտանիքի, որպես սոցիալ-հոգեբանական համակարգի փոխակերպումների հիմքում ընկած օրինաչափությունների բացահայտման համար անհրաժեշտ է ուսումնասիրել ընտանիքի զարգացման ուղին և այն գործոնները, որոնք հանդես են գալիս որպես այդ իսկ փոխակերպումների պատճառ: Ասվածից պարզ է դառնում, որ ընտանիքի կյանքի ուղու հետազոտության հիմքում, որպես սկզբունք ընկած են զարգացման և պատճառականության սկզբունքները:

Զարգացման սկզբունքն ընդհանուր գիտական և հոգեբանական բացատրական սկզբունք է, որը ենթադրում է զարգացման գործընթացում որոշակի պատճառների ազդեցությամբ երևույթների փոխակերպման օրինաչափությունների դիտարկումը և ներառում է ամբողջական համակարգի մեջ այդ իսկ երևույթների ներգրավվածության

գործոնով դրանցում իրականացող փոխակերպումների պայմանավորվածության դրույթը [58, էջ 368]:

Ընտանիքի հոգեբանական հետազոտության համատեքստում այն կիրառվում է երեք նշանակություններով: Առաջին դեպքում խոսքն ընտանիքի զարգացման փուլերի մասին է, երկրորդ դեպքում՝ ընտանիքում անհատի զարգացման, և վերջապես, երրորդ դեպքում՝ ընտանիքի վրա տրանսգեներացիոն ազդեցությունների մասին: Վերջին դեպքում ընտանիքի դրսևորումները դիտարկվում են մի քանի սերունդ ներառող ժամանակահատվածում, և բացահայտվում են տարբեր սերունդների մոտ կրկնվող զարգացումներն ու դրսևորումները [92, էջ 12-13]:

Մեր հետազոտության մեջ առավել մեծ ուշադրության կարժանանա զարգացում հասկացության կիրառման առաջին տարբերակը, որը վերաբերում է ընտանիքի, որպես սոցիալ-հոգեբանական համակարգի զարգացման փուլերին: Այստեղ, սակայն, հարկ է պարզաբանել՝ արդյո՞ք ընտանիքի կյանքի ուղու հետազոտության ընթացքում մենք բոլոր դեպքերում գործ ունենք զարգացման հետ:

Սեդրակ Սեդրակյանի կարծիքով՝ ոչ: Իր «Ընտանիքի հոգեբանություն (Մեթոդաբանական վերլուծություն) » աշխատության մեջ նա գրում է՝ «Ընտանիքին նվիրված գիտական գրականության մեջ, որպես կանոն, խոսում են ընտանիքի զարգացման մասին, առանձնացնում նրա տարբեր փուլեր, լռելյայն ընդունելով, թե իբր սկզբից մինչև վերջ գործ ունենք այդ սոցիալական խմբի զարգացման խնդրի հետ: Վիճելի համարելով այդ տեսակետը՝ գտնում ենք, որ այն լուրջ վերանայման կարիք ունի և այդ նպատակով առաջադրում ենք մի շարք դրույթներ.

1. Ընտանիքն իր գոյության ընթացքում անցնում է փոփոխությունների մի երկարատև գործընթաց, որը կարելի է բաժանել փուլերի (կամ շրջանների): Դիտարկելով բջջային ընտանիքի կյանքի ուղին՝ ստեղծվելու պահից մինչև նրա վերացումը (երբ ամուսինները մահանում են), կարելի է տեսնել փոփոխությունների մի ամբողջ շղթա, որը և անհրաժեշտ է նկարագրել հնարավորինս մանրամասնորեն:

2. Ամեն մի փոփոխություն չէ, որ կարելի է զարգացում համարել: Որոշ փոփոխություններ, անկասկած, ունեն զարգացման բնույթ, բայց կան նաև ընտանիքի կենսագործունեության այնպիսի փուլեր, որոնք կամ լրիվ հետընթաց (ռեգրեսիվ) բնույթ

ունեն, կամ էլ պարունակում են քայքայման, հետաճի տարրեր: Օրինակ, ինչպե՞ս կարելի է ընտանիքից երեխաների վաղաժամ հեռացումն անվանել առաջընթաց կամ զարգացում, հասկանալի չէ: Երբ ընտանիքից հեռանում են այնպիսի որակական երևույթներ, որոնք ընտանիքի պատմական-անհատական զարգացման արդյունքներ են, ապա դա ոչ թե զարգացում է, այլ քայքայում, ներընտանեկան դերերի և հարաբերությունների նվազում:

3. Յուրաքանչյուր ընտանիք ունի ինչպես առաջադիմական զարգացման, այնպես էլ հետընթացի, քայքայման և ճգնաժամերի փուլեր: Այդպիսին է իրականությունը, որը և պետք է արտացոլվի ընտանիքի հոգեբանության գիտական տեսության մեջ: Ի դեպ, նույնը վերաբերում է նաև մյուս սոցիալական խմբերին, թեև ընտանիքի պարագայում այդ երևույթը դիտվում է շատ ավելի պարզորոշ, և ընտանեկան-ավանդական արժեքների կորուստը ավելի շոշափելի կարող է դառնալ ողջ հասարակության համար» [11, էջ 133-134]: Ինչպես տեսնում ենք, Սեդրակյանի կողմից ընտանիքի կյանքի ուղու փուլերը դիտարկվում են ոչ միայն դրանց քանակական և որակական տարբերությունների, այլև ուղղվածության՝ հետընթացի կամ առաջընթացի չափանիշով:

Ըստ այդմ, Սեդրակյանն առանձնացնում է երևույթի զարգացում, երևույթի հետընթաց և երևույթի լճացում հասկացությունները: «***Երևույթի զարգացում (կամ առաջադիմական, պրոգրեսիվ փոփոխություն)*** ասելով, - գրում է Սեդրակյանը, - հասկանում ենք այն գործընթացը, որի շնորհիվ տվյալ երևույթը. ա) ընդլայնվում է, այսինքն՝ իր մեջ ավելի շատ տարրեր է ներառում (կամ նույնիսկ ծնում է նոր տարրեր), բ) դրանում ծագում են որակապես նոր և առողջ երևույթներ, ինչպես նաև բաղադրիչների այնպիսի կապեր, որոնք մինչ այդ կամ գոյություն չունեին, կամ էլ առկա էին, այլ կերպ, գ) այդ որակական նորագոյացություններն իրենց մեջ ունեն ինչպես առաջադիմության, այնպես էլ հետադիմության նախադրյալներ» [11, էջ 34]:

Ի տարբերություն զարգացման, **հետընթացի** դեպքում երևույթն աստիճանաբար, իսկ երբեմն էլ արագությամբ, կորցնում է իր որոշ բաղադրիչներ և քայքայվելով վերածվում է որակական ավելի ցածր աստիճանի:

Երևույթի լճացումը կարծես միջանկյալ դիրք է գրավում զարգացման և հետընթացի միջև: Սա այն վիճակն է, որի դեպքում՝ ա) համակարգն ամբողջությամբ որոշակի ժամանակահատվածում իր կառուցվածքով և գործառույթներով նույնն է մնում, բ) իր մեջ ունի առավելապես հետագա քայքայման նախադրյալներ, գ) կարող է առաջադիմական զարգացման նոր փուլ մտնել որոշ հանգամանքների ազդեցության տակ (եթե օրինակ, դրա մեջ նոր տարրեր են ներմուծվում):

«Այդ հայեցակարգի տեսանկյունից, - շարունակում է Սեդրակյանը, - դժվար չէ նկատել, որ ընտանեկան կյանքի ուղին ներառում է ինչպես զարգացման, այնպես էլ հետաճի, քայքայման փուլեր: Ընտանեկան կյանքի փուլերն առանձնացնելիս յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է նշել, թե ինչպիսին է տվյալ փուլը՝ արդյո՞ք այն զարգացման, առաջադիմության, թե՞ հետաճի, քայքայման փուլ է: Ընդ որում, հարկ է նշել ընտանիքի կյանքի ուղու ևս մեկ առանձնահատկություն՝ ***բջջային ընտանիքի դեպքում դրա կյանքի սկզբնական փուլերը, որպես կանոն, զարգացման փուլեր են, իսկ միջինից հետո եկող փուլերը (մինչև ամուսինների մահը)՝ հիմնականում լճացման կամ հետընթացի փուլեր են,*** թեև նրանցում ևս կարող են դիտարկվել առաջադիմության տարրեր (օրինակ՝ ընտանիքի անդամների հետագա հոգեբանական հասունացումը)» [11, էջ 134-135]: Ընտանիքի կյանքի ուղու հետազոտության ընթացքում մենք կառաջնորդվենք Սեդրակյանի կողմից առաջադրված հայեցակարգով:

Ընտանիքի կյանքի ուղու հետազոտության հաջորդ սկզբունքը դետերմինիզմի, ավելի ստույգ՝ պատճառականության սկզբունքն է: Ինչպես վերը նշվեց, ընտանիքը, որպես բաց համակարգ, գտնվում է անընդհատ փոխազդեցությունների մեջ: Բնական է, որ այդ փոխազդեցությունների ընթացքում որոշ գործոններ առաջ են բերում համապատասխան հետևանքներ՝ հանդես գալով որպես դրանց պատճառ:

Պատճառահետևանքային կապերն, ընդհանրապես, բացահայտվում են դետերմինիզմի սկզբունքի կիրառմամբ: Այն գիտական իմացության գլխավոր բացատրական սկզբունքներից է, որը դնում է հետազոտվող երևույթների՝ էմպիրիկ վերահսկման ենթարկվող գործոնների օրինաչափ ազդեցությամբ բացատրության պահանջ: Դետերմինիզմի սկզբունքը հանդես է գալիս պատճառականության (տվյալ իրադրությանը նախորդող և այն պայմանավորող գործոններ), համակարգային

դետերմինիզմի (համակարգի առանձին բաղադրիչների կախվածությունը ամբողջի յուրահատկություններից), հակադարձ կապի ձևով դետերմինիզմի (հետևանքներն ազդում են դրանք առաջ բերած պատճառի վրա), ստատիկ դետերմինզմի (համանման պատճառներն առաջ են բերում տարբեր արդյունքներ՝ կախված ստատիկ օրինաչափություններից) և նպատակային դետերմինիզմի (նպատակը որոշում է դրան հասնելու գործընթացի յուրահատկությունները) տեսքով [58, էջ 291]:

Ինչպես տեսնում ենք երևույթների և դրանց հիմքում ընկած գործոնների միջև կապերը կարող են տարբերվել: Մեր հետազոտության համատեքստում առավել կարևորվում է պատճառականության սկզբունքը, որի ամբողջական ձևակերպումը գտնում ենք Բունգեի մոտ: Վերլուծելով պատճառականության սկզբունքի տարբեր ձևակերպումներ՝ Բունգեն տալիս է դրա հետևյալ վերջնական ձևակերպումը՝ «Համանման պատճառները համանման պայմաններում մեծամասամբ առաջ են բերում համանման գործողություններ [23, էջ 69] »:

Բունգեի մոտ հիմնականում դիտարկվում է պատճառականության գծային տարատեսակը, դուրս են բերվում դրա էական յուրահատկությունները [23, էջ 143-201]: Սակայն ժամանակի ընթացքում պատճառականության սկզբունքն ապրում է որոշակի զարգացում: Այսպես, ընտանիքի հոգեբանության հետազոտության Փինսոֆի և Լեբովի կողմից առաջարկած հարացույցում դիտարկվում են պատճառականության երեք՝ գծային, փոխադարձ և տարբերակված ձևերը: Ընդ որում, հեղինակները նշում են, որ ներկայումս, ընտանիքի հոգեբանական հետազոտությունների համար առավել արդյունավետ կարող է լինել դիֆերենցիալ (տարբերակված) պատճառականության տեսությունը: Այն հիմնվում է փոխադարձ պատճառականության հայեցակարգի վրա, համաձայն որի՝ համակարգի յուրաքանչյուր մաս պատճառականորեն ազդում է մյուս մասերի վրա: Փոխադարձ պատճառականության հայեցակարգն, իր հերթին, փոխարինում է գծային պատճառականության հայեցակարգին [92, էջ 9]:

Պարզաբանելով իրենց տեսակետը՝ Փինսոֆն ու Լեբովը նշում են, որ նախկինում թերապևտների կողմից ընտանիքը դիտարկվում էր որպես պատճառային գործակից այնպիսի հոգեշեղումների դեպքում, ինչպիսիք են շիզոֆրենիան և աուտիզմը: Այս տեսանկյունից պատճառականությունը դիտարկվում էր որպես գծային, միակողմանի

երևույթ: Հետագա հետազոտությունները, սակայն, ցույց տվեցին, որ այս մոտեցումը արդյունավետ չէ, քանի-որ լուրջ շեղում ունեցող անհատն իր կողմից ազդում է ընտանիքի վրա՝ որոշելով դրա, որպես ամբողջի դրսևորումները: Ըստ այդմ, առաջ քաշվեց փոխադարձ պատճառականության հայեցակարգը, որը մեծ նշանակություն ունեցավ ընտանեկան թերապիայի զարգացման համար [92, էջ 9]:

Այնուամենայնիվ, չնայած փոխադարձ պատճառականության հայեցակարգը բավարարում է ընտանիքի հոգեբանական հետազոտությանը ներկայացվող պահանջներին և գծային ու միակողմանի պատճառականության հայեցակարգի համեմատությամբ առավել արդյունավետ է, այն բավականին խնդրահարույց է, քանի-որ բոլոր պատճառային կապերը դիտարկում է որպես հավասարապես կարևոր, այսինքն՝ ամեն ինչն ազդում է ամեն ինչի վրա: Դա նշանակում է, օրինակ, որ շիզոֆրենիայի առաջացման ընթացքում հավասարապես կարևորվում են ժառանգական և ընտանեկան գործոնները, ինչը, սակայն, չի հաստատվում հետազոտություններով [92, էջ 10]:

Տարբերակված պատճառականության հայեցակարգը կարծես լրացնում է այդ բացը: Այստեղ բոլոր պատճառային ազդեցությունները չեն դիտարկվում որպես հավասարազոր, չեն օժտվում հավասար նշանակությամբ: Ազդեցության ոլորտում համակարգի մասերը կամ գործոններն ունենում են տարբերակված (նշանակության իմաստով) ազդեցություն տարբեր գործընթացների և հետևանքների վրա: Այնպես որ, օրինակ՝ շիզոֆրենիայի դրսևորման համար ժառանգական գործոնն ունի ավելի մեծ նշանակություն, քան շրջակա միջավայրի գործոնը, չնայած հայտնի է, որ վերջինիս դերը մեծ է շիզոֆրենիկ ախտանիշների ընթացքի որոշման համար [92, էջ 10]:

Մեր հետազոտության շրջանակներում, ընտանիքի գործառման օրինաչափությունների բացահայտման ընթացքում մենք կառաջնորդվենք հենց տարբերակված պատճառականության սկզբունքով, համաձայն որի՝ *համանման պատճառները համանման պայմաններում մեծամասամբ առաջ են բերում համանման հետևանքներ: Հետևանքներն, իրենց հերթին, կարող են ազդել իրենց հիմքում ընկած պատճառների վրա: Ընդ որում, պատճառահետևանքային շղթայում բազմաթիվ*

գործոնների առկայության պայմաններում դրանք օժտվում են տարբեր նշանակությամբ:

2.1. Ընտանիքի կյանքի ուղին. ընտանիքի կառուցվածքա-գործառութային փոխակերպումները

Ընտանիքի կյանքի փուլերի պարբերացման ընթացքում տարբեր հետազոտողներ պարբերացման հիմքում դնում են տարբեր չափանիշներ: Այսպես, ընտանիքի կյանքի փուլավորման Դյուվալի առաջարկած տարբերակում որպես պարբերացման հիմք է ծառայում ընտանիքում երեխաների առկայության և նրանց տարիքի չափանիշը: Ըստ այդմ առանձնացվում են ընտանեկան պարբերության հետևյալ ութ փուլերը՝ I-ձևավորվող ընտանիք, ամուսիններն ամուսնացած են, պակաս քան հինգ տարի, ընտանիքում երեխաներ չկան, II –մանկածին ընտանիք, ավագ երեխայի տարիքը մինչև 2 տարեկան 11 ամսեկան, III – նախադպրոցական տարիքի երեխաներով ընտանիք, ավագ երեխայի տարիքը 3 տարեկանից, մինչև 5 տարեկան 11 ամսեկան, IV-դպրոցական տարիքի երեխաներով ընտանիք, ավագ երեխայի տարիքը 6 տարեկանից, մինչև 12 տարեկան 11 ամսեկան, V- դեռահաս երեխաներով ընտանիք, ավագ երեխայի տարիքը 13 տարեկանից, մինչև 20 տարեկան 11 ամսեկան, VI – երեխաներին դեպի կյանք «ճանապարհող» ընտանիք (փուլը սկսում է այն պահից, երբ առաջին երեխան լքում է ծնողական ընտանիքը և ավարտվում ՝ երբ վերջին երեխան է այն լքում), VII- հասուն տարիքի ամուսինները (փուլը սկսում է այն պահից, երբ ընտանիքում երեխաներ չեն մնում և ավարտվում ամուսինների աշխատանքային գործունեության ավարտի հետ համատեղ), VIII-ծերացող ընտանիք, ամուսինների հանգստի անցնելու պահից մինչև նրանցից մեկի մահը:

Որոշ հետազոտողներ, տալով ընտանիքի կյանքի ուղղու պարբերացում, ուղղակի համադրում են ընտանիքի և դրա անդամի կյանքի ուղիները: Այսպես, Գլիկի, Բերմանի և Քլարկինի առաջարկած տարբերակում որպես պարբերացման չափանիշ է ծառայում անհատի տարիքը: Ըստ այդմ առանձնացվում են չորս խմբեր (20-40, 40-60, 60-ից ավելի և 75 ավելի տարեկան), որոնցից յուրաքանչյուրին հատուկ են ընտանեկան փոխհարաբերությունների և ընտանեկան կյանքի կազմակերպման որոշակի յուրահատկություններ [94, էջ 14]:

Ընտանիքի կյանքի պարբերության փուլերի նույնատիպ տարբերակ է առաջարկվում Քարթերի և Մաք Գոլդրիքի կողմից: Այստեղ ընտանիքի կյանքի ուղին համադրվում է անհատական կյանքի ուղուն: Առաջին փուլը ծնողական ընտանիքի հետ անհատի փոխհարաբերությունների փուլն է: Դրան հաջորդում է երկրորդ՝ տունը լքելու փուլը, երբ անհատն առանձնանում է ծնողական ընտանիքից, ծնողների հետ նրա հարաբերությունները կառուցվում են հավասարության սկզբունքով, նա կառուցում է անձնական կապեր այլ մարդկանց հետ, սկսում է սեփական կարիերան: Երրորդ փուլը մինչամուսնական փուլն է, որը բնութագրվում է զուգընկերոջ ընտրությամբ, անձնական կապերի լայնացմամբ, անհատն ամուսնանալու որոշում է ընդունում: Հաջորդ փուլը երեխաներ չունեցող զույգի փուլն է, որտեղ զարգանում և կատարելագործվում են համատեղ կյանքի միջոցները, վերակառուցվում են հարաբերությունները ծնողական ընտանիքի հետ: Հինգերորդ փուլը մանկահասակ երեխաներով ընտանիքի փուլն է: Ամուսինների փոխհարաբերությունները փոփոխվում են՝ հարմարվելով երեխաների ներկայությանը, անհատն ընդունում է ծնողի դերը: Ծնողական ընտանիքի հետ փոխհարաբերություններում ավելանում են տատիկի և պապիկի դերերը:

Վեցերորդ փուլը բնութագրվում է որպես դեռահաս երեխաներով ընտանիքի փուլ: Ծնող-երեխա հարաբերությունները կարգավորվում են այնպես, որ դեռահասներին տրվի ավելի շատ անկախություն: Ամուսնական փոխհարաբերությունները կենտրոնանում են ամուսնության և կարիերայի խնդիրների վրա: Անհատը պատասխանատու է դառնում ծնողական ընտանիքի խնամքի համար: Յոթերորդ փուլում հասունացած զավակների հետ կառուցվում են հավասարը-հավասարին փոխհարաբերություններ, զավակները կյանք են մտնում, լքում ծնողական ընտանիքը: Ութերորդ փուլը բնութագրվում է ֆիզիոլոգիական վիճակի վատթարացմամբ, ընտանիքի ապահովման մեջ մեծանում է զավակների դերը, հնարավոր է զուգընկերոջ կորուստ, անհատը վերանայում է իր անցած կյանքի ուղին և պատրաստվում մահվան [80, էջ 6]:

Որոշ դեպքերում ընտանիքի կյանքի փուլերն առանձացվում են համատեղ ամուսնական կյանքի ժամանակահատվածի չափանիշով: Օրինակ, դասակարգելով

ընտանիքներն ըստ ամուսնական կյանքի ժամանակահատվածի, Զացեպինն առանձնացնում է ընտանիքի վեց տարատեսակ: Առաջինը նորապսակների ընտանիքն է, որտեղ ամուսինները դեռևս գտնվում են էյֆորիկ վիճակում, ապրում են հաճախ իրականությունից կտրված երազանքներով և պլաններով: Հանդիպող խոչընդոտները հեշտությամբ հաղթահարվում են: Հաջորդ, երիտասարդ ընտանիքի փուլը վերաբերում է ամուսնության երկրորդ տարվան, երբ ընտանիքը բախվում է անսպասելի դժվարությունների: Ամուսինները բացահայտում են, որ հարաբերությունների պահպանման համար միայն սերը դեռևս բավարար չէ: Մեծանում է փոխադարձ զիջման, հարգանքի, ուշադրության անհրաժեշտությունը: Ամուսինները սկսում են վիրավորվել դիմացինի խոսքերից և արարքներից: Առաջ են գալիս տարաձայնություններ: Հաջորդ՝ երեխայի սպասող ընտանիքի փուլում ամուսինները զգալիորեն փոխվում են: Շատ դեպքերում ավելանում է կնոջ նկատմամբ ամուսնու ուշադրությունն ու հոգետարությունը:

Զացեպինի կողմից առանձնացվող հաջորդ փուլն ընտանեկան կյանքի համար առավել վտանգավոր փուլ է: Դա միջին տարիքի ընտանիքի փուլն է (ամուսնության 3-6-րդ տարիները): Ընտանիքի զարգացման այս շրջանը բնութագրվում է ձանձրույթի, միապաղաղության, հիասթափության առկայությամբ: Հաճախակիանում են ամուսնական կոնֆլիկտները: Ավագ ամուսնական տարիքի ընտանիքներում ամուսնության բարեհաջողությունը մեծամասամբ կախված է ամուսինների անձնային հատկություններից, զիջողականությունից, նրանց պահանջմունքների և հետաքրքրությունների համընկնումից: Վերջին՝ ծեր ամուսնական զույգերի փուլը, վրա է հասնում զավակների ամուսնությամբ և թոռնիկների ծնունդով: Ամուսինները սկսում են իրագործել տատի և պապի դերերը, նրանց հետաքրքրությունները ուղղվում են թոռնիկներին [36, էջ 23-25]:

Ընտանիքի կյանքի ուղու այլ չափանիշով պարբերացման տարբերակ է առաջարկում Սեդրակյանը: Նա որպես պարբերացման հիմք է ընդունում դերերի տեսությունը՝ նշելով, որ տակավին հնարավորություն է տալիս ավելի որոշակի և հիմնավոր տեսակետ առաջադրել առանձին ընտանիքի «զարգացման» (ավելի ճիշտ՝ կյանքի ուղու, պատմական ընթացքի) փուլերի վերաբերյալ: Սեդրակյանի կարծիքով՝

«***ընտանիքի կյանքի փուլերը բնորոշվում են նրանով, թե ինչպիսի առկա կարգավիճակներ ու դերեր են իրագործվում դրանում»*** [11, էջ 138]***:***

Ըստ այդմ նա առանձնացնում է ընտանիքի կյանքի ուղու հետևյալ փուլերը.

1. Ծանոթության և սիրահետման, սիրատածության փուլ, որտեղ կազմվում է անձանց ***մինչամուսնական երկյակ:***

2. Ամուսնության պաշտոնական գրանցման պահից մինչև առաջին երեխայի ծնունդը (ամուսնական երկյակ):

3. Առաջին երեխայի ծնվելուց մինչև երկրորդ երեխայի ծնվելն ընկած ժամանակահատվածը ***(ընտանեկան եռյակ)***, որի ընթացքում ընտանիքում ծագում են սոցիալական նոր տեսակի՝ ծնող-երեխա տիպի դերային հարաբերություններ:

4. Նոր երեխայի ծննդյան փուլ, որը կարելի է բաժանել ենթափուլերի՝ կախված երեխաների թվից. այստեղ նույնպես առաջ են գալիս սոցիալական նոր հարաբերություններ և կապեր, ինչպիսին է, օրինակ, երեխա-երեխա տիպի հարաբերությունը:

5. Ընտանիքի կարգավիճակադերային հետադարձ փոփոխությունների մեծ փուլ՝ իր ենթափուլերով, որի ընթացքում այլևս երեխա չի ծնվում, իսկ հասունացած երեխաներն էլ հեռանում են իրենց ծնողների ընտանիքից և առանձին են ապրում:

6.Ծեր երկյակի (պապի և տատի) փուլ, որը տևում է մինչև նրանցից մեկի մահը. անվանում են նաև «դատարկված բնի» փուլ [11, էջ138-139]:

Ինչպես կարելի է նկատել, ընտանիքի կյանքի ուղու փուլերում փոփոխության է ենթարկվում ընտանիքի կարգավիճակադերային կառույցը, փոփոխվում են ընտանիքի անդամների պահանջմունքներն ու սպասումները: Ընդ որում, ընտանիքի կյանքի ուղու որոշ փուլերում պահանջվում են ամուսնական հարաբերությունների էական վերակառուցումներ՝ համապատասխան ընտանիքի առջև ծառացող նոր խնդիրների: Այսպիսի փուլերը պայմանականորեն անվանվում են «ճգնաժամային»:

Այսպես, Կրատոխվիլն առանձնացնում է ամուսնական կյանքի 3-րդ և 7-րդ տարիների միջև ընկած ժամանակահատվածում տեղ գտնող ճգնաժամը, որը կապված է ամուսինների մոտ ռոմանտիկ տրամադրության վերացման, սիրահարվածության փուլում և առօրեական ընտանեկան կյանքում զուգընկերոջ դրսևորումների ակնհայտ

տարբերության, ամուսինների կարծիքների և տեսակետների տարբերությունը բացահայտող իրավիճակների ավելացման, բացասական հույզերի դրսևորումների հաճախականացման, ամուսինների միջև լարման ուժգնացման հետ: Ճգնաժամային այս փուլը բնութագրվում է անբավարարվածության արտահայտված զգացումով, ամուսինների հայացքների տարբերությամբ, վեճերի, փոխադարձ մեղադրանքների առկայությամբ [46, էջ 676-677]:

Ճգնաժամային փուլը ընտանիքի և ամուսնական հարաբերությունների համար դժվար և որոշիչ փուլ է: Որոշ դեպքերում ամուսիններն ուղղակի անկարող են լինում հաղթահարել այդ արգելքը: Ընտանիքը կորցնում է իր կառուցվածքագործառութային նշանակությունը: Դա կարող է նշանակել, որ ընտանիքի շարժումը կյանքի ուղիով կամ դադարում է (լճացում), կամ հետադարձվում (հետզարգացում): Այս դեպքում կարելի է խոսել անառողջ ընտանիքների մասին:

Ընտանիքի առողջության և դրա ախտորոշման խնդրին է նվիրված Տորոխտիի «Ընտանիքի հոգեբանական առողջության ախտորոշման մեթոդիկա» աշխատությունը [71]: Հոգեկան առողջության չափանիշով հեղինակն առանձնացնում է դրա նորմալ, նորմայից շեղված և ընդհանրապես բացակայող տարատեսակներ: Նորմային համապատասխանող ընտանեկան առողջության դեպքում ընտանիքը հոգեպես առողջ է և բնութագրվում է զարգացման բարձր մակարդակին վրա գտնվող անհատական և խմբային հոգեբանական երևույթներով և գործընթացներով, ընտանիքի անդամների պահանջմունքների փոխհամաձայնեցված և ողջամիտ բավարարմամբ, հասարակական (ներընտանեկան) ակտիվությամբ:

Հոգեկան առողջության նորմայից շեղմամբ ընտանիքներում, որպես կանոն, գերակշռում է ընտանիքի յուրաքանչյուր անդամի կողմից սեփական պահանջմունքների բավարարման ձգտումը: Ընտանիքի անդամների գործողությունները փոխհամաձայնեցվում են նվազագույն չափով, նրանք չեն ցուցաբերում հասարակական (ներընտանեկան ակտիվություն):

Ընտանիքի հոգեբանական առողջության բացակայության դեպքում գործ ունենք անառողջ ընտանիքի հետ, որը, որպես համակարգ, ի զորու չէ կարգավորելու իր իսկ անդամների ապակառուցողական գործողությունները: Այդպիսի ընտանիքի

անդամները հարաբերականորեն անկախ են, նրանց գործողություններն ուղղված են միայն անհատական պահանջմունքների բավարարման ուղղությամբ:

Դրա հետ մեկտեղ Տորոխտին առանձնացնում է հոգեկան առողջության գնահատման մի շարք չափանիշներ, ինչպիսիք են՝ ընտանեկան արժեքների նմանությունը, գործառութադերային փոխհամաձայեցվածությունը, սոցիալ-դերային համապատասխանությունը, հարմարողականությունը միկրոսոցիալական հարաբերություններում, հուզական բավարարվածությունը, ձգտումը ընտանեկան երկարակեցության:

Խոսելով առողջ և անառողջ ընտանիքների մասին՝ Սեդրակայանն առաջինը բնութագրում է նորմալ կառուցվածքով և ներընտանեկան, միջընտանեկան, հասարակական և միջանկյալ գործառույթների լիարժեք իրականացմամբ: Ի տարբերություն դրան, անառողջ ընտանիքում ներքին կառուցվածքային և գործառութային խնդիրներ կան, ինչպես նաև սխալ դերակատարումներ և անսովոր դերային փոխհարաբերություններ: Նման ընտանիքներում ծնողների (ամուսինների) միջև կան սուր, մինչև ճգնաժամի աստիճանի հասնող և երկարատև բախումներ, որոնց առկայությունը վկայում է, որ նրանք, ըստ տարբեր չափանիշների, այդ թվում նաև սեռական առումով, անհամատեղելի են [11, էջ 365-367]:

Ինչպես տեսնում ենք, անառողջ ընտանիքը բնութագրվում է ընտանիքի անդամների գործողությունների անհամաձայնեցվածությամբ, ներընտանեկան ակտիվության նվազեցմամբ, ամուսինների միջև երկարատև բախումների առկայությամբ: Ամուսնական երկարատև և սուր բախումներն անառողջ ընտանիքի հիմնական ախտանիշներն են:

2.2. Ընտանիքի մոտիվացիոն և կարգավիճակադերային բաղադրիչների նշանակությունը ամուսնական բախումներում:

Ըստ սահմանման՝ «Ամուսնական բախումն ընտանեկան բախումի տարատեսակ է, որն առաջանում է ամուսինների միջև ամուսնական հարաբերությունների, կենսահոգեբանական անհամատեղելիության, հետաքրքրությունների և պահանջմունքների հակադրման, երեխաների դաստիարակության մասին տարբեր

հայացքների, ազգակիցների նկատմամբ տարբեր վերաբերմունքի հիման վրա» [20, էջ 185]:

Հետազոտողների կողմից առանձնացվում են ներընտանեկան և մասնավորապես ամուսնական բախումների մի շարք պատճառներ: Այդուհանդերձ, դրանք բոլորը, որոշ մասնավոր բացառություններով, կարելի է հանգեցնել մեկ հիմնական պատճառի՝ ամուսնական զույգերի անհամատեղելիությանը: Վերջինս, իր հերթին կախված է մի շարք գործոններից (ամուսինների անհատական առանձնահատկություններ, արժեքների և հայացքների տարբերություն, սեռական անհամատեղելիություն) [8,76], որոնցից մեզ համար առավել կարևորվում են պահանջմունքների համատեղ բավարարման ու դերային սպասումների և իրագործման համապատասխանության գործոնները:

Խնդրին նվիրված գրականության մեջ նշվում է, որ ամուսինների համատեղելիությունն առավելապես որոշվում է որոշ հիմնական պահանջմունքների համատեղ բավարարման հնարավորությամբ [49]: Պահանջմունքների համատեղ բավարարման հնարավորությունն, իր հերթին, կախված է ամուսինների կարգավիճակադերային փոխհարաբերություններից: Ընտանեկան փոխհարաբերությունները պետք է ստեղծեն համակարգ, որը կլինի նվազագույնս հակասական և կարող է բավարարել բազմաթիվ հոգեբանական պահանջմունքներ [45, էջ 73]:

Այստեղ կարևոր են ամուսինների դերային սպասումները, քանի-որ պահանջմունքների անբավարարությունից առաջացած բախումները հիմնականում կապված են ինչպես իրենց, այնպես էլ զուգընկերոջ պահանջմունքների իրականացման, զուգընկերոջից սպասումների մասին ամուսինների պատկերացումների անհամապատասխանությունից [49, էջ 532]:

Այսպիսով, ստացվում է, որ ամուսնական կոնֆլիկտների հիմնական պատճառը պահանջմունքադերային համակարգի ապագործառումն է, երբ ամուսինների, կամ դրանցից մեկի դերային սպասումները չեն արդարացվում, հետևաբար չի բավարարվում համապատասխան պահանջմունքը:

Այս առումով բավականին հետաքրքրական է Կուրտ Լևինի տեսակետը: Խոսելով ամուսնական կոնֆլիկտների մասին, նա նշում է, որ ներխմբային բախումների

հաճախականությունը որոշող կարևորագույն գործոնը լարման ընդհանուր մակարդակն է: Դրանով է որոշվում, թե այս կամ այն իրադրությունը կբերի բախման, թե ոչ [48, էջ 112]:

Լարումն, իր հերթին, ունի որոշակի պատճառներ, որոնց թվում Լևինն առանձնացնում է անձի պահանջմունքների բավարարվածության աստիճանը, անձի ազատ տեղաշարժման տարածքի մեծությունը, արտաքին արգելքները, խմբի անդամների նպատակների համապատասխանությունը [48, էջ 112-113]:

Անդրադառնալով ամուսնական համատեղ կյանքի ընթացքում պահանջմունքների բավարարման գործոնին Լևինը նշում է՝ «Կան բազմաթիվ պահանջմունքներ, որոնց իրականացումը մարդիկ սովորաբար կապում են ամուսնական կյանքի հետ: Ամուսինը կարող է սպասել, որ կինն իր համար կլինի միևնույն ժամանակ սիրուհի, ընկեր, տնային տնտեսուհի, մայր <…>: Կինը կարող է սպասել, որ ամուսինը կլինի իր սիրեկանը, ընկերը, ընտանիքի կերակրողը, հայրը և տանտերը: Սակայն այս ամենը ոչ միշտ է հնարավոր համադրել մի մարդու մեջ: «Այս գործառույթներից մեկի իրականացման անկարողությունը,- գրում է Լևինը, - կարող է հանգեցնել կարևորագույն պահանջմունքների անբավարարվածության վիճակի, հետևաբար, ամուսնական կյանքում մշտապես բարձր լարման մակարդակի» [48, էջ 115]:

Ինչպես տեսնում ենք, Լևինի մոտ պահանջմունքների բավարարումն անմիջականորեն կապվում է կոնկրետ ընտանեկան դերերի կատարման հետ: Տնային տնտեսուհին, մայրը, սիրուհին, ամուսինը սոցիալական դերեր են, որոնք, ինչպես նշվեց նախորդ գլխում, տալիս են որոշ պահանջմունքների սոցիալապես ընդունելի բավարարման հնարավորություն: Ընդ որում, հարկ է նշել, որ Լևինի կողմից առանձնացվող ամուսնական կոնֆլիկտի վրա ազդող մյուս գործոններն անմիջականորեն բխում են ընտանեկան դերերի կատարման և դրանց միջոցով պահանջմունքների բավարարման ընթացքից:

Այստեղ ավելորդ չէ նշել, որ ամուսնական հարաբերությունների վրա բացասաբար ազդող բազմաթիվ այլ գործոններ, ամուսինների հիմնական պահանջմունքների բավարարման պայմաններում կորցնում են իրենց նշանակությունը: «Ամուսնական կյանքում բախումնային, և առավել ևս ճգնաժամային իրավիճակները վրա են հասնում

հենց այն ժամանակ, երբ չեն բավարարվում անձի հիմնական հուզահոգեբանական պահանջմունքները: Այդպիսի պահանջմունքների բավարարումը մարդուն տալիս է ընդհանրապես կյանքում և մասնավորապես ընտանեկան կյանքում հանդիպող բազմաթիվ կենսական դժվարությունների դիմակայելու հնարավորություն: Մենք նկատի ունենք առաջին հերթին կացարանային և նյութական դժվարությունները, մասնագիտական գործունեության հետ կապված խնդիրները, հիվանդությունները, առողջական վիճակը» [64, էջ 585]:

Ստացվում է, որ ամուսնական կոնֆլիկտների հիմքում ընկած են չբավարարված պահանջմունքները: Այստեղ սակայն, հարկ է անել որոշակի վերապահում: Բանն այն է, որ մի շարք՝ հիմնականում նյութական, պահանջմունքներ, անմիջականորեն կապված են ընտանիքի տնտեսական վիճակի հետ: Դա նշանակում է, որ կենցաղի և կենսակերպի բարելավմանը զուգահեռ պետք է որ նվազեր այդպիսի պահանջմունքների անբավարարվածության պատճառով առաջացող ամուսնական բախումների քանակը: Սակայն, փաստերը խոսում են այն մասին, որ աղքատ երկրներում ամուսնալուծությունների քանակն ավելի քիչ է քան նյութապես բարվոք երկրներում [11, էջ 337-338]:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ ամուսնական բախումների հիմքում ընկած են առավելապես սուբյեկտիվ, անձնային գործոնները: Ընդ որում, որոշ դեպքերում դրանք կարող են լինել չգիտակցված և ունենալ ախտաբանական բնույթ: Այս դեպքում պահանջմունքը ձեռք է բերում չափազանցված սուբյեկտիվ նշանակություն: Հիշենք թեկուզ Հոռնիի կողմից առանձնացված սիրո և կապվածության նևրոտի պահանջմունքը: Բնութագրելով այն՝ Հոռնին գրում է, որ սիրո նևրոտիկ պահանջմունքի առաջին տարբերակիչ գիծը դրա կպչունությունն է: Տագնապայնությամբ առաջնորդվող մարդն անխուսափելիորեն կորցնում է անմիջականությունն ու ճկունությունը: Նա փափագում է, որ իրեն սիրեն և փորձում է հասնել դրան ամեն գնով: Սակայն, հասնելով իր նպատակին, այս տիպի մարդն իրեն ամենևին երջանիկ չի զգում [74, էջ 82-84]:

Ադլերի մոտ հանդիպում ենք մեկ այլ երևույթի նկարագրության: Նա խոսում է սիրո միջոցով պարտավորեցնելու մասին, երբ զուգընկերներից մեկը, առաջնորդվելով

պահանջմունքով, բռնանում է դիմացինի կամքին և ստիպում, որ նա լինի այնպիսին կամ գործի այնպես, ինչպես ինքն է ցանկանում: «Դա հեշտությամբ կարող է վերածվել բռնության, որի հետքերը հանդիպում են համարյա բոլոր սիրային հարաբերություններում» [14, էջ 368]:

Նկարագրված երկու դեպքում էլ գործ ունենք զուգընկերոջ կամքի վրա բռնանալու երևույթի հետ: Բնական է, որ նման վարքին հակազդեցությունը շատ դեպքերում կարող է հանգեցնել բախման: Չէ՞ որ այն նեղացնում է անձի՝ ամուսնության հետևանքով արդեն իսկ որոշակիորեն սահմանափակված ազատ տեղաշարժման տարածքը [48, էջ 118]:

Սակայն «չափազանցված» պահանջմունքը ամուսնական կոնֆլիկտի հիմքում ընկած միակ անձնային գործոնը չէ: Բանն այն է, որ անհատն ընտանիքում զարգանում է և ենթարկվում որոշակի փոփոխությունների. փոփոխվում են նրա հայացքները, կյանքի նկատմամբ մոտեցումները, արժութաբանական ընկալումները և այլն: «Այդ փոփոխությունների արդյունքում, - գրում է Հարությունյանը, - կարող է առաջանալ բախում ներանձնական փոխակերպումների և կայունացած ընտանեկան փոխհարաբերությունների միջև: Որոշ իրավիճակներում այդ հակասությունը կարող է հանգեցնել բացահայտ բախման» [6, էջ 34]:

Այսպիսով, կարելի է ասել, որ ընտանեկան և ամուսնական բախումների հիմքում ընկած է դրա կողմերի դերային սպասումների և դրանց իրականացման անհամապատասխանությունը: Որոշ դեպքերում, սեփական չափազանցված պահանջմունքների բավարարման նպատակով, անհատը գերագնահատում է ընտանեկան դերի նշանակությունը, ոտնահարելով այլ «դերակատարների» իրավունքները: Մյուս դեպքերում, կրած փոփոխությունների հետևանքով հակադրություններ են առաջանում ընտանիքի անդամի և ընտանեկան կազմակերպության միջև. անհատը չի ընդունում ընտանիքի կողմից իրեն հատկացվող դերը: Նման պարագայում խոսում են դերային բախումների մասին:

Սակայն ինչպե՞ս է դերը, լինելով հասարակության կողմից հաստատված վարքի օրինակ, որը նպաստում է հասարակության մեջ անհատի գոյությանը, դադարում իրականացնել իր կարգավորող գործառույթները՝ տեղի տալով բախումներին:

Բանն այն է, որ ներկայիս հասարակությունն, իր ինտիտուտներով հանդերձ, գտնվում է անդադար փոխակերպումների գործընթացում: Հասարակական նորմերը, կանոններն ու նախասահմանումները փոփոխվում են այնպիսի արագությամբ, որ հաճախ հնարավոր չի լինում ըմբռնել այդ փոփոխությունների իմաստը, ամրագրել դրանք: Այս գործընթացից անմասն չի մնում նաև ընտանիքը: Դա է պատճառը որ որոշ հետազոտողներ խոսում են ընտանիքի անկման, ճգնաժամի մասին [30, 38, 58]:

Մեր օրերում հարաբերականորեն մեծ արագությամբ փոփոխվում են հասարակական միջավայրը, մարդու կենսագործունեության քաղաքական, տնտեսական, կենցաղային պայմանները: Որոշ հետազոտողների կարծիքով այս փոփոխություններն առաջ են բերում ընտանիքի ապակայունացման վտանգ: Այսպես, Զդրավոմիսլովայի կարծիքով՝ «Ընտանիքի ավանդական մոդելը նպաստում էր հիմնականում առաջնային հոգեբանական պահանջմունքների՝ անվտանգության, պատկանելության, հուզական կապերի, մասամբ (հիմնականում կանանց շրջանում) ինքնահաստատման բավարարմանը և միայն աննշան չափով կարող էր նպաստել ինքնաակտուալիզացիայի պահանջմունքի բավարարմանը: Այսպիսով, այդպիսի ընտանիքի բացարձակ լիազորությունների շրջանակները սահմանափակվում էին միայն դրա տնտեսական գործառման հետ առավել սերտ կապակցված «ցածրագույն» հոգեբանական պահանջմունքներով: Մարդու անհատականացման աճի և ժամանակակից ընտանիք անձի ինքնավարության սկզբունքի, որպես զարգացման և բարձրագույն հոգեբանական պահանջմունքների բավարարման անհրաժեշտ պայման, «ներմուծման» հետ համատեղ, ինչպես նաև զուգահեռաբար ընթացող և ընտանեկան փոխազդեցության արտաքին նորմերը թուլացնող սոցիալական գործընթացների հետ կապված, դժվարանում է անհատի բոլոր հիմնական հոգեբանական պահանջմունքների, ներառյալ «բարձրագույն» պահանջմունքների բավարարումը, ինչն առաջ է բերում ընտանիքի ապակայունացման վտանգ»: Այս երևույթի արդյունքում, նշում է Զդրավոմիսլովան, բարձրացվում են ընտանիքին առաջադրվող պահանջները [37, էջ 83]:

Դա կարող է նշանակել, որ մենք մասնակից ենք ընտանիքի պատմական փոխակերպման գործընթացին՝ գտնվելով մեկ փուլից մյուսին անցման կետում: Մեր

աչքի առջև, հաշվված տարիների ընթացքում փոփոխվում են ընտանեկան կարգավիճակադերային համակարգը, ընտանիքի անհատական և հասարակական նշանակությունը: Նույնիսկ այնպիսի կարևոր գործոն, ինչպիսին է սեռական պատկանելության գործոնը, այլևս չի արժևորվում ընտանիքի կառուցման ընթացքում: Բնական է, որ նման պայմաններում դժվարանում, կամ նույնիսկ անհնարին է դառնում ընտանեկան դերերի միջոցով ընտանիքի անդամի վարքի կարգավորումը: Միգուցե դա է պատճառը, որ նահապետական, ավանդական ընտանիքներն առավել արդյունավետ էին գործառում, իսկ դրանցում ամուսնալուծությունների թիվն անհամեմատ ցածր էր [30]:

Վերջին ժամանակներում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ հայ ընտանիքը անմասն չի մնում ընտանիքի փոխակերպման գործընթացից: Այն գտնվում է անցումային փուլում և ունի միջանկյալ դերային համակարգ, որի միջոցով իրականանում է անցում ընտանիքի ավանդական ձևից դեպի էգալիտար ձևը [5, էջ 69]:

Մյուս կողմից, ժամանակակից քաղաքակրթության կարևորագույն խնդիրներից մեկը վերաբնակեցման և սոցիալ-մշակութային նոր միջավայրի կողմից թելադրվող պայմաններին հարմարման խնդիրն է: Այս դեպքում ընտանիքը կրում է որոշակի փոփոխություններ, վերակառուցվում է դրա կարգավիճակադերային համակարգը: Ընտանիքի անդամները ստիպված են լինում հարմարվել հասարակական նոր միջավայրին, յուրացնել այդտեղ ընդունված ընտանեկան դերերն ու կարգավիճակները: Վերաբնակեցված ընտանիքների փոփոխությունների և նոր պայմաններին համրարման խնդիրը վերլուծության է ենթարկվում հետազոտողների խմբի կողմից իրականացված ընտանիքի միջմշակութային հետազոտության մեջ [81]:

Փաստորեն ժամանակակից ընտանիքը, որպես սոցիալական ինստիտուտ, շարունակում է իր զարգացումը՝ փորձելով հարմարվել հասարակության կողմից թելադրվող նոր պայմաններին, կատարել իր առջև դրված պահանջները: Այս գործընթացը հնարավոր չէ կանգնեցնել, սակայն կարելի է խուսանավել՝ շրջանցելով ընտանիքի գոյատևման համար վտանգ ներկայացնող արգելքները: Այդ նպատակով անհրաժեշտ է հետազոտել և բացահայտել ընտանիքի գործառման վրա ազդող

հասարակական և անհատական գործոնների հարաբերակցությունը, գտնել ազդեցության այնպիսի մեխանիզմներ, որոնք կտան ընտանիքը պահպանելու և զարգացնելու հնարավորություն:

Տեսական վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ՝

- Ընտանիքի հոգեբանական հետազոտության և դրա հետ տարվող հոգեբանական աշխատանքների ընթացքում նպատակահարմար է առաջնորդվել տարբերակված պատճառականության սկզբունքով, համաձայն որի՝ համանման պատճառները համանման պայմաններում մեծամասամբ առաջ են բերում համանման հետևանքներ: Հետևանքներն, իրենց հերթին, կարող են ազդել իրենց հիմքում ընկած պատճառների վրա: Ընդ որում, պատճառահետևանքային շղթայում բազմաթիվ գործոնների առկայության պայմաններում դրանք օժտվում են տարբեր նշանակությամբ:
- Ընտանիքը զարգացող համակարգ է, որի կյանքի առանձին փուլերում փոփոխվում են դրա կառուցվածքագործառութային բնութագրիչները:
- Ընտանիքի փոխակերպումներն իրականանում են ինչպես ներքին (ներընտանեկան), այնպես էլ արտաքին (միջավայրային, հասարակական) գործոնների ազդեցությամբ:
- Արտաքին ազդեցություններն իրականանում են ընտանիքի առանձին անդամների վրա ազդեցության ձևով՝ փոփոխելով ընտանիքի հետ կապված նրա պահանջմունքների, դիրքորոշումների, կարգավիճակների և դերերի համակարգները:
- Ընտանիքի փոխակերպման ընթացքում դրա հասարակական և անձնային բաղադրիչների անհամապատասխանությունը կարող է հանգեցնել ընտանիքի գործառման խափանմանը կամ ընտանիքի կործանմանը:

Գլուխ 3. ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՎՐԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի տեսական մասում դուրս բերվեցին և պարզաբանվեցին ընտանիքի գործառման վրա ազդող հասարակական և անձնային գործոնները: Ցույց տրվեց, որ, լինելով բաց սոցիալ-հոգեբանական համակարգ, ընտանիքը միջանկյալ տեղ է զբաղեցնում այն կազմող անհատների և որպես իր գոյատևման միջավայր հանդիսացող հասարակության միջև: Ըստ այդմ, այն կրում է մի կողմից անձնային, մյուս կողմից՝ հասարակական պայմանավորվածություն ունեցող տարբեր գործոնների ազդեցություն, որոնց հարաբերակցումն էական դեր է խաղում ընտանիքի արդյունավետ գործառման ընթացքում:

Իրականացված հետազոտության նպատակը ընտանիքի գործառման վրա հասարակական գործոնների ազդեցության բնութի պարզաբանումն է: Աշխատանքի տեսական մասում մեր կողմից առաջ քաշվեց վարկած, համաձայն որի՝ արտաքին (հասարակական) գործոնների ազդեցությունը հայ ընտանիքի վրա իրականանում է միջնորդավորված ձևով, ընտանիքի անդամների՝ նրանց պահանջմունքային ոլորտի և կարգավիճակադերային վարքի վրա ազդեցություն գործելու միջոցով: Դա նշանակում է, որ տարբեր սոցիալ-մշակութային միջավայրերում ապրող հայ ընտանիքների մոտ անհրաժեշտաբար պետք է նկատվեն կառուցվածքագործառութային տարբերություններ, որոնք կապված են ազդող հասարակական միջավարի առանձնահատկությունների հետ: Ընդ որում, պահպանելով իր ընդհանուր կառուցվածքը, հայ ընտանիքը, տարբեր հասարակական միջավայրերում կարող է ունենալ տարբեր դրսևորումներ՝ կախված ընտանիքի անդամների պահանջմունքային և կարգավիճակադերային ոլորտների կրած փոփոխություններից:

Հետազոտությունն, իր բնույթով համեմատական է և նպատակ ունի բացահայտելու տարբեր սոցիալ-մշակութային միջավայրերում (տվյալ դեպքում ԱՄՆ-ում և ՀՀ-ում) բնակվող ազգությամբ հայ ամուսնական զույգերի դիրքորոշումների, համատեղելիության, մոտիվացվածության և ընդհանրապես, համատեղ

կենսագործունեության նկատմամբ վերաբերմունքի տարբերությունները, դրանց կախվածությունը սոցիալ-մշակութային միջավայրից:

Հետազոտության համակազմը

Հետազոտությունն իրականացվել է Միացյալ Նահանգներում և Հայաստանի Հանրապետությունում: Հարցման են ենթարկվել ՀՀ Երևան (փորձարարական խումբ 1) և ԱՄՆ Գլենդել (փորձարարական խումբ 2) քաղաքներում բնակվող առնվազն մեկ երեխա ունեցող, ազգությամբ հայ 100-ական ամուսնական զույգ: Ընդ որում, երկրորդ խմբի ընտրության համար որպես նախապայման ընդունվել է ԱՄՆ-ում առնվազն 15 տարի բնակվելու չափանիշը:

Չնայած որ հետազոտության ընթացքում համակազմի խմբավորման կարևորագույն չափանիշը սոցիալ-մշակութային միջավայրն է (բնակության վայրը), այդուհանդերձ հաշվի են առնվել նաև այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են հարցվողների տարիքը, համատեղ կյանքի ժամանակամիջոցը, ամուսնության հերթականությունը (1-ին, 2-րդ և այլն), համատեղ երեխաների քանակը, ընտանիքի կազմը (միևնույն հարկի տակ բնակվող): Ստորև, աղյուսակում բերված են այդ չափանիշների բաժինները յուրաքանչյուր խմբում: Այն չափանիշները, որոնք տարբեր են ամուսինների մոտ, տրվում են առանձին՝ տղամարդու և կնոջ, ընդհանուրները՝ զույգերի հաշվարկով:

Աղյուսակ 1. Փորձարարական երկու խմբերում առանձին չափանիշների ներկայացվածության չափը

Չափանիշը	Երևան		Գլենդել	
Տարիք	տղամարդ n=100	կին n=100	տղամարդ n=100	կին n=100
20-25	4%	7%	3%	8%
26-35	20%	36%	21%	40%
36-45	60%	48%	57%	42%
46 և ավելի	16%	9%	19%	10%
Տարիքի տարբերությունը	զույգ n=100		զույգ n=100	
-1-5 (կինը տարիքով մեծ է ամուսնուց)	6%		4%	

0	12%		10%	
1-5	63%		65%	
6-10	14%		15%	
11 և ավելի	5%		6%	
Համատեղ կյանքի ժամանակամիջոց	զույգ n=100		զույգ n=100	
մինչև 1 տարի	0		0	
1-3 տարի	3%		4%	
4-8 տարի	32%		36%	
9-12 տարի	26%		29%	
13-20տարի	33%		27%	
21 և ավելի	6%		4%	
Ամուսնանալու տարիքը	Տղամարդ n=100	Կին n=100	Տղամարդ n=100	Կին n=100
մինչև 20	0%	2%	0%	12%
20-25	53%	73%	48%	67%
26-30	41%	24%	47%	21%
31-35	4%	1%	3%	0%
36 և ավելի	2%	0%	2%	0%
Ամուսնության հերթական համարը	տղամարդ n=100	կին n=100	տղամարդ n=100	կին n=100
1-ին	89%	89%	87%	89%
2-րդ	11%	11%	13%	11%
3-րդ	0	0	0	0
այլ	0	0	0	0
Համատեղ երեխաների քանակը	զույգ n=100		զույգ n=100	
0	-		-	
1	20%		24%	
2	65%		53%	
3	11%		21%	
4	4%		2%	
5 և ավելի	-		-	

Աղյուսակ 1. շարունակություն

Ընտանիքի կազմը (միևնույն հարկի տակ բնակվող)	զույգ n=100	զույգ n=100
2	-	-
3	2%	33%
4	28%	44%
5	23%	18%
6	30%	5%
7 և ավելի	17%	0

Հարկ է նշել, որ ընտրված խմբերի վիճակագրական տվյալների (ամուսինների տարիքը, ամուսնության ժամանակահատվածը, համատեղ երեխաների քանակը և այլն) համեմատության ընթացքում նշանակալի տարբերություններ են բացահայտվել միայն մեկ՝ միևնույն հարկի տակ բնակվող անձանց քանակության չափանիշով:

Աղյուսակ 2. Փորձարարական խմբերի վիճակագրական ցուցանիշների համեմատություն

Համեմատվող չափանիշ	t-չափանիշ df=98	Նշանակալիության մակարդակը
Ամուսինների տարիքի տարբերությունը	1.243	$p > 0.05$
Ամուսնության ժամկետը	1.117	$p>0.05$
Ամուսնության տարիքը տղամարդիկ կանայք	 0.947 1.002	 $p>0.05$ $p>0.05$
Ամուսնության հերթական համարը	0.654	$p>0.05$
Երեխաների քանակը	0.987	$p>0.05$
Միևնույն հարկի տակ բնակվող անձանց քանակը	2.453	$p<0.05$

Ըստ այդմ միևնույն հարկի տակ բնակվող անձանց քանակության և ամուսինների ու նրանց զավակների գումարի տարբերությունից դուրս է բերվել ամուսիններից և նրանց զավակներից բացի միևնույն հարկի ներքո ապրող անձնանց քանակության (ստորև՝ Q) չափանիշը, որը հետազոտության ենթարկված երևանաբնակ հայ ընտանիքների մոտ զգալիորեն ավելի բարձր է Գլենդելում բնակվող հայ ընտանիքների համեմատությամբ:

Աղյուսակ 3.Q-չափանիշը փորձարարական խմբերում

Q=	Ընդհանուր թվից ընտանիքների մասնաբաժինը, %	
	Երևան	Գլենդել
0	33%	79%
1	27%	11%
2	14%	7%
3	26%	3%

Ինչպես տեսնում ենք, այն ընտանիքները, որոնք բաղկացած են միայն ծնողներից և նրանց զավակներից Երևանում կազմում են հետազոտվող ընտանիքների մոտ մեկ երրորդը, այն դեպքում, երբ դրանց թիվը Գլենդելում գերազանցում է հետազոտվող ընտանիքների թվի երկու երրորդը, այսինքն ավելի քան երկու անգամ շատ Երևանում բնակվող ընտանիքներից: Q=3 տողում տեսնում ենք բացարձակապես այլ պատկեր: Այս դեպքում Երևանի չափանիշը գերազանցում է Գլենդելի չափանիշն ավելի քան ութ անգամ: Կասկածից վեր է, որ նման տարբերությունը կարող է ազդել հետազոտության արդյունքների վրա: Մյուս կողմից պարզ է, որ Q-չափանիշը կախված է հասարակական, տնտեսական գործոնների ազդեցությունից և իր հերթին կարող է հանդես գալ որպես այդպիսին: Եվ ընդհանրապես, հաշվի առնված բոլոր վիճակագրական չափանիշներն անմիջականորեն կապված են ընտանիքի կենսագործունեության միջավայրի հետ և կարող են դիտարկվել որպես ընտանիքի գործառման վրա ազդող գործոններ: Այդ իսկ պատճառով, վերլուծության ընթացքում հետազոտության արդյունքները կհամադրվեն դրանց հետ:

Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդիկաները

Ելնելով մեր առջև դրված նպատակներից՝ հետազոտության ընթացքում կիրառել ենք այնպիսի մեթոդիկաներ, որոնք կտան ընտանիքի պահանջմունքային և կարգավիճակադերային բաղադրիչների և հասարակական ազդեցության հետ դրանց կապի հետազոտության հնարավորություն: Հետազոտական նպատակով կիրառվել են Ստոլինի, Ռոմանովայի և Բուտենկոյի «Ամուսնությամբ բավարարման հարցարանը», Վոլկովայի «Զուգընկերների դերային սպասումներ» մեթոդիկան, Այլոշինայի, Գոզմանի և Դուբովսկայայի կողմից մշակված «Ընտանիքում դերերի բաշխվածության որոշման հարցարանը», Այլոշինայի «Ամուսնական զույգում դիրքորոշումների չափման» հարցարանը, ինչպես նաև մեր կողմից մշակված հարցարան, որը կտա մի շարք

պահանջմունքների բավարարման ընթացքում ընտանիքի դերի բացահայտման հնարավորություն: Հարցարանները հետազոտվողներին ներկայացվել են միասնական փաթեթի տեսքով:

Մեթոդիկաների կիրառման արդյունքում ստացված տվյալները մշակվել են և ենթարկվել համեմատական վերլուծության, ներկայացվել են աղյուսակների և հիստոգրամների տեսքով:

3.1. ՀՀ՝ Երևանում և ԱՄՆ՝ Գլենդելում բնակվող ազգությամբ հայ ամուսնական զույգերի ամուսնությամբ բավարարվածության աստիճանի համեմատական հետազոտություն:

Ելնելով մեր առջև դրված նպատակներից, առաջին հերթին փորձենք բացահայտել ՀՀ Երևան և ԱՄՆ Գլենդել քաղաքներում բնակվող ազգությամբ հայ ամուսնական զույգերի ամուսնությամբ բավարարվածության աստիճանի տարբերությունները: Մեր կողմից այդ նպատակով կիրառվել է Ստոլինի, Ռոմանովայի և Բուտենկոյի «Ամուսնությամբ բավարարման հարցարանը»: Այն պարունակում է քսանչորս հարց, որոնց տրված պատասխանների միջոցով հնարավոր է բացահայտել սեփական ամուսնությանը ամուսինների կողմից տրվող գնահատականը:

Մեթոդիկայի արդյունքում ստացված տվյալների վիճակագրական վերլուծությունը ցուց տվեց, որ հետազոտական խմբերը ամուսնությամբ բավարարվածության չափանիշով էական տարբերություններ ի հայտ չեն բերում:

Նկ.1. t-չափանիշը համեմատվող խմբերի համար, df=198



Տ-չափանիշի ստացված արժեքների՝ «Սթյուդենթի կրիտիկական նշանակությունների աղյուսակով» գնահատումը ցույց տվեց, որ համեմատվող խմբերի (երևանաբնակ և գլենդելաբնակ տղամարդիկ, երևանաբնակ և գլենդելաբնակ կանայք, երևանաբնակ տղամարդիկ և կանայք, գլենդելաբնակ տղամարդիկ և կանայք) միջև

վիճակագրական տարբերություններն աննշան են և ենթակա չեն էմպիրիկ մեկնաբանման: Այդուհանդերձ, ինչպես երևում է նկ 1-ում, էականորեն տարբերվում են առանձին խմբերի համեմատության արդյունքում ստացված t-չափանիշի արժեքները: Այն առավել մեծ արժեք է ձեռք բերում երևանաբնակ տղամարդկանց և կանանց, նվազագույն արժեք՝ գլենդելաբնակ տղամարդկանց և կանանց համեմատության արդյունքում, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ ամուսնությամբ բավարարվածության չափանիշով ավելի մեծ չափով տարբերվում են երևանաբնակ տղամարդիկ և կանայք, նվազագույն չափով՝ գլենդելաբնակ տղամարդիկ և կանայք:

Ասվածն ավելի պարզորոշ կերպով երևում է որոշ վիճակագրական տվյալների համեմատության միջոցով:

Աղյուսակ 4. Ամուսնությամբ բավարարվածության չափանիշի խմբային միջինի և ստանդարտ շեղման արժեքները

	ԵՐԵՎԱՆ		ԳԼԵՆԴԵԼ	
	տղամարդիկ	կանայք	տղամարդիկ	կանայք
Միջին	36.3	33.8	34.9	35
Ստանդարտ շեղում	6.51	9.33	5.91	8.01

Ինչպես երևում է աղյուսակից, ամուսնությամբ բավարարվածության չափանիշի խմբային միջինի արժեքով առաջին տեղը զբաղեցնում են երևանաբնակ տղամարդիկ, այնուհետև գլենդելաբնակ կանայք են, գլենդելաբնակ տղամարդիկ և վերջում՝ երևանաբնակ կանայք: Ընդ որում, հետազոտական երկրորդ խմբում՝ Գլենդելաբնակ ամուսնական զույգերի շրջանում, ամուսնությամբ բավարարվածության տղամարդկանց և կանանց չափանիշների միջին թվաբանականի տարբերությունն աննշան է (0.1), այն դեպքում, երբ Երևանաբնակ հետազոտվողների շրջանում այդ տարբերությունը կազմում է 2.5 միավոր: Հետազոտական առաջին խմբում (Երևան) ավելի մեծ է տղամարդկանց, երկրորդ խմբում՝ կանանց միջինը: Սա խոսում է այն մասին, որ հետազոտված երևանաբնակ հայ ընտանիքներում կանայք, ամուսնությամբ բավարարվածության չափանիշով, զգալիորեն զիջում են նույն խմբի տղամարդկանց, այն դեպքում, երբ գլենդելաբնակ կանայք ոչ միայն չեն զիջում, այլև աննշան չափով գերազանցում են իրենց ամուսիններին:

Մյուս կողմից ուշագրավ է այն հանգամանքը, որ երկու փորձարարական խմբերում ստանդարտ շեղումը կանանց շրջանում զգալիորեն ավելին է տղամարդկանց համեմատությամբ: Դա կարող է նշանակել, որ դիտարկվող չափանիշի տեսանկյունից հետազոտական խմբերում կանանց ցուցանիշների տատանումն ավելին է, քան տղամարդկանց ցուցանիշներինը:

Այսպիսով՝ *հետազոտական երկու խմբերում ամուսնությամբ բավարարվածության աստիճանի համեմատությունը ցույց տվեց, որ ընտանիքի գործառման միջավայրը էականորեն չի ազդում ամուսինների ամուսնությամբ բավարարվածության ընդհանուր ցուցանիշի վրա: Սակայն, կախված սոցիալ-մշակութային միջավայրից կարող է տարբերվել ամուսնական զույգերում զուգընկերների բավարարվածության աստիճանի հարաբերությունը:*

Առավել մասնավորեցնելով մեթոդիկայի արդյունքները՝ նշենք, որ ստացված տվյալները գնահատվել են յոթաստիճան սանդղակով: Հարցման արդյունքում մեր առջև բացվել է հետևյալ պատկերը.

Աղյուսակ 5. Ամուսնությամբ բավարարվածության ցուցանիշը հետազոտական 1-ին խմբում

ՀՀ	Չափանիշի անվանումը	Ամուսնությամբ բավարարվածության չափանիշ ՀՀ, Երևան		
		Տղամարդիկ	Կանայք	Ընդհանուր
1	Բացարձակ անբավարարվածություն	0%	6%	3%
2	Անբավարարվածություն	0%	1%	0.5%
3	Չափավոր անբավարարվածություն	8%	2%	5%
4	Միջանկյալ չափանիշ	7%	9%	8%
5	Չափավոր բավարարվածություն	3%	32%	17.5%
6	Բավարարվածություն	23%	20%	21.5%
7	Բացարձակ բավարարվածություն	59%	30%	44.5%

Աղյուսակ 6. Ամուսնությամբ բավարարվածության ցուցանիշը հետազոտական 2-րդ խմբում

ՀՀ	Չափանիշի անվանումը	Ամուսնությամբ բավարարվածության չափանիշ ԱՄՆ, Գլենդել		
		Տղամարդիկ	Կանայք	Ընդհանուր
1	Բացարձակ անբավարարվածություն	0%	0%	0%
2	Անբավարարվածություն	0%	8%	4%

Աղյուսակ 6. շարունակություն

3	Չափավոր անբավարարվածություն	7%	7%	7%
4	Միջանկյալ չափանիշ	3%	11%	7%
5	Չափավոր բավարարվածություն	26%	2%	14%
6	Բավարարվածություն	11%	19%	15%
7	Բացարձակ բավարարվածություն	53%	53%	53%

Տվյալների գրաֆիկական պատկերը հետևյալն է՝

Հիստոգրամ 1. Ամուսնությամբ բավարարվածության ցուցանիշը, Երևան



Հիստոգրամ 2. Ամուսնությամբ բավարարվածության ցուցանիշը, Գլենդել



Ինչպես տեսնում ենք, Երևանաբնակ և Գլենդելում բնակվող ամուսնական զույգերի միջև նկատվում են էական տարբերություններ: Առաջին հերթին աչքի է զառնում այն հանգամանքը, որ, ի տարբերություն Գլենդելի, որտեղ բացարձակ բավարարվածության չափանիշով կանայք և տղամարդիկ ցույց են տալիս լրիվ համանման արդյունք, Երևանում բնակվող ամուսնական զույգերի պարագայում ամուսնությամբ բացարձակապես բավարարված տղամարդկանց թիվը զգալիորեն գերազանցում է կանանց թվին (համապատասխանաբար 59% և 39%):

Մյուս կողմից, ինչպես տեսնում ենք, Գլենդելում հետազոտված ամուսնական զույգերի շարքում բացակայում են բացարձակ անբավարարվածությամբ թե կանայք, և թե տղամարդիկ: Ի տարբերություն դրան, Երևանում բնակվող ամուսնական զույգերի կանաց 6%-ը ցույց է տալիս բացարձակ անբավարարվածության ցուցանիշ:

Եվ վերջապես, երկու դեպքում էլ ամուսնությամբ բավարարվածության նվազագույն ցուցանիշները ցույց են տալիս կանայք (Երևանում 6% բացարձակ անբավարարվածություն, Գլենդելում 8% անբավարարվածություն):

Եթե փորձենք առանձին համեմատել կանանց, տղամարդկանց և ընդհանուր բավարարվածության աստիճանը առաջին և երկրորդ հետազոտական խմբերում, ապա կստանանք հետևյալ պատկերը՝

Հիստոգրամ 3. Ամուսնությամբ բավարարվածության ցուցանիշը, տղամարդիկ



Հիստոգրամ 4. Ամուսնությամբ բավարարվածության ցուցանիշը, կանայք



Հիստոգրամ 5. Ամուսնությամբ բավարարվածության ցուցանիշը, ընդհանուր



Ինչպես երևում է ներկայացվող հիստոգրամներում, Երևանաբնակ տղամարդիկ բացարձակ բավարարվածության ցուցանիշով գերազանցում են Գլենդելում բնակվող հայ տղամարդկանց (59%-ը 53%-ի դիմաց): Վերջիններս, սակայն զգալիորեն առաջ են անցնում չափավոր բավարարվածության մակարդակում (26%-ը 3%-ի դիմաց):

Կանանց դեպքում պատկերը բևեռայնորեն տարբերվում է: Երկրորդ հետազոտական խմբի կանայք բացարձակ բավարարվածության ցուցանիշով գերազանցում են Երևանում բնակվող նույն սեռի փորձարկվողներին մոտ երկու անգամ (53%-ը 30%-ի դիմաց): Ընդ որում, Երևանցի կանայք առաջ են անցնում Գլենդելաբնակներին դարձյալ չափավոր բավարարվածության մակարդակում (այս դեպքում տարբերությունը բավականին մեծ է՝ 32%-ը 2%-ի դիմաց):

Բավարարվածության ընդհանուր ցուցանիշի համեմատությունը ցույց է տալիս, որ հետազոտվող խմբերն ամուսնությամբ բավարարվածության առումով, էականորեն չեն

տարբերվում: Այդուհանդերձ, հենվելով ստացված տվյալների վրա կարելի է ասել, որ *երևանաբնակ ամուսնական զույգերի շրջանում ամուսնությամբ առավելապես բավարարված են տղամարդիկ, քան կանայք, ինչը սակայն չի նշանակում, որ նրանք, քննարկվող տեսանկյունից, էապես գերազանցում են Գլենդելում բնակվողներին: Ի տարբերություն դրան, Գլենդելում բնակվող հայ կանայք ամուսնությամբ բավարարվածության ցուցանիշով չեն զիջում իրենց ամուսիններին, միևնույն ժամանակ զգալիորեն գերազանցելով Երևանում բնակվող կանանց:*

Համադրելով մեթոդիկայի կիրառմամբ ստացված տվյալները հետազոտվող խմբերի վիճակագրական տվյալների հետ փորձենք բացահայտել դրանց միջև առկա կորելյացիոն կապերի բնույթն ու չափը: Կորելյացիոն վերլուծությունը մեր առջև բացում է հետևյալ պատկերը:

Աղյուսակ 7. Ամուսնությամբ բավարարվածության և ընտանիքների վիճակագրական չափանիշների կորելյացիոն վերլուծության արդյունքներ

	Ընդհանուր n=400	Երևան			Գլենդել		
		Ընդհ. n=200	Տղամարդ n=100	Կին n=100	Ընդհ. n=200	Տղամարդ n=100	Կին n=100
Տարիքի տարբերություն	-0.075*	-0.051*	-0.042*	-0.06*	-0.26***	-0.11*	-0.28***
Համատեղ կյանքի ժամանակամիջոց	-0.103**	-0.054*	0.148*	0.10*	-0.153**	0.098*	-0.34***
Ամուսնանալու տարիք	-0.079*	-0.061*	0.169*	-0.13*	-0.097*	-0.37***	0.082*
Ամուսնության հերթական համարը	-0.094*	-0.067*	-0.07*	-0.68***	-0.122*	-0.172*	-0.09*
Երեխաների քանակը	0.14***	0.359***	0.43***	0.321***	-0.140**	0.023*	-0.26***
Q-չափանիշ	0.103**	0.041*	0.173*	-0.05*	0.284***	0.148*	0.39***
Զուգընկերոջ բավարարվածության աստիճանը	0.805***	0.822***			0.823***		

* p>0.05 ; ** p≤ 0.05 ; *** p≤0.01

Աղյուսակի ամենաստորին տողում ներկայացված են ամուսնական զույգերում ամուսինների բավարարվածության աստիճանների միջև կորելյացիոն համեմատության արդյունքները: Ինչպես տեսնում ենք դրանք ամենաբարձր են ինչպես ընդհանուր առմամբ (երկու փորձարարական խմբերի տվյալները միասին վերցված), այնպես էլ առանձին խմբերում (Երևան, Գլենդել): Ընդհանուր, 400 հոգի հարցվողների շրջանում

զուգընկերների բավարարվածության աստիճանների միջև կորելյացիոն գործակիցը 0.805 է, p≤0.01 նշանակալիության ցուցանիշով: Առաջին հետազոտական խմբի ցուցանիշը (r=0.822, p≤0.01) չնչին չափով զիջում է երկրորդ հետազոտական խմբի չուցանիշին (r=0.823, p≤0.01): Դա նշանակում է, որ անկախ ամուսինների, կանանց և տղամարդկանց բավարարվածության աստիճանների տարբերությունների դրանց միջև հետազոտական երկու խմբերում առկա է համաչափ կորելյացիոն կապ, այսինքն, անկախ ամուսնությամբ բավարարվածության ցուցանիշի մեծությունից, հետազոտական երկու խմբում էլ ամուսիններից մեկի ամուսնությամբ բավարարվածության աստիճանն անմիջականորեն կապված է զուգընկերոջ բավարարվածության աստիճանի հետ:

Ինչպես ցույց է տրվում աղյուսակում, վիճակագրական ցուցանիշների և ամուսնությամբ բավարարվածության միջև կորելյացիոն կապի չափը և բնույթը տարբեր է հետազոտական առանձին խմբերում (Երևան, Գլենդել) և ենթախմբերում (տղամարդիկ, կանայք): Այսպես, ամուսինների միջև տարիքի տարբերությունը նշանակալի կորելյացիոն կապ է ի հայտ բերում ամուսնությամբ բավարարվածության հետ միայն հետազոտված գլենդելաբնակ կանանց մոտ (r=-0.28, p≤0.01): Կապը հակադարձ է, հետևաբար, որքան մեծ է տարիքային տարբերությունն ամուսինների միջև, այնքան ցածր է կնոջ բավարարվածության աստիճանը:

Համատեղ կյանքի ժամանակամիջոցը նշանակալի կորելյացիոն կապ է ի հայտ բերում գլենդելաբնակ կանանց շրջանում (r=-0.34, p≤0.01) և դարձյալ հակադարձ կապ: Դա նշանակում է, որ որքան մեծ է համատեղ կյանքի ժամանակամիջոցը, այնքան ցածր է ամուսնությամբ կնոջ բավարարվածության աստիճանը: Ամուսնանալու տարիքի և ամուսնությամբ բավարարվածության աստիճանի միջև հակադարձ կորելյացիոն կապ է նկատվում գլենդելաբնակ տղամարդկանց շրջանում (r=-0.37, p≤0.01). ամուսնությամբ բավարարվածության մակարդակն առավել բարձր է համեմատաբար վաղ տարիքում ամուսնացած գլենդելաբնակ տղամարդկանց շրջանում: Ամուսնության հերթական համարի ցուցանիշի և ամուսնությամբ բավարարվածության մակարդակի միջև նշանակալի կորելյացիոն կապ է գրանցվել միայն երևանաբնակ կանանց շրջանում (r=-0.68, p≤0.01):

Երեխաների քանակը էականորեն ազդում է ամուսնությամբ բավարարվածության աստիճանի վրա երևանաբնակ զույգերի շրջանում տղամարդկանց մոտ կազմելով (r=0.43, p≤0.01), կանանց մոտ՝ (r=0.321, p≤0.01): Զարմանալի է, որ գլենդելաբնակ տղամարդկանց շրջանում այս չափանիշը չունի էական նշանակություն (r=0.023, p>0.05), իսկ կանանց մոտ անգամ ձեռք է բերում հակադարձ նշանակություն (r=-0.26, p≤0.01): Դա նշանակում է, որ ի տարբերություն առաջին հետազոտական խմբի՝ երևանաբնակ տղամարդկանց և կանանց, որոնց ամուսնությամբ բավարարվածության աստիճանն այնքան ավելի բարձր է, որքան ավելի շատ երեխաներ նրանք ունեն, գլենդելաբնակ տղամարդկանց համար ամուսնությամբ բավարարվածության աստիճանն էականորեն կապված չէ նրանց երեխաների քանակության հետ, իսկ գլենդելաբնակ կանանց շրջանում ամուսնությամբ բավարարվածության ավելի բարձր ցուցանիշներ գրանցվում են նրանց մոտ, ովքեր ունեն համեմատաբար ավելի քիչ երեխաներ: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ դրա հետ մեկտեղ գլենդելաբնակ կանանց շրջանում նշանակալի կորելյացիոն կապ է բացահայտվում ամուսնությամբ բավարարվածության աստիճանի և Q-չափանիշի միջև, ինչը նշանակում է, որ նրանք ավելի բավարարված են իրենց ամուսնությամբ այնպիսի ընտանիքներում, որտեղ ամուսիններից և երեխաներից զատ միևնույն հարկի տակ ապրում են նաև ընտանիքի այլ անդամներ:

Այժմ փորձենք պարզել գրանցված տարբերությունների պատճառները՝ հետազոտելով ամուսինների՝ ընտանիքի հետ կապված պահանջմունքների բնույթը, նրանց դիրքորոշումները, հետազոտվող ընտանիքների դերային կառուցվածքը:

3.2. Երևանում և Գլենդելում բնակվող հայ ամուսինների՝ մի շարք պահանջմունքների բավարարման համար ընտանիքի նշանակության համեմատական հետազոտություն:

Փորձարարական խմբերում պահանջմունքների բավարարման համար ընտանիքի նշանակության հետազոտության համար մշակել և կիրառել ենք հարցարան, որի նպատակն է բացահայտել ընտանիքի նշանակությունը սեռական պահանջմունքների բավարարման, հասարակական բարձր դիրքի հասնելու, սիրած մարդու հետ ապրելու,

երեխաներ ունենալու, ապահով և լիարժեք կյանքի համար: Ընդ որում, առավել կարևորվում է խմբային (հետազոտվող խմբերի տեսանկյունից) գնահատականը:

Հարցարանն ունի հետևյալ տեսքը՝

«Խնդրում ենք կարդալ ստորև ներկայացվող հինգ դատողությունները և նշել դրանց համապատասխանող չորս հնարավոր տարբերակներից Ձեզ համար առավել ընդունելին:

1.*Սեռական պահանջմունքների բավարարման համար ամուսնական հարաբերությունները՝*
□ պարտադիր են
□ ցանկալի են
□ պարտադիր չեն
□ ցանկալի չեն

2. *Հասարակական բարձր կարգավիճակի հասնելու համար բարեկեցիկ ընտանիք ունենալու գործոնը՝*
□ առաջնային է
□ կարևոր է
□ երկրորդական է
□ ոչ մի նշանակություն չունի

3. *Երեխաներ ունենալու համար ամուսնությունը՝*
□ պարտադիր պայման է
□ ցանկալի պայման է
□ ամենևին պարտադիր չէ
□ ոչ մի նշանակություն չունի

4. *Ամուսնությունը սիրած մարդու հետ ապրելու՝*
□ պարտադիր պայման է
□ ցանկալի պայման է
□ հետևանք է
□ ոչ մի նշանակություն չունի

5. *Ապահով և լիարժեք կյանքի համար ընտանիքը՝*
□ կարևորագույն գործոն է
□ կարևոր է այլ բազմաթիվ գործոնների շարքում
□ կարևոր չէ
□ խոչընդոտ է»:

Հարցերին տրվող պատասխանները գնահատվում են 0-3 տիրույթում, ներքևից վերև: Այնուհետև խմբի անդամների կողմից յուրաքանչյուր դատողությանը տրված պատասխանները գումարվում են և դասավորվում ըստ մեծության: Բացահայտվում է հետազոտվող խմբի շրջանակներում ընտանիքի առավել կարևորվող նշանակությունը:

Հարցման արդյունքները ներկայացված են հետևյալ աղյուսակներում՝

Աղյուսակ 8. Մի շարք պահանջմունքների բավարարման համար ընտանիքի նշանակության ցուցանիշ

Երևան		
Ընդհանուր	Տղամարդիկ	Կանայք
Երեխա ունենալու ցանկություն	Երեխա ունենալու ցանկություն	Ապահով և լիարժեք կյանք
Ապահով և լիարժեք կյանք	Ապահով և լիարժեք կյանք	Երեխա ունենալու ցանկություն
Սիրած մարդու հետ ապրելու ցան-կություն	Սիրած մարդու հետ ապրելու ցան-կություն	Սիրած մարդու հետ ապրելու ցան-կություն
Սեռական պահանջմունքներ	Հասարակական բարձր կարգավիճակ	Սեռական պահանջմունքներ
Հասարակական բարձր կարգավիճակ	Սեռական պահանջմունքներ	Հասարակական բարձր կարգավիճակ
Գլենդել		
Ընդհանուր	Տղամարդիկ	Կանայք
Ապահով և լիարժեք կյանք	Ապահով և լիարժեք կյանք	Ապահով և լիարժեք կյանք
Սեռական պահանջմունքներ	Սեռական պահանջմունքներ	Հասարակական բարձր կարգավիճակ
Երեխա ունենալու ցանկություն	Երեխա ունենալու ցանկություն	Երեխա ունենալու ցանկություն
Սիրած մարդու հետ ապրելու ցան-կություն	Սիրած մարդու հետ ապրելու ցան-կություն	Սեռական պահանջմունքներ
Հասարակական բարձր կարգավիճակ	Հասարակական բարձր կարգավիճակ	Սիրած մարդու հետ ապրելու ցան-կություն

Ինչպես տեսնում ենք, տղամարդկանց և կանանց հայացքների տարբերությունները սկզբունքորեն ավելի շատ են հետազոտական երկրորդ խմբում: Օրինակ՝ հասարակական բարձր կարգավիճակի ձգտումը Գլենդելում բնակվող արական սեռի փորձարկվողների մոտ գրավում է վերջին՝ հինգերորդ հորիզոնականը, այն դեպքում, երբ նրանց կանանց մոտ այն երկրորդն է (երեք տող): Սեռական պահանջմունքները նույն փորձարարական խմբի տղամարդկանց մոտ երկրորդն է, կանանց մոտ՝ չորրորդը (երկու տող):

Երևանաբնակ հետազոտվողների շրջանում նման տարբերություններ չեն զգացվում: Այստեղ շեղումների առավելագույն հեռավորությունը մեկ տող է: Կիրառված նախորդ մեթոդիկայի արդյունքների հետ համադրության արդյունքում, կարող ենք ասել, որ չնայած այն հանգամանքին, որ հետազոտական առաջին խմբի ամուսնական

զույգերի կանանց և տղամարդկանց՝ ընտանիքի հետ կապված պահանջմունքները հիմնականում համապատասխանում են, տղամարդկանց դեպքում դրանք առավել հաճախակի են բավարարվում, քան կանանց: Երկրորդ խմբում ճիշտ հակառակն է: Գլենդելում բնակվող հետազոտվող ամուսինների մոտ ընտանիքի հետ կապված պահանջմունքները չեն համապատասխանում, բայց բավարարվում են հավասարապես:

Մյուս կողմից, քանի-որ, ինչպես պարզվեց նախորդ մեթոդիկայի կիրառման արդյունքում, ամուսնական բավարարվածության չափանիշով՝ հետազոտվող երևանաբնակ կանայք զգալիորեն զիջում են Գլենդելում բնակվողներին, մեզ համար կարևոր է նրանց համար մի շարք պահանջմունքների բավարարման ընթացքում ընտանիքի նշանակության համեմատությունը: Այդ նպատակով համադրենք կանանց ցուցանիշները՝

Աղյուսակ 9. Մի շարք պահանջմունքների բավարարման համար ընտանիքի նշանակության ցուցանիշ, կանայք

Կանայք	
Երևան	*Գլենդել*
Ապահով և լիարժեք կյանք	Ապահով և լիարժեք կյանք
Երեխա ունենալու ցանկություն	Հասարակական բարձր կարգավիճակ
Սիրած մարդու հետ ապրելու ցան-կություն	Երեխա ունենալու ցանկություն
Սեռական պահանջմունքներ	Սեռական պահանջմունքներ
Հասարակական բարձր կարգավիճակ	Սիրած մարդու հետ ապրելու ցան-կություն

Աղյուսակից երևում է, որ հետազոտվող խմբերի միջև առավել նշանակալի տարբերությունը վերաբերում է հասարակական բարձր կարգավիճակի ձգտման համար ընտանիքի նշանակության չափանիշին (երեք տող): Երևանաբնակ հետազոտվողները դրան հատկացնում են ամենաներքևի հորիզոնականը: Դա նշանակում է, որ Երևանում, ի տարբերություն Գլենդելի, բարձր հասարակական կարգավիճակի հասնելու համար ընտանիքն էական նշանակություն չունի: Ինչ չի կարելի ասել սիրած մարդու հետ ապրելու ցանկությանը, որը վերջին հորիզոնականն է գրավում երկրորդ հետազոտական խմբի կանանց մոտ: Երևանաբնակների մոտ այն

երրորդն է, ինչը ցույց է տալիս, որ այստեղ ընտանիքը կարևորվում է սիրած մարդու հետ ապրելու պահանջմունքի բավարարման համար: Այս ամենից կարելի է ենթադրել, որ հետազոտական առաջին խմբում կարևորվող սիրո պահանջմունքը, ինչպես նաև երկրորդ խմբի հետ համընկնող այլ պահանջմունքները, ավելի մեծ դժվարությամբ է բավարարվում, քան Գլենդելում բնակվող հետազոտվողների պահանջմունքները և մասնավորապես հասարակական բարձր կարգավիճակի հասնելու ձգտումը:

Աչքի է զառնում նաև այն հանգամանքը, որ գլենդելաբնակ կանանց շրջանում ընտանիքը որպես երեխա ունենալու պահանջմունքի բավարարման միջոց իր տեղը զիջում է հասարակական բարձր կարգավիճակի հասնելու ձգտմանը՝ պահանջմունքի, որը երևանաբնակ կանանց շրջանում գրավում է վերջին հորիզոնականը: Ըստ ամենայնի այս երևույթի մեջ իր արտացոլումն է գտնում նախորդ բաժնում գլենդելաբնակ կանանց ամուսնությամբ բավարարվածության և երեխաների քանակության միջև գրանցված հակադարձ կորելյացիոն կապը: Հենվելով այս ցուցանիշների վրա կարելի է ասել, որ փորձարարական երկրորդ խմբի կանայք ամուսնությամբ բավարարված կլինեն ավելի մեծ չափով այն դեպքում, երբ ընտանիքը օգնի նրանց հասարակական բարձր կարգավիճակի հասնելու ճանապարհին: Երեխաների մեծ քանակությունն, այս դեպքում, կարող է հանդես գալ որպես խոչընդոտ:

3.3. Երևանում և Գլենդելում բնակվող հայազգի ամուսնական զույգերում դիրքորոշումների համեմատական հետազոտություն:

Հետազոտվող ամուսնական զույգերում դիրքորոշումների արտահայտվածության և համապատասխանության հետազոտության նպատակով կիրառվել է Ալյոշինայի «Ամուսնական զույգում դիրքորոշումների չափման» հարցարանը: Հարցարանը հնարավորություն է տալիս որոշելու հարցվողների որոշ դիրքորոշումների հերթականությունն ըստ գերակայման և ամուսինների շրջանում այդ դիրքորոշումների համապատասխանության աստիճանը: Ըստ այդմ՝ հարցարանը մեր կողմից կիրառվել է Երևանում և Գլենդելում բնակվող ազգությամբ հայ ամուսնական զույգերում դիրքորոշումների գերակայության որոշման, ամուսինների դիրքորոշումների

համապատասխանության, ինչպես նաև այդ գործոնների և ամուսնությամբ բավարարվածության միջև կապի բացահայտման և չափման նպատակով:

Ամուսնական զույգում դիրքորոշումների բացահայտման մեթոդիկան պարունակում է տաս սանդղակ, որոնցով չափվում է հետևյալ դիրքորոշումների ներկայացվածության աստիճանը (4-16 միավորների միջակայքում) ՝

1. Մարդկանց հանդեպ վերաբերմունքի սանդղակ (որքան բարձր է միավորը, այնքան հարցվողի պատկերացումները մարդկանց մասին ավելի լավատեսական են),

2.Պարտքի զգացումի և բավականության միջև այլընտրանքի սանդղակ (որքան բարձր է միավորը, այքան ավելի մեծ չափով է հարցվողը կողմնորոշված պարտքի զգացումին, քան բավականությանը),

3.Երեխաների նկատմամբ վերաբերմունքի սանդղակ (որքան բարձր է միավորը, այնքան ավելի է հարցվողի կողմից արժեվորվում երեխաների դերն ընտանեկան կյանքում),

4.Առավելապես համատեղ կամ առավելապես անջատ գործունեության կողմնորոշման, ամուսինների անկախության կամ փոխկախվածության սանդղակ (որքան բարձր է միավորը այնքան ավելի է հարցվողը կողմնորոշված դեպի ամուսինների համատեղ գործունեությունն ընտանեկան կյանքի բոլոր ոլորտներում),

5.Ամուսնալուծության նկատմամբ վերաբերմունքի սանդղակ (որքան ցածր է միավորը, այնքան հարցվողն ավելի լոյալ է ամուսնալուծության նկատմամբ),

6. Ռոմանտիկ սիրո նկատմամբ վերաբերմունքի սանդղակ (որքան բարձր է միավորը, այնքնան հարցվողի մոտ ավելի է արտահայտված հակումը ռոմանտիկ սիրուն),

7. Ամուսնական կյանքում սեռական ոլորտի կարևորության գնահատականի սանդղակ (որքան բարձր է միավորը, այնքան քիչ նշանակություն է ընտանեկան կյանքում հարցվողը տալիս սեռական ոլորտին),

8. Սեռական հարաբերությունների արգելված լինելու նկատմամբ վերաբերմունքի սանդղակ (որքան բարձր է միավորը, այնքան ավելի է հարցվողին սեռական հարաբերությունների թեման արգելված թվում),

9. Ընտանիքի հայրիշխանական կամ էգալիտար կառուցվածքի նկատմամբ վերաբերմունքի սանդղակ (որքան բարձր է միավորը, այնքան հարցվողի պատկերացումները քիչ են համապատասխանում կնոջ ավանդական դերին),

10.Դրամի նկատմամբ վերաբերմունքի սանդղակ (որքան բարձր է միավորը, այքան հարցվողն ավելի խնայող է դրամի նկատմամբ):

Փորձենք բացահայտել երկու փարձարարական խմբերում դիրքորոշումների տարբերությունների արժեքը՝ կիրառելով անկախ ընտրանքների համեմատության t-չափանիշը:

Աղյուսակ 10. Փորձարարական խմբերի միջև դիրքորոշումների տարբերության արժեքը

	Ընդհ. df =398	Տղամարդ df=198	Կին df=198
1-ին սանդղակ	1.722*	1.68*	0.724*
2-րդ սանդղակ	0.900*	0.278*	1.067*
3-րդ սանդղակ	2.998***	2.673***	1.564*
4-րդ սանդղակ	0.078*	2.359**	-0.780*
5-րդ սանդղակ	-0.505*	0.256*	-1.105*
6-րդ սանդղակ	0	0.462*	-0.786*
7-րդ սանդղակ	-0.644*	0	-0.908*
8-րդ սանդղակ	-1.207*	-1.005*	-0.746*
9-րդ սանդղակ	-0.145*	-1.383*	0.797*
10-րդ սանդղակ	-2.663***	-1.744*	-1.949*

* $p>0.05$; ** $p\leq0.05$; *** $p\leq0.01$

Ինչպես տեսնում ենք 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ սանդղակների առումով տարբերությունները վիճակագրական տեսանկյունից նշանակալի չեն: Նշանակալի տարբերություններ են բացահայտվում 3-րդ սանղակի չափանիշների միջև: Ընդ որում, տարբերություններն առավել զգալի են տղամարդկանց մոտ: Դա նշանակում է, որ հետազոտության ենթարկված երևանաբնակ հայ ընտանիքներում տղամարդիկ զգալիորեն ավելի մեծ դեր են հատկացնում երեխաներին, քան գլենդելաբնակ ընտանիքների տղամարդիկ: Տղամարդկանց ցուցանիշների միջև տարբերություն կա նաև 4-րդ սանդղակի առումով, ինչը սակայն էականորեն չի ազդում ընդհանուր ցուցանիշի վրա, սակայն ցույց է տալիս, որ երեանաբնակ տղամարդիկ առավել մեծ չափով են հակված համատեղ ընտանեկան գործունեությանը, քան նրանց

գլենդելաբնակ ազգակիցները: Եվ վերջապես 10-րդ սանդղակում, որտեղ ցույց է տրվում դրամի հանդեպ խնայողական վերաբերմունքի չափը, երկու փորձարարական խմբերի տղամարդկանց և կանանց ցուցանիշների միջև տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ, սակայն ընդհանուր չափանիշը ցույց է տալիս, որ գլենդելաբնակ ամուսնական զույգերը զգալիորեն ավելի խնայող վերաբերմունք են ցուցաբերում դրամի նկատմամբ, քան երևանաբնակ զույգերը:

Այժմ անդրադառնանք հետազոտական խմբերում դիրքորոշումների ներկայացվածությանը:

Հիստոգրամ 6. Ամուսնական զույգում դիրքորոշումների չափման մեթոդիկայի արդյունքները, տղամարդիկ



	1	2	3	4	5	6	7	8	9	10
Երևան	10.8	9.7	13.4	13.5	10.3	12.9	11.1	8.9	10.5	9.4
Գլենդել	9.2	9.4	11.6	11.9	10.1	12.2	11.1	9.7	11.6	10.8

Ինչպես տեսնում ենք, հետազոտական խմբերի միջև առկա են որոշակի տարբերություններ: Հիստոգրամից երևում է, որ երևանաբնակ տղամարդիկ գլենդելաբնակ տղամարդկանց գերազանցում են հետևյալ չափանիշներով՝ նրանք ավելի շատ են արժեվորում երեխաների դերն ընտանեկան կյանքում (3-րդ սանդղակ, տարբերությունը 1.8 միավոր), մարդկանց հանդեպ վերաբերմունքի տեսանկյունից առավել լավատես են (1-ին սանդղակ, տարբերությունը 1.6 միավոր), առավելապես հակված են գործելու համատեղ՝ ընտանեկան կյանքի բոլոր ոլորտներում (4-րդ սանդղակ, տարբերությունը 1.6 միավոր): Երևանաբնակ տղամարդիկ գլենդելաբնակ տղամարդկանց համեմատությամբ առավել հակված են ռոմանտիկ սիրուն (6-րդ սանդղակ, տարբերությունը 0.7), ավելի շատ են առաջնորդվում պարտքի զգացումով (2-րդ սանդղակ, տարբերությունը 0.3 միավոր), ամուսնալուծության նկատմամբ քիչ լոյալություն են դրսևորում (5-րդ սանդղակ, տարբերությունը 0.2 միավոր): Ամուսնական

կյանքում սեռական ոլորտի կարևորման առումով հետազոտական երկու խմբերի տղամարդիկ ցույց են տալիս հավասար ցուցանիշներ (7-րդ սանդղակ):

Գլենդելաբնակ տղամարդիկ երևանաբնակ տղամարդկանց գերազանցում են հետևյալ չափանիշներով՝ դրամի նկատմամբ նրանք ունեն ավելի խնայող վերաբերմունք (10-րդ սանդղակ, տարբերությունը 1.4 միավոր), ավելի հակված են ընտանիքի էգալիտար կառուցվածքին (9-րդ սանդղակ, տարբերությունը 1.1 միավոր), սեռական հարաբերությունների թեման նրանց ավելի փակ է թվում (8-րդ սանդղակ, տարբերությունը 0.8 միավոր):

Հարցման ենթարկված կանանց պարագայում պատկերը փոքր ինչ այլ է:

Հիստոգրամ 7. Ամուսնական զույգում դիրքորոշումների չափման մեթոդիկայի արդյունքները, կանայք



	1	2	3	4	5	6	7	8	9	10
Երևան	10	10.3	12.9	12.1	9.8	13.4	10.1	9.1	11.5	9.7
Գլենդել	9.3	9.5	11.7	12.8	10.5	14.1	10.6	10	10.6	11.4

Հայաստանաբնակ կանայք գլենդելաբնակ կանանց գերազանցում են հետևյալ չափանիշներով՝ նրանք ավելի են արժեվորում երեխաների դերն ընտանեկան կյանքում (3-րդ սանդղակ, տարբերությունը 1.2 միավոր), ավելի հակված են ընտանիքի էգալիտար կառուցվածքին (9-րդ սանդղակ, տարբերությունը 0.9 միավոր), ավելի շատ են առաջնորդվում են պարտքի զգացումով (2-րդ սանդղակ, տարբերությունը 0.8 միավոր), մարդկանց հանդեպ տրամադրված են ավելի լավատեսորեն (1-ին սանդղակ, տարբերությունը 0.7 միավոր):

Մյուս չափանիշներով գերազանցում են հետազոտության ենթարկված գլենդելաբնակ կանայք: Նրանք ավելի խնայող են (10-րդ սանդղակ, տարբերությունը 1.7 միավոր), սեռական հարաբերությունների թեման նրանց ավելի արգելված է թվում (8-րդ սանդղակ, տարբերությունը 0.9), ավելի կողմնորոշված են դեպի ամուսինների համատեղ գործունեությունը (4-րդ սանդղակ, տարբերությունը 0.7 միավոր),

ամուսնալուծության նկատմամբ քիչ լոյալ են (5-րդ սանդղակ, տարբերությունը 0.7 միավոր), նրանց մոտ ռոմանտիկ սիրուն հակումն առավել արտահայտված է (6-րդ սանդղակ, տարբերությունը 0.7 միավոր), ընտանեկան կյանքում սեռական ոլորտին քիչ նշանակություն են տալիս (7-րդ սանդղակ, տարբերությունը 0.5 միավոր):

Ամուսնական զույգերում դիրքորոշումների հետազոտության ընդհանրացված պատկերը հետևյալն է՝

Հիստոգրամ 8. Ամուսնական զույգում դիրքորոշումների չափման մեթոդիկայի արդյունքները, ընդհանուր



Հետազոտության ենթարկված երևանաբնակ հայ ամուսնական զույգերը գլենդելում բնակվող հայ ամուսնական զույգերի համեմատությամբ ավելի են կարևորում երեխաների դերն ընտանեկան կյանքում (3-րդ սանդղակ, տարբերությունը 1.5), մարդկանց հանդեպ տրամադրված են ավելի լավատեսորեն (1-ին սանդղակ, տարբերությունը 1.1), ավելի մեծ չափով են առաջնորդվում պարտքի զգացումով (2-րդ սանդղակ, տարբերությունը 0.5 միավոր), հակված են ամուսինների համատեղ գործունեությանը, նրանց շրջանում ավելի մեծ է փոխկախվածությունը (4-րդ սանդղակ, 0.4 միավոր):

Գլենդելաբնակ հայ ամուսնական զույգերն աչքի են ընկնում դրամի նկատմամբ առավել խնայողաբար վերաբերմունքով (10-րդ սանդղակ, տարբերությունը 1.5), սեռական հարաբերությունների թեման նրանց ավելի արգելված է թվում (8-րդ սանդղակ, տարբերությունը 0.9 միավոր), նրանք ավելի քիչ նշանակությամբ են օժտում սեռական փոխհարաբերություններն ամուսնական կյանքում (7-րդ սանդղակ, 0.3 միավոր), ամուսնալուծության նկատմամբ ցուցաբերում են համեմատաբար քիչ լոյալություն (5-րդ սանդղակ, տարբերությունը 0.2 միավոր) և չնչին չափով

գերազանցում են ընտանիքի էգալիտար կառուցվածքի հակվածության տեսանկյունից (9-րդ սանդղակ, տարբերությունը 0.1 միավոր): Ռոմանտիկ սիրո նկատմամբ վերաբերմունքի տեսանկյունից երկու փորձարարական խմբերի արդյունքները հավասար են (6-րդ սանդղակ):

Փորձենք համադրել ամուսնական զույգում դիրքորոշումների որոշման մեթոդիկայի արդյունքները ամուսնությամբ բավարարվածության ցուցանիշների հետ՝ պարզելու, թե որքանով են կապված կոնկրետ դիրքորոշման ներկայացվածության չափը և ամուսինների բավարարվածությանը աստիճանը: Կորելյացիոն վերլուծությունն իրականացվել է երկու ուղղություններով: Մի դեպքում փորձ է արվել բացահայտել կորելյացիոն կապ ամուսինների դիրքորոշումների և նրանց իսկ բավարարվածության ցուցանիշների (միաբևեռ համեմատություն), երկրորդ դեպքում՝ ամուսինների դիրքորոշումների և նրանց զուգընկերների բավարարվածության ցուցանիշների (երկբևեռ համեմատություն) միջև:

Աղյուսակ 11. Կորելյացիոն կապը ամուսինների դիրքորոշումների և ընտանիքով նրանց բավարարվածության ցուցանիշների միջև

	Ընդհ. n=400	Երևան			Գլենդել		
		Ընդհ. n=200	Տղ. n=100	Կին n=100	Ընդհ. n=200	Տղ. n=100	Կին n=100
1-ին սանդղակ	0.108**	0.043*	0.098*	-0.053*	0.194***	0.460***	0.037*
2-րդ սանդղակ	0.034*	-0.107*	0.106*	-0.147*	0.149**	0.522***	-0.163*
3-րդ սանդղակ	0.224***	0.365***	0.280***	0.379***	0.098*	0.412***	-0.175*
4-րդ սանդղակ	0.202***	0.118**	0.005*	0.096*	0.338***	0.387***	0.331***
5-րդ սանդղակ	-0.018*	-0.021*	0.277***	-0.335***	-0.011*	0.237**	-0.218**
6-րդ սանդղակ	0.129***	0.094*	-0.129*	0.345***	0.168**	0.428***	-0.175*
7-րդ սանդղակ	0.195***	0.233***	0.380***	0.087*	0.139**	0.018*	0.279***
8-րդ սանդղակ	-0.244***	-0.138**	0.056*	-0.229**	-0.444***	-0.458***	-0.451***
9-րդ սանդղակ	0.201***	0.104*	-0.282***	0.340***	0.334***	-0.070*	0.586***
10-րդ սանդղակ	-0.003*	-0.197***	-0.191**	-0.186*	0.251***	0.118*	0.379***

* p>0.05 ; ** p≤ 0.05 ; *** p≤0.01

Նախ անդրադառնանք երկու հետազոտական խմբերի ընդհանուր տվյալներին (Ընդհ. n=400): Աղյուսակից երևում է, որ 2-րդ (պարտքի զգացում կամ բավականություն), 5-րդ (ամուսնալուծության նկատմամբ վերաբերմունքի լոյալություն)

և 10-րդ (դրամի նկատմամբ խնայողական վերաբերմունք) սանդղակների ցուցանիշների և ամուսնությամբ բավարարվածության չափանիշի միջև կորելյացիոն կապ չի նկատվում: Առավել զգալի է 8-րդ սանդղակի, սեռական հարաբերությունների արգելված լինելու և ամուսնությամբ բավարարված լինելու միջև կապը ($r=-0.244$, $p\leq0.01$): Ընդ որում, կապը հակադարձ է, ինչը նշանակում է, որ, որքան ամուսինը (կինը կամ տղամարդը) սեռական հարաբերությունների թեման ավելի փակ է համարում, այնքան ավելի ցածր է ամուսնությամբ նրա բավարարվածության աստիճանը:

Կորելյացիոն կապի ուժի առումով հաջորդն ընտանեկան կյանքում երեխաներին հատկացվող դերն է (3-րդ սանդղակ, $r=0.224$, $p\leq0.01$): Երեխաներին ավելի մեծ նշանակություն տվող հետազոտվողների մոտ ամուսնությամբ բավարարվածության աստիճանն ավելի բարձր է: Հաջորդը 4-րդ սանդղակն է, որը որոշում է համատեղ ընտանեկան գործունեության հակումը: Այստեղ նկատվում է դրական կորելյացիոն կապ ($r=0.202$, $p\leq0.01$), ինչը նշանակում է, որ այն հետազոտվողները, ովքեր առավելապես հակված են համատեղ ընտանեկան գործունեության, ունեն ամուսնությամբ բավարարվածության առավել բարձր ցուցանիշներ:

Ամուսնությամբ բավարարվածության աստիճանի հետ կորելյացիոն կապի մեջ է ընտանիքի էգալիտար կառուցվածքի նկատմամբ հետազոտվողների հակումը (9-րդ սանդղակ, $r=0.201$, $p\leq0.01$), ինչը ցույց է տալիս, որ հետազոտվողների շրջանում ընտանիքի անդամների հավասար իրավունքներ ունենալու կողմնակիցներն ունեն ամուսնությամբ բավարարվածության ավելի բարձր ցուցանիշներ: Ամուսնական կյանքում սեռական ոլորտին հատկացվող նշանակության դեպքում (7-րդ սանդղակ, $r=0.195$, $p\leq0.01$), ամուսնությամբ բավարարվածության բարձր ցուցանիշներ ունեն այն հետազոտվողները, ովքեր ավելի քիչ նշանակություն են տալիս սեռական փոխհարաբերություններին:

Նշանակալի կորելյացիոն կապ է բացահայտվում նաև ռոմանտիկ սիրո նկատմամբ հակվածության (6-րդ սանդղակ, $r=0.129$, $p\leq0.01$) և ամուսնությամբ բավարարվածության աստիճանի, մարդկանց հանդեպ լավատեսական

վերաբերմունքի (1-ին սանդղակ, r=0.108, p≤0.05) և ամուսնությամբ բավարարվածության միջև:

Խմբային արդյունքների վերլուծությունը բացահայտում է մի շարք տարբերություններ ինչպես հետազոտական խմբերի, այնպես էլ միևնույն հետազոտական խմբի ներսում՝ սեռական պատկանելությամբ որոշվող ենթախմբերի միջև: Այսպես, մարդկանց հանդեպ լավատեսական վերաբերմունքի չափանիշի (1-ին սանդղակ) և ամուսնությամբ բավարարվածության աստիճանի միջև կորելյացիոն կապ է բացահայտվում երևանաբնակ տղամարդկանց (r=0.098, p≤0.05) և գլենդելաբնակ տղամարդկանց (r=0.460, p≤0.01) շրջանում: Գլենդելաբնակ տղամարդկանց շրջանում կապ է դիտվում նաև պարտքի բարձր զգացման (2-րդ սանդղակ) և ամուսնությամբ բավարարվածության միջև (r=0.522, p≤0.01): Ընտանեկան կյանքում երեխաների դերի նշանակաության (3-րդ սանդղակ) և ամուսնությամբ բավարարվածության միջև կորելյացիոն կապ է բացահայտվում երևանաբնակ տղամարդկանց (r=0.280, p≤0.01) և կանանց (r=0.0.379, p≤0.01), գլենդելաբնակ տղամարդկանց (r=0.412, p≤0.01) շրջանում: Հետազոտության ենթարկված գլենդելաբնակ ամուսնական զույգերի մոտ առկա է կորելյացիոն կապ համատեղ ընտանեկան գործունեության հակման (4-րդ սանդղակ) և ամուսնությամբ բավարարվածության միջև (տղամարդիկ՝ r=0.387, p≤0.01; կանայք r=0.331, p≤0.01): Ամուսնալուծության նկատմամբ վերաբերմունքի տեսանկյունից (5-րդ սանդղակ) փորձարկվող խմբերում պատկերը բավականին նման է: Թե Երևանում և թե Գլենդելում բնակվող ամուսնական զույգերում ամուսնությամբ բավարարվածության և ամուսնալուծության նկատմամբ ոչ լոյալ վերաբերմունքի միջև տղամարդկանց շրջանում գրանցվել է ուղիղ (Երևան՝ r=0.277, p≤0.01, Գլենդել՝ r=0.237, p≤0.05), կանանց շրջանում հակադարձ (Երևան՝ r=-0.335, p≤0.01, Գլենդել r=-0.218, p≤0.05) կորելյացիոն կապեր:

Ռոմանտիկ սիրո նկատմամբ հակվածության (6-րդ սանդղակ) և ամուսնությամբ բավարարվածության միջև նշանակալի կորելյացիոն կապ է բացահայտվել երևանաբնակ կանանց (r=0.345, p≤0.01) և գլենդելաբնակ տղամարդկանց (r=0.428, p≤0.01) շրջանում, իսկ ամուսնական կյանքում սեռական ոլորտի կարևորման (7-րդ սանդղակ) և ամուսնությամբ բավարարվածության միջև՝ երևանաբնակ տղամարդկանց

(r=0.380, p≤0.01) և գլենդելաբնակ կանանց (r=0.279, p≤0.01) շրջանում: Սեռական հարաբերությունների թեմայի արգելվածության չափանիշի (8-րդ սանդղակ) և ամուսնությամբ բավարարվածության միջև կորելյացիոն կապ է բացահայտվել երևանաբնակ կանանց (r=-0.229, p≤0.05), գլենդելաբնակ տղամարդկանց (r=-0.458, p≤0.01) և կանանց (r=0.451, p≤0.01) շրջանում: Ընտանիքի էգալիտար կառուցվածքի հանդեպ հակման և ամուսնությամբ բավարարվածության միջև կորելյացիոն կապ է բացահատվել երևանաբնակ տղամարդկանց (r=-0.282, p≤0.01), երևանաբնակ կանանց (r=0.340, p≤0.01) և գլենդելաբնակ կանանց (r=0.586, p≤0.01) շրջանում: Եվ վերջին՝ դրամի հանդեպ խնայողական վերաբերմունքի (10-րդ սանդղակ) և ամուսնությամբ բավարարվածության միջև նշանակալի կորելյացիոն կապ է բացահայտվել երևանաբնակ տղամարդկանց (r=-0.191, p≤0.05), և գլենդելաբնակ կանանց (r=0.379, p≤0.01) շրջանում:

Երկբևեռ համեմատության արդյունքները մեր առջև բացում են հետևյալ պատկերը.

Աղյուսակ 12. Կորելյացիոն կապը ամուսինների դիրքորոշումների և նրանց զուգընկերների բավարարվածության ցուցանիշների միջև

	Ընդհ. n=400	Երևան			Գլենդել		
		Ընդհ. n=200	Տղամարդ n=100	Կին n=100	Ընդհ. n=200	Տղամարդ n=100	Կին n=100
1-ին սանդղակ	0.064*	-0.144**	-0.273***	-0.018*	0.324***	0.248**	0.416***
2-րդ սանդղակ	0.15***	0.087*	-0.020*	0.143*	0.210***	-0.237**	0.496***
3-րդ սանդղակ	0.060*	0.133*	0.340***	-0.001*	-0.022*	-0.176*	0.073*
4-րդ սանդղակ	-0.029*	-0.145**	-0.224**	0.020*	0.152**	0.167*	0.163*
5-րդ սանդղակ	0.056*	0.028*	-0.519***	0.361***	0.118*	0.096*	0.139*
6-րդ սանդղակ	0.241***	0.252***	0.231**	0.245**	0.235***	-0.338***	0.453***
7-րդ սանդղակ	0.086*	0.150**	-0.126*	0.559***	-0.017*	0.102*	-0.088*
8-րդ սանդղակ	-0.056*	0.068*	0.048*	0.084*	-0.276***	-0.161*	-0.514***
9-րդ սանդղակ	0.087*	0.098*	0.130*	0.006*	0.073*	0.199**	-0.040*
10-րդ սանդղակ	-0.023*	-0.232***	-0.301***	-0.244**	0.247***	0.335***	0.200**

* p>0.05 ; ** p≤ 0.05 ; *** p≤0.01

Աղյուսակից երևում է, որ հետազոտական ողջ համակազմի համար ամուսնությամբ բավարարվածության աստիճանի և զուգընկերոջ դիրքորոշումների միջև զգալի կորելյացիոն կապ է գրանցվում 2-րդ (պարտքի զգացում, r=0.15, p≤0.01) և 6-րդ (հակում ռոմանտիկ սիրուն, r=0.241, p≤0.01) սանդղակներում: Խմբային վերլուծությունը ցույց է տալիս, որ ամուսնությամբ բավարարվածության աստիճանը

նշանակալի կորելյացիոն կապի մեջ է գտնվում՝ մարդկանց հանդեպ զուգընկերոջ լավատեսական վերաբերմունքի (1-ին սանդղակ, երևանաբնակ տղամարդիկ՝ r=-0.273, p≤0.01, գլենդելաբնակ տղամարդիկ՝ r=0.248, p≤ 0.05, գլենդելաբնակ կանայք՝ r=0.416, p≤0.01), պարտքի զգացումի գերակայման (2-րդ սանդղակ, գլենդելաբնակ տղամարդիկ՝ r=-237, p≤ 0.05, գլենդելաբնակ կանայք՝ r=0.496, p≤0.01), երեխաների դերի նշանակության (3-րդ սանդղակ, երևանաբնակ տղամարդիկ՝ r=0.340, p≤0.01), համատեղ ընտանեկան գործելակերպի (4-րդ սանդղակ, երևանաբնակ տղամարդիկ՝ r=-0.224, p≤0.05), ամուսնալուծության նկատմամբ ոչ լոյալության (5-րդ սանդղակ, երևանաբնակ տղամարդիկ՝ r=-0.519, p≤0.01, երևանաբնակ կանայք՝ r=0.361, p≤0.01), ռոմանտիկ սիրո հակման (6-րդ սանդղակ, երևանաբնակ տղամարդիկ՝ r=0.231, p≤0.05, երևանաբնակ կանայք՝ r=0.245, p≤0.05, գլենդելաբնակ տղամարդիկ՝ r=-0.338, p≤0.01, գլենդելաբնակ կանայք՝ r=0.453, p≤0.01), ամուսնական կյանքում սեռական ոլորտի բարձր արժորման (7-րդ սանդղակ, երևանաբնակ կանայք՝ r=0.559, p≤0.01), սեռական հարաբերությունների թեմայի արգելված լինելու (8-րդ սանդղակ, գլենդելաբնակ կանայք՝ r=-0.514, p≤0.01), ընտանիքի էգալիտար կառուցվածքի հակման (9-րդ սանդղակ, գլենդելաբնակ տղամարդիկ՝ r=0.199, p≤0.05), դրամի հանդեմ խնայողական վերաբերմունքի (10-րդ սանդղակ, երևանաբնակ տղամարդիկ՝ r=-0.301, p≤0.01, երևանաբնակ կանայք՝ r=-0.224, p≤0.05, գլենդելաբնակ տղամարդիկ՝ r=0.335, p≤0.01, գլենդելաբնակ կանայք՝ r=0.2, p≤0.05) հետ:

Կորելյացիոն վերլուծության արդյունքները ենթախմբերի (երևանաբնակ տղամարդիկ, երևանաբնակ կանայք, գլենդելաբնակ տղամարդիկ, գլենդելաբնակ կանայք) համար առավել հանգամանորեն կտրվեն հետազոտության արդյունքների ամփոփման բաժնում: Այժմ անդրադառնանք փորձարարական խմբերում զուգընկերների ամուսնական դիրքորոշումների համապատասխանության չափանիշին:

Տվյալների խմբային վերլուծության արդյունքում պարզվեց, որ երևանաբնակ ամուսինների շրջանում առավելապես համապատասխանում են ընտանիքում երեխաների նշանակության և ռոմանտիկ սիրո հանդեպ վերաբերմունքի դիրքորոշումները: Այնուհետև ըստ հերթականության գալիս են համատեղ կամ անջատ ընտանեկան գործունեության, ընտանիքի հայրիշխանական կամ էգալիտար

կառուցվածքի, ընտանեկան կյանքում սեռական ոլորտի կարևորության, մարդկանց հանդեպ վերաբերմունքի և ամուսնալուծության հանդեպ տրամադրվածության դիրքորոշումները: Քիչ չափով են համապատասխանում պարտքի զգացումի և բավականության այլընտրանքի, դրամի հանդեպ վերաբերմունքի, սեռական հարաբերությունների թեմայի արգելվածության դիրքորոշումները:

Գլենդելաբնակ ամուսնական զույգերի մոտ առավելապես համապատասխանում են ռոմանտիկ սիրո նկատմամբ վերաբերմունքի, համատեղ կամ անջատ գործունեության, երեխաների հանդեպ վերաբերմունքի դիրքորոշումները: Միջանկյալ դիրք են գրավում դրամի հանդեպ վերաբերմունքի, ընատնիքի հայրիշխանական կամ էգալիտար կառուցվածքի հակման, սեռական ոլորտի կարևորության և ամուսնալուծության նկատմամբ վերաբերմունքի դիրքորոշումները: Ստորին եռյակը կազմում են սեռական հարաբերությունների թեմայի նկատմամբ վերաբերմունքի, պարտքի զգացման և բավականության այլընտրանքի, մարդկանց հանդեպ վերաբերմունքի դիրքորոշումները: Ասվածը ներկայացնենք աղյուսակի տեսքով՝

Աղյուսակ 13. Փորձարարական խմբերում դիրքորոշումների կարգային դասավորվածությունը

<table>
<tr><th>Երևան</th><th>Գլենդել</th></tr>
<tr><td>1.-2. Երեխաների նշանակությունը
1.-2. Ռոմանտիկ սիրո հակվածություն</td><td>1. Ռոմանտիկ սիրո հակվածություն</td></tr>
<tr><td></td><td>2. Համատեղ կամ անջատ գործունեություն</td></tr>
<tr><td>3. Համատեղ կամ անջատ գործունեություն</td><td>3. Երեխաների նշանակությունը</td></tr>
<tr><td>4.Պատրիարքալ կամ էգալիտար ընտանիք</td><td rowspan="2">4-5.Պատրիարքալ կամ էգալիտար ընտանիք
4-5. Դրամի հանդեպ վերաբերմունք</td></tr>
<tr><td>5.Սեռական ոլորտի նշանակություն</td></tr>
<tr><td>6.Մարդկանց հանդեպ վերաբերմունք</td><td>6. Սեռական ոլորտի նշանակություն</td></tr>
<tr><td>7.Ամուսնալուծության նկատմամբ վերաբեր-մունք</td><td>7.Ամուսնալուծության նկատմամբ վերաբեր-մունք</td></tr>
<tr><td>8. Պարտքի զգացում կամ բավականություն</td><td>8. Սեռական հարաբերությունների թեմայի նկատմամբ վերաբերմունք</td></tr>
<tr><td>9.Դրամի հանդեպ վերաբերմունք</td><td>9. Պարտքի զգացում կամ բավականություն</td></tr>
<tr><td>10.Սեռական հարաբերությունների թեմայի նկատմամբ վերաբերմունք</td><td>10. Մարդկանց հանդեպ վերաբերմունք</td></tr>
</table>

Աղյուսակից երևում է, որ երևանաբնակ ամուսնական զույգերի շրջանում տարաձայնություններն առավելապես վերաբերում են պարտքի զգացման և բավականության միջև այլընտրանքի, դրամի հանդեպ վերաբերմունքի և սեռական հարաբերությունների թեմայի նկատմամբ վերաբերմունքի ոլորտներում: Գլենդելաբնակ ամուսնական զույգերում առավել անհամապատասխանող ոլորտներն են սեռական հարաբերությունների թեման, պարտքի զգացումի կամ բավականության այլընտրանքի և մարդկանց հանդեպ վերաբերմունքի ոլորտները: Ինչպես տեսնում ենք նշված երեք չափանիշներից երկուսը նույնն են երկու հետազոտվող խմբերի համար: Տարբերությունը կազմում են դրամի հանդեպ և մարդկանց հանդեպ վերաբերմունքի դիրքորոշումները:

Ներկայացված տվյալները ցույց են տալիս, թե դիրքորոշումների որ խմբերի հետ է անհրաժեշտ իրականացնել հոգեբանական աշխատանք՝ երևանաբնակ և գլենդելաբնակ ազգությամբ հայ ամուսնական զույգերի շրջանում դիրքորոշումների համապատասխանությունը մեծացնելու նպատակով:

3.4. Երևանում և Գլենդելում բնակվող հայազգի ընտանիքներում դերային բաշխվածության հետազոտություն:

Հետազոտական խմբերում դերային բաշխվածության ընդհանուր պատկերի բացահայտման նպատակով կիրառվել է Ալյոշինայի, Գոզմանի և Դուբովսկայայի կողմից մշակված «Ընտանիքում դերերի բաշխվածության որոշման հարցարանը»:

Մեթոդիկայի արդյունքում ստացված տվյալներն արտացոլված են աղյուսակներում և հիստոգրամներում՝

Աղյուսակ 14. Ընտանեկան դերերի բաշխվածությունը, Երևան (հարցվողների քանակը տոկոսներով)

Ընտանեկան դեր	Ով է հիմնականում կատարում դերը		
	Կանայք	Տղամարդիկ	Համատեղ
1. Երեխաների դաստիարակություն	26%	40.5%	33.5%
2. Ընտանիքում հուզական կլիմայի ապահովում	20.5%	44.5%	35%
3. Նյութական ապահովում	12.5%	77.5%	10%
4.Ժամանցի և զվարճանքի կազմակերպում	11.5%	67%	21.5%
5. Տանտեր-տնային տնտեսուհի	16%	77%	7%

Աղյուսակ 14. Շարունակություն

6.Սեռական զուգընկեր	8%	81%	11%
7.Ընտանեկան ենթամշակույթի կազմակերպում	26.5%	59%	14.5%

Աղյուսակ 15. Ընտանեկան դերերի բաշխվածությունը, Գլենդել, (հարցվողների քանակը տոկոսներով)

Ընտանեկան դեր	Ով է հիմնականում կատարում դերը		
	Կանայք	Տղամարդիկ	Համատեղ
1. Երեխաների դաստիարակություն	25%	38.5%	36.5%
2. Ընտանիքում հուզական կլիմայի ապահովում	26.5%	36.5%	37%
3. Նյութական ապահովում	16%	69.5%	14.5%
4.Ժամանցի և զվարճանքի կազմակերպում	17%	60.5%	22.5%
5. Տանտեր-տնային տնտեսուհի	21.5%	69%	9.5%
6.Սեռական զուգընկեր	17%	68.5%	14.5%
7.Ընտանեկան ենթամշակույթի կազմակերպում	31.5%	52.5%	16%

Աղյուսակ 16. Ընտանեկան դերերի բաշխվածությունը, Երևան, կանայք (հարցվողների քանակը տոկոսներով)

Ընտանեկան դեր	Ով է հիմնականում կատարում դերը		
	Կանայք	Տղամարդիկ	Համատեղ
1. Երեխաների դաստիարակություն	28%	33%	39%
2. Ընտանիքում հուզական կլիմայի ապահովում	17%	42%	41%
3. Նյութական ապահովում	23%	69%	8%
4.Ժամանցի և զվարճանքի կազմակերպում	14%	57%	29%
5. Տանտեր-տնային տնտեսուհի	24%	68%	8%
6.Սեռական զուգընկեր	12%	76%	12%
7.Ընտանեկան ենթամշակույթի կազմակերպում	41%	42%	17%

Աղյուսակ 17. Ընտանեկան դերերի բաշխվածությունը, Երևան, տղամարդիկ (հարցվողների քանակը տոկոսներով)

Ընտանեկան դեր	Ով է հիմնականում կատարում դերը		
	Կանայք	Տղամարդիկ	Համատեղ
1. Երեխաների դաստիարակություն	24%	48%	28%
2. Ընտանիքում հուզական կլիմայի ապահովում	24%	47%	29%
3. Նյութական ապահովում	2%	86%	12%
4.Ժամանցի և զվարճանքի կազմակերպում	9%	77%	14%
5. Տանտեր-տնային տնտեսուհի	8%	86%	6%
6.Սեռական զուգընկեր	4%	86%	10%
7.Ընտանեկան ենթամշակույթի կազմակերպում	12%	76%	12%

Աղյուսակ 18. Ընտանեկան դերերի բաշխվածությունը, Գլենդել, կանայք (հարցվողների քանակը տոկոսներով)

Ընտանեկան դեր	Ով է հիմնականում կատարում դերը		
	Կանայք	Տղամարդիկ	Համատեղ
1. Երեխաների դաստիարակություն	24%	35%	41%
2. Ընտանիքում հուզական կլիմայի ապահովում	26%	32%	42%
3. Նյութական ապահովում	26%	59%	15%
4.Ժամանցի և զվարճանքի կազմակերպում	18%	52%	30%
5. Տանտեր-տնային տնտեսուհի	29%	59%	12%
6.Սեռական զուգընկեր	22%	61%	17%
7.Ընտանեկան ենթամշակույթի կազմակերպում	26%	39%	15%

Աղյուսակ 19. Ընտանեկան դերերի բաշխվածությունը, Գլենդել, տղամարդիկ (հարցվողների քանակը տոկոսներով)

Ընտանեկան դեր	Ով է հիմնականում կատարում դերը		
	Կանայք	Տղամարդիկ	Համատեղ
1. Երեխաների դաստիարակություն	26%	42%	32%
2. Ընտանիքում հուզական կլիմայի ապահովում	27%	41%	32%
3. Նյութական ապահովում	6%	80%	14%
4.Ժամանցի և զվարճանքի կազմակերպում	16%	69%	15%
5. Տանտեր-տնային տնտեսուհի	14%	79%	7%
6.Սեռական զուգընկեր	12%	76%	12%
7.Ընտանեկան ենթամշակույթի կազմակերպում	17%	66%	17%

Հիստոգրամ 9. Ընտանեկան դերերի բաշխվածությունը, Երևան



Հիստոգրամ 10. Ընտանեկան դերերի բաշխվածությունը, Գլենդել



Հիստոգրամ 11. Ընտանեկան դերերի բաշխվածությունը, Երևան, կանայք



	1	2	3	4	5	6	7
Կին	28%	17%	23%	14%	24%	12%	41%
Տղամարդ	33%	42%	69%	57%	68%	76%	42%
Համատեղ	39%	41%	8%	29%	8%	12%	17%

Հիստոգրամ 12. Ընտանեկան դերերի բաշխվածությունը, Գլենդել, կանայք



	1	2	3	4	5	6	7
Կին	24%	26%	26%	18%	29%	22%	46%
Տղամարդ	35%	32%	59%	52%	59%	61%	39%
Համատեղ	41%	42%	15%	30%	12%	17%	15%

Հիստոգրամ 13. Ընտանեկան դերերի բաշխվածությունը, Երևան, տղամարդիկ



	1	2	3	4	5	6	7
Կին	24%	24%	2%	9%	8%	4%	12%
Տղամարդ	48%	47%	86%	77%	86%	86%	76%
Համատեղ	28%	29%	12%	14%	6%	10%	12%

Հիստոգրամ 14. Ընտանեկան դերերի բաշխվածությունը, Գլենդել, տղամարդիկ



Ինչպես տեսնում ենք, թե՛ Երևանում, և թե՛ Գլենդելում բնակվող հետազոտվողները ընտանեկան դերերի հիմնական մասի կատարման մեջ կարևորում են տղամարդուն: Դա նշանակում է, որ անկախ բնակության վայրից, հայ ընտանիքի գործառման ընթացքում ավանդաբար մեծ է տղամարդու դերը: Ընդ որում, տղամարդու կարևորությունն առավել ակնհայտորեն երևում է այնպիսի ընտանեկան դերերի դեպքում, ինչպիսիք են՝ նյութական ապահովումը, ժամանցի և զվարճանքի, ինչպես նաև ընտանեկան ենթամշակույթի կազմակերպումը, տանտիրոք և սեռական զուգընկերոջ դերերը:

Կանանց հիմնականում բաժին են հասնում երեխաներին դատիարակելու և ընտանիքում հուզական կլիմա ապահովելու դերերը: Ընդ որում, այս դերերի համատեղ կատարման երևույթը նույնպես ունի բարձր ցուցանիշներ:

Մյուս կողմից կանանց նշանակությունը բավականին բարձր է ընտանեկան ենթամշակույթի կազմակերպման առումով: Սակայն նմանատիպ կարծիք են արտահայտում առավելապես կանայք, քան տղամարդիկ: Տղամարդկան և կանանց կարծիքները զգալիորեն տարբերվում են նաև ընտանիքի նյութական ապահովման ընթացքում կնոջ նշանակության առումով: Հետազոտվող երկու խմբերի կանայք ավելի են կարևորում իրենց դերը ընտանիքի նյութական բարեկեցության ընթացքում, քան տղամարդիկ: Դա դարձյալ խոսում է հայ ընտանիքի ավանդական բաղադրիչների պահպանման մասին:

Մեթոդիկայի կիրառման արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ Երևանում և Գլենդելում բնակվող ազգությամբ հայ ամուսինների

համեմատությունը չի բացահայտում էական տարբերություններ ընտանիքի դերային կառուցվածքում՝ կախված կենսագործունեության հասարակական միջավայրից:

Համադրելով ամուսնությամբ բավարարվածության աստիճանի բացահայտման և ընտանիքի դերային բաշխվածության որոշման մեթոդիկաների արդյունքները՝ պարզենք, թե ո՞ր չափանիշով են իրարից առավելապես տարբերվում երևանաբնակ և գլենդելաբնակ հայ ընտանիքները՝ ամուսնությամբ բավարարվածությա՞ն, թե՞ ընտանիքի դերային կառուցվածքով:

Աղյուսակ 20. Ամուսնությամբ բավարարվածության և ընտանիքում դերերի բաշխվածության մեթոդիկաների հարցերին տրված պատասխանների համընկնումը հետազոտական 2 խմբերում

	ամուսնությամբ բավարարվածության ցուցանիշ		ընտանիքում դերերի բաշխվածության ցուցանիշ	
	համընկնում	տարբերակում	համընկնում	տարբերակում
Կանայք n=100	63%	37%	83%	17%
Տղամարդիկ n=100	77%	23%	85%	15%
Ընդհանուր n=200	70%	30%	84%	16%

Տվյալների համադրությունից կարելի է ենթադրել, որ Երևանաբնակ և Գլենդելաբնակ հայ ընտանիքներն առավելապես տարբերվում են ընտանիքով ամուսինների բավարարվածության չափանիշով: Դերային բաշխվածության չափանիշի տարբերությունը. փորձարարական երկու խմբերում, զգալիորեն ավելի փոքր է: Դա կարող է նշանակել, որ սոցիալական միջավայրը, դրա մշակութային, քաղաքական, տնտեսական բաղադրիչներն էապես ազդելով ընտանիքի անդամի վրա, քիչ չափով են ազդում ընտանիքի դերային կառուցվածքի, դրանում դերերի բաշխվածության վրա: Ինչն իր հերթին նշանակում է, որ հայ ընտանիքի դերային կառուցվածքը հարաբերականորեն կայուն է միջավայրի փոփոխվող պայմանների ազդեցության նկատմամբ:

3.5. Երևանում և Գլենդելում բնակվող ամուսինների դերային սպասումների հետազոտություն:

Հետազոտության համակազմի շրջանում ամուսնական դերային սպասումների բացահայտման նպատակով կիրառել ենք Վոլկովայի «Զուգընկերների դերային սպասումներ» մեթոդիկան: Այն ընձեռնում է ամուսնական փոխհարաբերություններում կարգավիճակադերային կառույցի համակողմանի հետազոտության հնարավորություն: Մեթոդիկայի միջոցով կարելի է բացահայտել ամուսինների կարծիքը ընտանեկան կյանքում մի շարք դերերի և դրանց իրականացման պայմանների նշանակության չափանիշներով: Որպես այդպիսիք դիտարկվում են՝

1. Սեռական զուգընկերոջ դեր,

2.Ամուսնու հետ նույնականացման (համանման հետաքրքրություններ, պահանջ-մունքներ, ժամանց) աստիճան,

3. Տնային-տնտեսվարական դերեր,

4. Ծնողական դերեր,

5.Սոցիալական ակտիվություն,

6. Հուզական աջակցման գործառույթի հետ կապված դերեր

7. Զուգընկերոջ արտաքին տեսք, գրավչություն:

Մեթոդիկայի կիրառման արդյունքում ստացվել են հետևյալ տվյալները՝

Հիստոգրամ 15. Ընտանեկան դերերի արժեքները Երևան



Հիստոգրամ 16. Ընտանեկան դերերի արժեքները

Գլենդել



Ինչպես երևում է հիստոգրամ վեցում՝ Երևանում բնակվող տղամարդկանց շրջանում առավել կարևորվում են ծնողական դերերը: Այնուհետև, ըստ նշանակության գալիս են ամուսնու հետ նույնականացման և հուզական աջակցության հետ կապված դերերը: Պակաս նշանակությամբ են օժտվում զուգընկերոջ արտաքին տեսքի գործոնը, տնային տնտեսվարական և սեռական զուգընկերոջ դերերը:

Երևանում բնակվող կանանց շրջանում ըստ նշանակության առաջինը հուզական աջակցության հետ կապված դերերն են: Այնուհետև, նվազման կարգով գալիս են զուգընկերոջ արտաքին տեսքի գործոնը, ծնողական դերերը, ամուսնու հետ նույնականացման չափանիշը, սոցիալական ակտիվության հետ կապված դերերը, տնային տնտեսվարական և սեռական դերերը:

Գլենդելում բնակվող տղամարդկան համար առավել մեծ նշանակությամբ են օժտվում ծնողական դերերը և հուզական աջակցության հետ կապված դերերը: Այնուհետև գալիս են ամուսնու հետ նույնականացման, սոցիալական ակտիվության, զուգընկերոջ արտաքին տեսքի, տնային-տնտեսվարական և սեռական զուգընկերոջ չափանիշները:

Նույն հետազոտական խմբի կանանց մոտ դասավորվածությունը հետևյալն է՝ հուզական աջակցության գործառույթ, ծնողական դերեր, սոցիալական ակտիվություն, ամուսնու հետ նույնականացում, տնային տնտեսվարական դերեր, զուգընկերոջ արտաքին տեսք, սեռական զուգընկերոջ դեր:

Համադրելով միևնույն հետազոտական խմբի տղամարդկանց և կանանց տվյալները, կարող են համեմատել Երևանում և Գլենդելում բնակվող

հետազոտվողների շրջանում դերերի նշանակության ընդհանուր ցուցանիշները: Ստացված պատկերը հետևյալն է՝

Հիստոգրամ 17. Դերերի արժեքների համեմատությունը երկու խմբերում



Ինչպես տեսնում ենք, երկու խմբերում էլ առավելագույն նշանակությամբ օժտվում են հուզական աջակցման հետ կապված դերերը: Երևանում բնակվող փորձարկվողների մոտ երկրորդը գալիս են ծնողական դերերը, այնուհետև ամուսնու հետ նույնականացման գործոնը, զուգընկերոջ արտաքին գրավչությունը, սոցիալական ակտիվության չափանիշը, տնային-տնտեսվարական և սեռական դերերը: Գլենդելում բնակվողների մոտ հուզական աջակցմանը հաջորդում են ծնողական դերերը, սոցիալական ակտիվության, ամուսնու հետ նույնականալու չափանիշները, որոնց հաջորդում են զուգընկերոջ արտաքին տեսքի, տնային-տնտեսվարական և սեռական դերերի ցուցանիշները:

Աղյուսակ 21. Ընտանեկան դերերի կարգային դասավորվածությունը հետազոտական խմբերում

Երևան	Գլենդել
Հուզական աջակցություն	Հուզական աջակցություն
Ծնողական դերեր	Ծնողական դերեր
Ամուսնու հետ նույնականացում	Սոցիալական ակտիվություն
Զուգընկերոջ արտաքին գրավչություն	Ամուսնու հետ նույնականացում
Սոցիալական ակտիվություն	Զուգընկերոջ արտաքին գրավչություն
Տնային-տնտեսվարական դերեր	Տնային-տնտեսվարական դերեր
Սեռական դերեր	Սեռական դերեր

Աղյուսակում պարզորոշ կերպով երևում է, որ բնակության վայրը՝ սոցիալ-մշակութային միջավայրն էականորեն չի ազդում հայ ընտանիքներում ամուսնական դերերի նշանակության վրա:

Այժմ փորձենք համեմատել խմբերը ամուսինների դերային համապատասխանության չափանիշով, որը որոշվում է ամուսինների դերային սպասումների և հավակնությունների հարաբերությամբ: Այդ չափանիշի միջին արժեքը Երևանում բնակվող տղամարդկանց շրջանում 10 է, կանանց շրջանում՝ 10,6: Գլենդելում բնակվող հետազոտվողների մոտ այդ ցուցանիշները համապատասխանաբար 8,7 և 8,1 են: Դա նշանակում է, որ Երևանաբնակ ամուսիններն, ընտանեկան դերերին համապատասխանության չափանիշով, ընդհանուր առմամբ, զիջում են Գլենդելում բնակվող ազգությամբ հայ ամուսիններին (որքան բարձր է գործակիցը, այնքան ցածր է համապատասխանության աստիճանը): Ընդ որում, եթե երկրորդ հետազոտական խմբում ընտանեկան դերերին կանանց համապատասխանության աստիճանն ավելի բարձր է, քան նույն խմբի տղամարդկանց ցուցանիշը (կանայք 8, տղամարդիկ 8,7), ապա Երևանում բնակվող փորձարկվողների դեպքում տղամարդիկ առավել մեծ չափով են համապատասխանում ընտանեկան դերերին, քան կանայք (տղամարդիկ 10, կանայք՝ 10,6):

Փաստորեն, չնայած որ փորձարկվող խմբերում ընտանեկան դերերի նշանակության առումով չեն նկատվում էական տարբերություններ, ընտանեկան դերերին համապատասխանության առումով տարբերությունները զգալի են: Ընդ որում, ընտանեկան դերերին առավելապես համապատասխանում են Գլենդելաբնակ կանայք, այնուհետև գալիս են Գլենդելաբնակ տղամարդիկ, Երևանաբնակ տղամարդիկ և վերջում՝ Երևանաբնակ կանայք:

Եթե փորձենք դերային համապատասխանության չափանիշը մասնավորեցնել՝ համաձայն առանձին դերերի, ապա կստանանք հետևյալ պատկերը՝

Աղյուսակ 22. Դերային համապատասխանության միջին ցուցանիշն ըստ ընտանեկան դերերի

Ընտանեկան դեր	Երևան		Գլենդել	
	Տղամարդիկ	Կանայք	Տղամարդիկ	Կանայք
Տնտեսվարակենցաղային	2	2.3	0.9	2.3
Ծնողական	1.4	1.2	1.0	1.8
Սոցիալական ակտիվության	2.5	1.9	1.9	1.1
Հուզական-հոգեթերապևտիկ	1.7	2.1	1.0	1.6
Արտաքին գրավչություն	1.4	2.1	2.8	1.3

Կարմիր գույնով նշանակված են ամուսինների դերային համապատասխանության նվազագույն (թվային արժեքի առավելագուն), կանաչ գույնով առավելագույն (թվային արժեքի նվազագույն չափ) արժեքները:

Աղյուսակում ներկայացված տվյալներից երևում է, որ ամուսնու կողմից դերի կատարման և զուգընկերոջ սպասումների միջև համապատասխանության չափանիշով փորձարարական խմբերն էականորեն տարբերվում են: Երևանում բնակվող տղամարդկանց դերային համապատասխանությունն առավելագույն չափով դրսևորվում է ծնողական դերի կատարման և արտաքին գրավչության չափանիշով: Երևանաբնակ կանանց մոտ դերային համապատասխանության աստիճանն իր առավելագույն նշանակությանն է հասնում ծնողական, նվազագույն նշանակությանը՝ տնտեսվարակենցաղային դերակատարումներում:

Փորձարարական երկրորդ խմբում պատկերը հետևյալն է. տղամարդիկ առավելագույնս համապատասխանում են տնտեսվարակենցաղային դերին (ծնողական և հուզական-հոգեթերապևտիկ դերերը զիչում են աննշան չափով), նվազագույնս՝ արտաքին գրավչության չափանիշին: Գլենդելում բնակվող կանանց մոտ դերային համապատասխանության չափանիշը հասնում է իր առավելագույն դրսևորմանը սոցիալական ակտիվության առումով, նվազագույնին՝ տնտեսվարակենցաղային դերակատարման դեպքում:

Ինչպես տեսնում ենք, երկու խմբերում էլ կանայք դերային համապատասխանության ցածր ցուցանիշ են ցույց տալիս տնտեսվարակենցաղային ոլորտում: Համապատասխանության առավելագույն ցուցանիշով Գլենդելում բնակվող

կանայք առավելապես համապատասխանում են սոցիալական ակտիվության, հայ կանայք՝ ծնողական դերերին: Դա ցույց է տալիս, որ Երևանում բնակվող ամուսնական զույգերի մոտ կնոջ ծնողական դերի նկատմամբ ամուսնու պահանջները համապատասխանում են կնոջ կողմից դերի իրականացմանը: Ընդ որում, նախկին մեթոդիկայից ստացված տվյալների հետ համադրության արդյունքում երևում է, որ Երևանում բնակվող կանայք, բարձր գնահատելով երեխաներ ունենալու համար ընտանիքի նշանակությունը, սկզբունքորեն համապատասխանում են երեխաների խնամքին և դաստիարակությանը վերաբերող ընտանեկան դերին: Գլենդելում բնակվող կանայք առավելապես համապատասխանում են սոցիալական ակտիվության չափանիշին, ինչը և սպասելի էր, քանի-որ նախորդ մեթոդիկայի կիրառման արդյունքում պարզվեց, որ հասարակական բարձր դիրքի հասնելու համար ընտանիքի դերը նրանց կողմից բավականին մեծ նշանակությամբ է օժտվում:

Այսպիսով, ամփոփելով մեթոդիկայի կիրառման արդյունքները, նշենք, որ երևանաբնակ և գլենդելաբնակ ազգությամբ հայ ամուսնական զույգերն իրարից էապես չեն տարբերվում ընտանեկան դերերին նրանց տված արժեքների տեսանկյունից: Սակայն դերային համապատասխանության առումով տարբերությունը զգալի է: Երևանում դերային համապատասխանության ցուցանիշը տղամարդկանց համար 10, կանանց համար 10.6 է: Գլենդելում բնակվող ամուսնական զույգերի մոտ համապատասխանաբար 8.7 և 8, ինչը ցույց է տալիս, որ ամուսինների կողմից ընտանեկան դերերի կատարման պատրաստակամությունը և զուգընկերոջ կողմից այդ դերերին առնչվող սպասումների համապատասխանությունը հետազոտական երկրորդ խմբում առավել բարձր է, ինչը կարող է ընկած լինել այդ խմբում ամուսնությամբ բավարարվածության չափանիշի բարձր լինելու հիմքում:

3.6. Հետազոտության արդյունքների ամփոփում

Այսպիսով, Երևանում և Գլենդելում բնակվող ազգույթմաբ հայ ամուսնական զույգերի հետազոտության արդյունքում ուրվագծվեց հետազոտական խմբերի և դրանցում առանձնացվող ենթախմբերի ընդհանուր հոգեբանական բնութագիրը՝ ամուսնությամբ բավարարվածության, դիրքորոշումների, ընտանեկան դերերի համապատասխանության և այլ չափանիշներով: Փորձենք, ամբողջացնելով առանձին

մեթոդիկաների կիրառման արդյունքները, ներկայացնել երևանաբնակ տղամարդկանց և կանանց, գլենդելաբնակ տղամարդկանց և կանանց հետազոտության արդյունքում ստացված ընդհանուր պատկերը:

Հետազոտության ենթարկված երևանաբնակ տղամարդկանց շրջանում գերակշռում է ընտանիքով բացարձակ բավարարվածների թիվը՝ կազմելով ընդհանուր քանակության մոտ կեսը: Անբավարարվածության ընդհանուր ցուցանիշը (բացարձակ անբավարարվածություն, անբավարարվածություն, չափավոր անբավարարվածություն) 8%-է: Երևանում բնակվող տղամարդ հետազոտվողների բավարարվածության հետ անմիջականորեն կապած է երեխաների քանակության ցուցանիշը՝ որքան շատ է ընտանիքում երեխաների թիվը, այնքան ավելի բարձր է ամուսնությամբ բավարարվածության մակարդակը: Կարևոր նշանակություն ունի նաև ամուսնական զուգընկերոջ բավարարվածության մակարդակը՝ երևանաբնակ հայ տղամարդն այնքան ավելի բավարարված է ընտանեկան կյանքով, որքան ավելի բավարարված է նրա կինը: Պատահական չէ, որ ընտանիքի հետ կապված պահանջմունքների դասակարգման ընթացքում հետազոտված երևանաբնակ հայ տղամարդիկ առաջին երեք տեղերը հատկացրել են համապատասխանաբար երեխա ունենալու ցանկությանը, ապահով և լիարժեք կյանքին, սիրած մարդու հետ ապրելու ցանկությանը: Հետազոտության ենթարկված երևանաբնակ հայ տղամարդիկ բավականին բարձր են գնահատում երեխաների դերը ընտանեկան կյանքում, հակված են առավելապես համատեղ, քան անջատ ընտանեկան գործունեությանը, ունեն ռոմանտիկ սիրո նկատմամբ ընդգծված հակում: Ամուսնությամբ առավել բավարարված են այս ենթախմբի այն ներկայացուցիչները, որոնք ավելի քիչ նշանակություն են տալիս սեռական կյանքին, ավելի բարձր նշանակությամբ են օժտում երեխաներին, ամուսնալուծության նկատմամբ նրանց տրամադրվածությունը լոյալ չէ, ընտանիքի և մասնավորապես կնոջ մասին ունեն ավանդական պատկերացումներ, աչքի չեն ընկնում դրամի նկատմամբ խնայողական վերաբերմունքով: Ամուսնությամբ բավարարվածության բարձր ցուչանիշներ ունեն երևանաբնակ այն հայ տղամարդիկ, ում զուգընկերները լոյալ են ամուսնալուծության նկատմամբ, բարձր են գնահատում երեխաներին, շրջապատի մարդկանց հանդեպ ունեն հոռետեսական վերաբերմունք,

հարաբերականորեն ինքնուրույն են, ունեն ռոմանտիկ սիրո հակում, դրամի նկատմամբ խնայող չեն: Երևանաբնակ տղամարդկանց հիմնականում հատկացվում է սեռական զուգընկերոջ, ընտանիքի նյութական ապահովման, տանտիրոջ և ընտանեկան ժամանցի ու զվարճանքի կազմակերպիչի դերերը: Նրանք ընտանիքում առաջնային նշանակություն են տալիս ծնողական դերերին, զուգընկերոջ հետ նույնականացման չափին: Սեռական զուգընկերոջ, տանտեր-տնտեսվարի դերերը նրանց կողմից արժանանում են համեմատաբար ցածր գնահատականի: Եվ պատահական չէ, որ երևանաբնակ հայ տղամարդիկ աչքի չեն ընկնում դերային անհամապատասխանության ցուցանիշով:

Երևանաբնակ հայ կանանց ենթախումբն աչքի է ընկնում ամուսնությամբ բավարարվածության չափավոր ցուցանիշներով, սակայն անբավարարվածության ընդհանուր բաժինը կազմում է հարցվողների 9%-ը: Այս ենթախմբում ամուսնությամբ բավարարվածությունը նույնպես կապված է ընտանիքում երեխաների քանակության հետ՝ որքան շատ երեխաներ, այնքան բարձր բավարարվածություն: Երևանաբնակ կանանց վրա խիստ բացասաբար է ազդում ամուսնության հերթական համարը՝ ամուսնությամբ բավարարվածության առավել բարձր ցուցանիշներ են ցույց տալիս առաջին ամուսնությամբ ապրող կանայք: Այս ենթախմբում բավարարվածության ցուցանիշը, նախորդի նմանությամբ, նույնպես անմիջականորեն կապված է զուգընկերոջ բավարարվածության աստիճանի հետ՝ երևանաբնակ հայ կինն իրեն ավելի բավարարված է զգում, եթե բավարարված է նրա ամուսինը: Ընտանիքի հետ կապված պահանջմունքների առումով հետազոտված երևանաբնակ հայ կանայք կարծես նմանակում են երևանաբնակ հայ տղամարդկանց. առաջին երեք տեղերը հատկացնելով համապատասխանաբար ապահով և լիարժեք կյանքին, երեխա ունենալու ցանկությանը, սիրած մարդու հետ ապրելու ցանկությանը: Երևանաբնակ կանայք առավելապես կարևորում են երեխաների նշանակությունն ընտանեկան կյանքում, հակված են ռոմանտիկ սիրո և համատեղ ընտանեկան գործունեության: Ամուսնությամբ բավարարվածության բարձր մակարդակին համապատասխանում են երեխաներին տրվող մեծ նշանակությունը, կնոջ դերի մասին պատկերացումների ավանդականին համապատասխանության ցածր աստիճանը, ռոմանտիկ սիրո

նկատմամբ զգալի հակվածությունը: Ամուսնությամբ առավել բավարարված են երևանաբնակ այն հայ կանայք, ովքեր սեռական հարաբերությունների թեման առավել փակ են գտնում, առավել լոյալ են ամուսնալուծության նկատմամբ, ում ամուսինները ընտանեկան կյանքում քիչ դեր են հատկացնում սեռական հարաբերություններին և լոյալ չեն ամուսնալուծության նկատմամբ, ունեն ռոմանտիկ սիրո հակում և դրամին խնայողաբար չեն վերաբերում:

Երևանաբնակ հայ կանանց հիմնականում հատկացվում են երեխաների դաստիարակության և ընտանեկան ենթամշակույթի կազմակերպման դերերը, նվազագույն չափով՝ սեռական զուգընկերոջ դերը: Դա է պատճառը, որ նրանք իրենց այնքան ավելի բավարարված են զգում, որքան քիչ չափով են նրանց ամուսինները կարևորում սեռական հարաբերությունները, իրենք սեռական զուգընկերոջ դերին տալիս են նվազագույն նշանակություն, առաջնային համարելով հուզական աջակցման գործառույթը: հետազոտության ենթարկված երևանաբնակ կանայք քիչ չափով են համապատասխանում իրենց դերին:

Գլենդելաբնակ հայ տղամարդիկ աչքի են ընկնում ամուսնությամբ բավարարվածության բարձր ցուցանիշներով: Հետազոտվող խմբում այդ ցուցանիշը կապված է հիմանակում ամուսնության տարիքի հետ, որքան մեծ տարիքում է ամուսնացել գլենդելաբնակ հայ տղամարդը, այնքան ավելի ցածր են ամուսնությամբ բավարարվածության նրա ցուցանիշները: Ընտանիքի հետ կապված պահանջմունքներից նրանք կարևորում են ապահով և լիարժեք կյանքի պահանջմունքը, սեռական պահանջմունքները, երեխա ունենալու ցանկությունը: Ընտանեկան կյանքում կարևոր տեղ են հատկացնում ռոմանտիկ սիրուն, երեխաներին և հակված են առավելապես համատեղ ընտանեկան գործունեության: Նրանք ավելի բավարարված են ամուսնությամբ, եթե մարդկանց հանդեպ նրանց վերաբերմունքը լավատեսական է, եթե առաջնորդվում են հիմնականում պարտքի այլ ոչ բավականության զգացումով, եթե արժևորում են երեխաների դերն ընտանեկան կյանքում, եթե հակված են համատեղ ընտանեկան գործունեության, ամուսնալուծության նկատմամբ քիչ լոյալ են, ունեն ռոմանտիկ սիրո հակում, սեռական հարաբերությունների թեման նրանց համար արգելված չէ: Գլենդելաբնակ տղամարդիկ

առավել բավարարված են, եթե նրանց կանայք մարդկանց հանդեպ ունեն լավատեսական վերաբերմունք, առաջնորդվում են առավելապես բավականության, այլ ոչ պարտքի զգացումով, ռոմանտիկ սիրո նկատմամբ քիչ հակված են, գերադասում են ընտանիքի էգալիտար կառուցվածքը, խնայում են դրամը: Գլենդելաբնակ տղամարդկան հիմնականում հատկացվում են նյութական ապահովման, տանտիրոջ և սեռական զուգընկերոջ դերերը: Նրանք առավելապես կարևորում են ամուսնու հետ նույնականացման, ծնողական, հուզական աջակցման և սոցիալական ակտիվության դերերը: Նրանք ունեն դերային համապատասխանության համեմատաբար բարձր ցուցանիշ:

Գլենդելաբնակ կանայք ամուսնությամբ բացարձակ բավարարվածության ցուցանիշով զգալիորեն գերազանցում են երևանաբնակ կանանց, զիջելով նրանց չափավոր բավարարվածության ցուցանիշով: Արդյունքում ընդհանուր առմամբ ամուսնությամբ չբավարարված կանանց բաժին այս ենթախմբում կազմում է ընդհանուր թվի 15%-ը: Գլենդելաբնակ կանանց ամուսնությամբ բավարարվածության ցուցանիշը ցածր է, եթե մեծ է նրա և ամուսնու միջև տարիքի տարբերությունը, եթե նա ամուսնու հետ ապրում է բավականին երկար ժամանակահատված, եթե նա ունի շատ երեխաներ: Ամուսնությամբ բավարարվածության ցուցանիշը բարձր է, եթե նրա ընտանիքում ամուսիններից և երեխաներից զատ ապրում են նաև այլ ազգականներ:

Գլենդելաբնակ կանայք առաջնային են համարում ընտանիքի հետ կապված հետևյալ պահանջմունքները՝ ապահով և լիարժեք կյանք, հասարակական բարձր կարգավիճակ, երեխա ունենալու ցանկություն: Ընտանեկան կյանքում նրանք կարևորում են ռոմանտիկ սիրո հակումը, համատեղ ընտանեկան գործելակերպը, երեխաների նշանակությունը: Գլենդելաբնակ կանանց ամուսնությամբ բավարարվածության ցուցանիշը բարձր է, եթե նրանք հակված են առավելապես համատեղ ընտանեկան գործունեությանը, եթե կարևորում են սեռական ոլորտի նշանակությունը, եթե էգալիտար ընտանիքի կողմնակիցներ են, եթե դրամի նկատմամբ ունեն խնայողական վերաբերմունք, եթե սեռական փոխհարաբերությունների թեման նրանց չի վախեցնում:

Գլենդելաբնակ կնոջ ամուսնությամբ բավարարվածության ցուցանիշը բարձր է, եթե նրանց զուգընկերը մարդկանց հանդեպ ունի լավատեսական վերաբերմունք, առաջնորդվում է պարտքի, այլ ոչ հաճելիության զգացումով, հակված է ռոմանտիկ սիրուն, չի խուսափում սեռական հարաբերությունների թեմայից, խնայող է: Գլենդելաբնակ կնոջը հատկացվում են հիմնականում ընտանեկան ենթամշակույթի կազմակերպման, ընտանիքում հուզական կլիմայի ապահովման, երեխաների դաստիարակության դերերը: Նա ավելի կարևորում է ծնողական, սոցիալական ակտիվության և հուզական աջակցման հետ կապված դերերը: Հետազոտվողների ընդհանուր քանակության մեջ ընտանեկան դերերին համապատասխանության առավելագույն ցուցանիշը պատկանում է գլենդելաբնակ կանանց:

Ստացված արդյունքները կարող են խոսել այն մասին, որ ընտանիքի որոշ բնութագրիչների վրա հասարակական ազդեցությունն իրականանում է ընտանիքի անդամների վրա ազդեցություն գործելու միջոցով: Ընդ որում, վերաբերելով ընտանիքի գործառման արդյունավետությանը, դրա սոցիալ-հոգեբանական մթնոլորտին, այդ փոփոխությունները նվազագույն չափով են արտացոլվում ընտանիքի կառուցվածքային բնութագրիչների վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության արդյունքները թույլ են տալիս ասել, որ մեր կողմից առաջադրված վարկածը, այն է՝ արտաքին (հասարակական) գործոնների ազդեցությունը հայ ընտանիքի վրա իրականանում է միջնորդավորված ձևով, ընտանիքի անդամների՝ նրանց պահանջմունքային ոլորտի և կարգավիճակադերային վարքի վրա ազդեցություն գործելու միջոցով, հաստատվեց: Հետևաբար՝ հայ ընտանիքի պահպանման համար առաջնային է ընտանիքի կառուցվածքային տարրերի և նրա կողմից իրականացվող հասարակական, ընտանեկան և անհատական գործառույթների համապատասխանությունը:

Ամփոփելով աշխատանքի տեսական և փորձարարական բաժինները՝ ներկայացնենք դրանցից բխող հիմնական եզրակացությունները:

1. *Ապացուցվեց, որ տարբեր հասարակական-մշակութային միջավայրերում բնակվող հայ ընտանիքները պահպանում են իրենց կարգավիճակադերային կառույցը՝ փոփոխություններ կրելով ընտանիքի անդամների պահանջմունքների և դիրքորոշումների մակարդակում:*
2. *Ցույց տրվեց, որ, ապրելով տարբեր մշակութային միջավայրերում, հայ անհատը ձեռք է բերում նոր դիրքորոշումներ և անձնային որակներ, որոնք այնուհետև արտացոլվում են նրա ներընտանեկան հարաբերություններում:*
3. *Բացահայտվեց, որ ամուսնական զույգում ամուսնությամբ բավարարվածության չափանիշը կարող է տարբերվել՝ կախված ընտանիքի գործառման սոցիալ-մշակութային միջավայրից:*
4. *Ցույց տրվեց, որ հետազոտված հայ ընտանիքներում ամուսինների ամուսնությամբ բավարարվածության ցուցանիշների միջև առկա է դրական կորելյացիոն կապ:*
5. *Ապացուցվեց, որ ընտանիքի վրա հասարակական գործոնների ազդեցությունն ունի միջնորդավորված բնույթ:*

Գործնական առաջարկներ

Հենվելով հետազոտության արդյունքների վրա՝ առաջարկում ենք.

- կազմակերպել հոգեմարզողական աշխատանքներ հայ ընտանիքներում դերային համապատասխանության բարձրացման նպատակով,
- հայ ընտանիքների հետ տարվող հոգեբանական աշխատանքի ընթացքում հատուկ ուշադրություն դարձնել ամուսինների արժեքային համակարգի և դիրքորոշումների համապատասխանության վրա,
- ավագ դպրոցներում կազմակերպել ընտանեկան դաստիարակության դասընթացներ՝ շեշտադրելով անհատական պահանջմունքների բավարարման ընթացքում ընտանիքի դերի ու նշանակության խնդիրը,
- սոցիալ-մշակութային այլ միջավայրում (հայաստանի սահմաններից դուրս) ապրող հայ ամուսնական զույգերի հետ տարվող հոգեբանական աշխատանքի ընթացքում հաշվի առնել միջավայրի առանձնահատկությունները և դրանց ազդեցությամբ անձնային մակարդակում տեղի ունեցած տեղաշարժերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրյան Հ.Ա., Ասատրյան Ն.Վ., Պողոսյան Ա.Վ., Ամուսնաընտանեկան կյանքի նկատմամբ դիրքորոշումները հայ երիտասարդության շրջանում, Հոգեբանությունը և կյանքը, № 3, Երևան, «Զանգակ-97», 2001, էջ 56-64:
2. Ամիրյան Ս., Խոհեր ընտանիքի միջանձնային փոխհարաբերությունների մասին, Հոգեբանությունը և կյանքը, № 1-2, Երևան, «Զանգակ-97», 2007, էջ 103-106:
3. Գևորգյան Ս.Ա., Հայ ավանդական ընտանիքի էթնոհոգեբանական և էթնոմանկավարժական ակունքները, Հոգեբանությունը և կյանքը, № 2, Երևան, «Զանգակ-97», 2001, էջ 12-20:
4. Խաչատրյան Ն. Ընտանիքը և ազգային ավանդականը, Հոգեբանությունը և կյանքը, № 4, Երևան, «Զանգակ-97», 2007, էջ 52-55:
5. Հարությունյան Ն., Ընտանիքի դերային համակարգը սոցիալական հոգեբանության համատեքստում, Հոգեբանությունը և կյանքը, № 1-2, Երևան, «Զանգակ-97», 2008, էջ 66-70:
6. Հարությունյան Ս.Ֆ., Ներընտանեկան բախում. Սիրուց մինչև ապահարզան: Հոգեբանությունը և կյանքը, № 2, Երևան, «Զանգակ-97», 2002, էջ 33-36:
7. Հովսեփյան Ն., Միջանձնային հարաբերությունները ընտանիքում, հաղորդակցման խանգարումները և կոնֆլիկտները, Հոգեբանությունը և կյանքը, № 1-2, Երևան, «Զանգակ-97», 2007, էջ 107-112:
8. Պողոսյան Ա., Ամուսինների հոգեբանական անհամատեղելիության դրսևորումները ըստ բնավորության շեշտված տիպերի, Հոգեբանությունը և կյանքը, № 1-2, Երևան, «Զանգակ-97», 2008, էջ 53-56:
9. Սեդրակյան Ս.Ա., Դերերի տեսությունը և ընտանիքի հոգեբանության խնդիրների դերային մոտեցման էությունը, Հոգեբանությունը և կյանքը, № 1-2, Երևան, «Զանգակ-97», 2010, էջ 9-22:
10. Սեդրակյան Ս.Ա., Ընտանեկան մի բարդույթ, Փոքրիկ քայլերի հեղափոխությունը. Երևան, 1998:

11. Սեդրակյան Ս.Ա., Ընտանիքի հոգեբանություն (Մեթոդաբանական վերլուծություն). Երևան, «Ուրարտու» համալսարան, 2010, 456 էջ:
12. Սեդրակյան Ս.Ա., Ընտանիքի սոցիալ-հոգեբանական ուսումնասիրության ժամանակակից հիմնախնդիրները, Հոգեբանությունը և կյանքը, № 3-4, Երևան, «Զանգակ-97», 2008, էջ 11-17:
13. Սեդրակյան Ս.Ա., Հարությունյան Ն.Ա. Ներընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառներն ու հաղթահարման ուղիները, Հոգեբանությունը և կյանքը, № 3, Երևան, «Զանգակ-97», 2001, էջ 47-55:
14. Адлер А. Воспитание детей. Взаимодействие полов. Ростов н/Д: изд-во «Феникс», 1998. – 448с.
15. Алешина Ю.Е., Борисов И.Ю. Полоролевая дифференцация как комплексный показатель межличностных отношений супругов. // Психология семьи. Хрестоматия. Под ред. Д.Я.Райгородского. Самара: Издательский Дом «Бахрах», 2002. - ст. 308-320.
16. Алешина Ю.Е., Волович А.С. Проблемы усвоения ролей мужчины и женщины. // Психология семьи. Хрестоматия. Под ред. Д.Я.Райгородского. Самара: Издательский Дом «Бахрах», 2002. - ст. 294-307.
17. Алешина Ю.Е. Индивидуальное и семейное психологическое консультирование. - М.: Независимая фирма “Класс”, 1999. – 208с.
18. Андреева Т.В. Психология современной семьи. Монография. СПб.: Речь, 2005. - 436с.
19. Андреева Т. В. Семейная психология: Учеб. пособие. СПб.: Речь, 2004. - 244 с.
20. Анцупов А.Я. Шипилов А.И. Словарь конфликтолога. СПб.: Питер, 2006. - 528с.,
21. Асеев В.Г. Мотивация поведения и формирование личности. М.: Мысль, 1976. - 158с.
22. Бандура А. Теория социального научения. СПб.: Евразия, 2000. – 320с.
23. Бунге М. Причинность. Место принципа причинности в современной науке. - М.: Издательство иностранной литератруы, 1962. – 511с.

24. Варга А.Я., Драбкина Т.С. Системная семейная психотерапия. Краткий лекционный курс. СПб.: Речь, 2001. - 144 с.
25. Вебер Г. Кризисы любви: Системная психотерапия Берта Хеллингера. М.: Изд-во Института Психотерапии, 2002. - 304 с.
26. Винникотт Д.В. Семья и развитие личности. Мать и дитя. Екатеринбург: Изд-во «ЛИТУР», 2004. - 400 с.
27. Витакер К. Полуночные размышления семейного терапевта. М.: Независимая фирма “Класс”, 1998. – 208с.
28. Волков А.Г. Семья – объект демографии. М.: Мысль, 1986. – 271с.
29. Голод С.И. Семья и брак: историко-социологический анализ. Санкт-петербург: ТОО ТК “Петрополос”, 1998. – 272с.
30. Голод С.И. Моногамная семья: Кризис или эволюция? // Психология семьи. Хрестоматия. Под ред. Д.Я.Райгородского. Самара: Издательский Дом «Бахрах», 2002. - ст. 245-258.
31. Гришина А.П. Основы психологии семьи и семейного консультирования. Учебное пособие. Томск: Томский государственный педагогический университет, 2002. – 81с.
32. Грюнвальд Б. Б., Макаби Г. В. Консультирование семьи. М.: Когито-Центр, 2008. - 415 с.
33. Доменаж Ж.-Л., Шанмин Х. Семейные отношения в Китае. М.: Наука, Главная редакция восточной литературы, 1991. - 215с.
34. Дружинин В. Н. Психология семьи: 3-е изд. СПб.: Питер, 2006. - 176 с.
35. Дружинин В. Теоретическая типология моделей семьи // Психология семьи. Хрестоматия. Под ред. Д.Я. Райгородского. Самара: Издательский Дом «Бахрах», 2002. - ст. 65-81.
36. Зацепин В.И. Брак и семья. // Психология семьи. Хрестоматия. Под ред. Д.Я.Райгородского. Самара: Издательский Дом «Бахрах», 2002. - ст. 3-32.

37. Здравомыслова О.М. Психологические и социально-культурные функции семьи. // Психология семьи. Хрестоматия. Под ред. Д.Я.Райгородского. Самара: Издательский Дом «Бахрах», 2002. - ст. 82-91.
38. Зидер Р. «Золотой век» и кризис семьи в европе с 1960г. до наших дней. // Психология семьи. Хрестоматия. Под ред. Д.Я. Райгородского. Самара: Издательский Дом «Бахрах», 2002. - ст. 169-210.
39. Иконникова Г.Ю. Супружеская ревность в современных семьях. // Современные проблемы психологии семьи: феномены, методы, концепции. Вып. 2. СПб.: Изд-во АНО «ИПП», 2008. – с.50-53.
40. Ильин Е.П. Мотивация и мотивы. СПб.: Питер, 2006. – 512с.
41. Карабанова О.А. Психология семейных отношений и основы семейного консультирования. Учебное пособие. М.: Гардарики, 2005. – 320с.
42. Кемплер У. Основы семейной гештальттерапии. СПб.: «Издательство Пирожкова», 2001. – 224с.
43. Кисляков Н.А. Очерки по истории семьи и брака у народов Средней Азии и Казахстана. Ленинград: Наука, 1969. - 239с.
44. Коваль Н. А. Психология семьи и семейной дезадаптивности: Учеб. пособие. - Федеральное агентство по образованию, Тамб. гос. ун-т им. Г. Р. Державина. Тамбов, Изд-во ТГУ им. Г. Р. Державина, 2007. - 351с.
45. Кондрашова Е.А. Распределение ролей в семье и семейные конфликты. // Труды СГА. Выпуск 6 (июнь). Юриспруденция. Образование. Психология. Социология. Политология. Экономика. Философия. М.: Издательство СГУ, 2001. - ст. 68-80.
46. Кратохвил С. Основные типы семейных проблем и их решение. // Психология семьи. Хрестоматия. Под ред. Д.Я. Райгородского. Самара: Издательский Дом «Бахрах», 2002. - ст. 639-720.
47. Кратохвил С. Психотерапия семейно-сексуальных дисгармоний. М.: Медицина, 1991. - 336с.
48. Левин К. Супружеские конфликты. // Психология конфликта. Хрестоматия / Сост. и общая редакция Н.В.Гришиной. СПб.: Питер, 2008. - ст. 112-126.

49. Левкович В.П., Зуськова О.Э. Социальнопсихологический подход к изучению супружеских конфликтов. // Психология семьи. Хрестоматия. Под ред. Д.Я.Райгородского. Самара: Издательский Дом «Бахрах», 2002. - ст. 528-546
50. Лидерс А.Г. Психологическое обследование семьи: учеб. пособие-практикум для студ. фак. психологии вуз. М.: Издательский центр "Академия", 2007. – 432с.
51. Лэйнг Р.Д. "Я" и Другие. М.: Независимая фирма "Класс", 2002. - 192с.
52. Маданес К. Стратегическая семейная терапия. М.: Независимая фирма "Класс", 1999. – 272с.
53. Мак-Фарленд Д. Поведение животных: Психобиология, этология и эволюция. М.: Мир, 1988. - 520с.
54. Маслоу А. Мотивация и личность. СПб.: Питер, 2008. – 352с.
55. Москаленко В.Д. Когда любви слишком много: Профилактика любовной зависимости. М.: Психотерапия, 2006. – 224с.
56. Николаева А.Н. Формы партнерских взаимоотношений. // Современные проблемы психологии семьи. Сб. статей. СПб.: Изд-во АНО «ИПП», 2007. – ст. 75-80.
57. Обозов Н.Н. Семейно-брачные и родственные отношения. // Психология семьи. Хрестоматия. Под ред. Д.Я.Райгородского. Самара: Издательский Дом «Бахрах», 2007. - ст. 361-383.
58. Петровский А.В., Ярошевский М.Г. История и теория психологии. Ростов-на Дону: Издательство "Феникс", 1996. – 416с.
59. Попеное Д. Упадок американской семьи (1960-1990): обзор и оценка. // Психология семьи. Хрестоматия. Под ред. Д.Я.Райгородского. Самара: Издательский Дом «Бахрах», 2002. - ст. 153-166.
60. Синицына И.Е. Человек и семья в Африке. (По материалам обычного права). М.: Наука. Главная редакция восточной литературы, 1989. – 311с.,
61. Старшенбаум Г.В. Сексуальная и семейная психотерапия. М.: Изд-во Высшей школы психологии, 2003. – 300с.

62. Сысенко В.А. Брачно-семейная адаптация. Ее характер и содержание. // Психология семьи. Хрестоматия. Под ред. Д.Я. Райгородского. Самара: Издательский Дом «Бахрах», 2002. - ст. 547-575.
63. Сысенко В.А. Супружеские конфликты. М.: Мысль, 1989. - 173с.
64. Сысенко В.А. Чувство собственного достоинства и устойчивость брака. // Психология семьи. Хрестоматия. Под ред. Райгородский Д.Я. Самара: Издательский Дом «Бахрах-М», 2002. – ст. 576-638.
65. Уорден М. Основы семейной психотерапии. СПб.: ПРАЙМ-ЕВРОЗНАК, 2005. - 256 с.
66. Фрейд З. Избранное. Ростов-на-Дону: «Феникс», 1998. – 352с.
67. Фрейд З. Введение в психоанализ: Лекции. М.: Наука. 1989. – 456с.
68. Фрейд З. Очерки по психологии сексуальности. Минск: ООО «Попурри». 1999. – 480с.
69. Фромм Э. Искусство любить. СПб.: Издательский Дом «Азбука-классика», 2008. – 224с.
70. Тийт Э. Факторы риска, вызывающие расторжение брака. // Психология семьи. Хрестоматия. Под ред. Д.Я. Райгородского. Самара: Издательский Дом «Бахрах», 2002. - ст. 721-737.
71. Торохтий В.С. Методика диагностики психологического здоровья семьи. М.: МГПУ, 2006. - 100 с.
72. Троицкий С. Христианская философия брака // Соловьев В.С. Смысл любви. Троицкий С. Христианская философия брака. Майендорф И. Брак в православии. М.: Путь, 1995. - ст. 53-214.
73. Харчев А.Г. Брак и семья в СССР. М. 1979. - 365, [2]с.
74. Хорни К. Невротическя личность нашего времени. М.: Академический Проект, 2009. - 208с.
75. Черников А.В. Системная семейная терапия: Интегративная модель диагностики. М.: Независимая фирма “Класс”, 2001. - 208 с.

76. Шейнов В.П. Управление конфликтов: Теория и практика. Минск: Харвест, 2010. – 912с.
77. Шнейдер. Семейная психология. Учебное пособие для вузов. М.: Академический Проект; Екатеринбург: Деловая книга, 2006. – 768с.
78. Эйдемиллер Э.Г., Юстицкий В.В. Семейная психотерапия. Ленинград.: Медицина, 1989. – 192с.
79. Энгельс Ф. Происхождение семьи, частной собственности и государства. В связи с исследованиями Льюиса Г. Моргана. // Маркс К., Энгельс Ф. Сочинения. Издание второе. Т. 21. М.: Государственное издательство политической литературы, 1961. - ст. 23-178.
80. Carr A. Family therapy: concepts, process and practice. 2-nd ed. John Wiley & Sons, Ltd, Chichester · New York · Weinheim · Brisbane · Singapore · Toronto. 2006. - 622 p.
81. Families Across Cultures. A 30-nation Psychological Study. Edited by James Georgas, John W. Berry, Fons J. R. van de Vijver, Çiğdem Kağitçibaşi, and Ype H. Poortinga. Cambridge University Press, 2006. - 552p.
82. Families and Mental Disorders: From Burden to Empowerment. Edited by Norman Sartorius, Julian Leff, Juan José López-Ibor, Mario Maj and Ahmed Okasha. John Wiley & Sons, Ltd., The Atrium, Southern Gate, Chichester, West Sussex, England, 2005. - 299p.
83. Family Relationships. An Evolutionary Perspective. Ed.by Catherine A. Solomon and Todd K. Shackelford. Oxford University Press, 2008. - 366 p.
84. Handbook of EMDR and family therapy processes. Ed. by Francine Shapiro, Florence W. Kaslow, Louise Maxfield. John Wiley & Sons, 2007. - 470 p.
85. Linton R. The Study of Man. An Introduction. New York, Appleton-Century-Crofts, INC., 1936. - 503 p.
86. Matta W.J. Relationship sabotage: unconscious factors that destroy couples, marriages, and family. Westport, Connecticut, London, 2006. - 162p.
87. Minuchin S. Families and Family Therapy. Harvard University Press, 1974. - 268p.
88. Motivation and Action. Edited by Jutta Heckhausen, Heinz Heckhausen. Cambridge University Press, 2008. - 508p.

89. Morgan L.H. Ancient Society, or Researches in the Lines of Human Progress from Savagery through Barbarism to Civilization. New York, Henry Holt and Company, 1907. - 560p.
90. Murdock, G. P. Social structure. New York: Free Press. 1949. - 387p.
91. Peseschkian N. Positive Family Therapy. The Family as Therapist. Springer-Verlag, Berlin, Hidelberg, New York, Tokyo, 1986. - 340p.
92. Pinsof W.M., Lebow J.L. A Scientific Paradigm for Family Psychology. // Family Psychology: The Art of the Science. Edited by William M. Pinsof and Jay L. Lebow. Oxford University Press, 2005. - pp. 3-19.
93. Retrospect and prospect in the psychological study of families. Ed. by James P. McHale, Wendy S. Grolnick. Lawrence Erlbaum Associates, Inc. 2002. - 377p.
94. Ritvo E.C., Glick I.D. Concise quide to marriage and family therapy. Washington, London, American Psychiatric Publishing Inc., 2002. - 249p.
95. Sprot W.J.H. Social Psychology. London, Methuen and Co.LTD. 1952. - 268p.
96. Starcke N. The Primitive Family in its Origin and Development. London. Kegan Paul, Trench & Co., 1889. - 315p.